

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԼԵԶՎԱԲԱՆՆԵՐ.
ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**Երիտասարդ լեզվաբաններ.
գիտական հոդվածների ժողովածու**



ԱՍՈՐԻԿ

«Ասորիկ» հրատարակչություն

Երևան 2016

INSTITUTE OF LINGUISTICS OF NAS

Young Linguists
Collection of scientific papers

ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА НАН РА

Молодые лингвисты
Сборник научных статей

ՀՏԴ 81

ԳՄԴ 81

Ե 859

Տպագրվում է
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գիտական
խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

բ.գ.թ. դոց. Վ. Կատվալյան (նախագահ), բ.գ.դ. Ռ. Թոխմախյան,
բ.գ.դ., պրոֆ. Վ. Համբարձումյան, բ.գ.դ., պրոֆ. Գ. Խաչատրյան, բ.գ.դ.,
պրոֆ. Լ. Հովսեփյան, բ.գ.թ. Ն. Սարգսյան, բ.գ.թ. Ա. Գալստյան, բ.գ.թ. Տ.
Սիրունյան, բ.գ.թ. Ժ. Միքայելյան:

Երիտասարդ լեզվաբաններ.գիտական հոդվածների
Ե 859 ժողովածու.- Եր.: Ասողիկ, 2016.- 120 էջ:

ՀՏԴ 81

ԳՄԴ 81

ISBN 978-9939-50-336-3

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Բաքայան Դիցանուշ , Հայերենագիտությունը Ֆրանսիայում քսաներորդ դարավերջին և քսանմեկերորդ դարասկզբին	6
Թոռչյան Լիլիթ , Դիտարկումներ անգլերենի նախդիր + գոյական կապակցության՝ ժամանակակից հայերենի համապատասխանությունների վերաբերյալ	15
Իորդանյան Վաղինակ , Ավետարանների լեզուն և ոճը	28
Խուդանյան Հարություն , Աղձնիքի տեղանունների առաջին հիշատակությունները Վանի թագավորության սեպագիր աղբյուրներում	37
Կարապետյան Սիրարիի , Գ + Գ կաղապարով կրկնավոր վերլուծական բաղադրությունները հայերենում և անգլերենում	47
Հակոբյան Ֆրիդա , Համաբարբառների համակարգչային մշակման խնդիրները	57
Համբարյան Լուսինե , Տարածանշությունը և կապերի դերը	64
Հարությունյան Քնար , Դարձվածքները Ե-ԺԱ դարերի հիշատակարաններում	72
Հովհաննիսյան Մերի , Նորաբանությունները Գուրգեն Խանջյանի ստեղծագործություններում	80
Մուրադյան Լուսինե , ԶԼՄ-ի լեզուն անադարտ պահելու առաջարկ	91
Սարգսյան Լուիզա , Անվանակազմ բայերը գրաբարում	95
Սարգսյան Մերի , Գիտության այլ բնագավառներից փոխառված տերմինները Գ. Զահուկյանի աշխատություններում	103
Սիմոնյան Սոնա , Ժամանակակից հայերենի և անգլերենի վերլուծական բայերի բնորոշումը և կառուցվածքային կաղապարները	110

**ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՔՄԱՆԵՐՈՐԴ
ԴԱՐԱՎԵՐՋԻՆ և ՔՄԱՆՄԵԿԵՐՈՐԴ ԴԱՐԱՄԿՁԲԻՆ**

Հայերենագիտությունը հայ լեզվաբանության բնագավառներից է և - հայ ազգագրության, գրականագիտության, պատմագրության և այլնի հետ միասին դասվում է հայագիտության գիտակարգերի շարքը: Հայերենագիտության ուսումնասիրության առարկան հայոց լեզուն է, որի գիտաճյուղերն են հայոց լեզվի պատմությունը, հայ քերականագիտությունը, հայերենագիտության պատմությունը, հայ բարբառագիտությունը, հայոց լեզվի մեթոդիկան, հայ բառարանագրությունը:

Հայերենագիտությունը սկիզբ է առել դեռևս հին ժամանակներից՝ V դ. վերջերից և VI դ. սկզբներից՝ Դիոնիսիոս Թրակացու «Արուեստ քերականութեան» գրքի թարգմանությամբ: Մակայն հայոց լեզվի ուսումնասիրությունն ավելի հին ակունքներ ունի, և առաջին ուսումնասիրողներից է եղել հանճարեղ Մեսրոպ Մաշտոցը: Հայերենի ուսումնասիրությունն այնուհետև շարունակվել է հմուտ մեկնիչ-քերականների, լատինաբանների, ուշ միջնադարի լեզվաբանների ու քերականների շնորհիվ: Հայերենագիտությունն առաջընթաց է ապրել հատկապես XIX և XX դարերում:

XIX դ. եվրոպացի հայագետներ Հայնրիխ Պետերմանի և Ֆ. Վինդիշմանի ջանքերով և ուսումնասիրությունների շնորհիվ հիմնադրվեց հայերենի համեմատական քերականությունը: Անվանի լեզվաբան Հայնրիխ Հյուբշմանն իր 1875թ. «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շարքում» հոդվածում համեմատական քննության ենթարկեց հայերենը մյուս հնդեվրոպական լեզուների հետ և ապացուցեց, որ հայերենն իր հնչյունական և քերականական կառուցվածքով և բառապաշարով անկախ դիրք է զբաղեցնում հնդեվրոպական լեզվաընտանիքում: Հ. Հյուբշմանի շնորհիվ հայերենն ընդունվեց որպես առանձին հնդեվրոպական լեզու, և մի շարք եվրոպացի լեզվաբաններ սկսեցին ավելի մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրել հայերենը՝ նպաստելով Եվրոպայում հայերենագիտության զարգացմանը:

Հայերենագիտությունը բուռն վերելք է ապրում XX դ.: Էդ. Աղայանը հայերենագիտության զարգացման գործում առանձնացնում է հետևյալ աշխատությունները. տեսական լեզվաբանության բնագավառում

1950-ական թթ. կարևոր ներդրումներից են Է. Ադայանի «Լեզվաբանության ներածությունը», Գ. Ջահուկյանի «Լեզվաբանության պատմությունը», բարբառագիտության բնագավառում կարևորագույն հաջողություն է ներկայացնում Գ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածությունը», հայերենի ընդհանուր ուսումնասիրության տեսակետից այս շրջանի նշանակալից երևույթն է Հ. Աճառյանի «Լիակատար քերականությունը»:¹ Հայերենի տարբեր գիտաճյուղերի ուսումնասիրությամբ զբաղվել և զբաղվում են ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը, հանրապետության մի շարք բուհերի հայոց լեզվի ամբիոնները և աշխարհի տարբեր երկրների հայագիտական կենտրոնները:

Հայերենագիտության պահպանման և զարգացման գործում իրենց նշանակալից դերն ունեն արտերկրում գործող հայագիտական կենտրոնները: Դրանք հայոց լեզվին և գրականությանը, պատմությանը, հայկական մշակույթին և ընդհանրապես Հայաստանին ու հայությանը վերաբերող թեմաներով գիտահետազոտական և կրթական գործունեություն իրականացնող կառույցներ են, որոնք հայության կյանքում կատարում են կարևոր գործառնություններ, այդ թվում՝ հայագիտության տարածում, հայագիտության պահպանում և զարգացում, հայ և այլ ժողովուրդների միջև կապերի հաստատում և ամրապնդում, հակահայկական քարոզչության դեմ պայքար, հետազոտությունների և ուսումնասիրությունների իրականացում և այլն:

Մեր ուսումնասիրության առարկան Ֆրանսիայի հայագիտական կենտրոններն են, որոնք «Արտերկրի հայագիտական կենտրոնները, ներուժի գնահատում» աշխատության համաձայն բաժանվում են հետևյալ խմբերի²:

1. Համալսարանական ամբիոններ և բաժիններ՝

Փարիզի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի Հայագիտության բաժին (INALCO),

Պրովանսի համալսարանի Հայոց լեզվի և գրականության ամբիոն:

Հայերենի ամբիոնը Փարիզում բացվել է 1798թ. Շահան Ջրպետյանի նախաձեռնությամբ, և նա էլ դարձել է ամբիոնի առաջին դասախոսը: 1801թ. ամբիոնի գործունեությունը ժամանակավորապես ընդհատվել է և վերսկսվել 1810թ. քսան ունկնդրից բաղկացած խմբի համար: Ամբիոնի

¹ Հայերենագիտությունը 60 տարում, ԵՊՀ հրատ., 1981, էջ 8-9:

² Արտերկրի հայագիտական կենտրոնները. ներուժի գնահատում, Երևան, Նորավանք ԳԿՀ, 2014, էջ 69-84

գործունեության վերաբերյալ հետաքրքրական է ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Մակլերի «Հայերենի ամբիոնը Արևելյան կենդանի լեզուների հատուկ դպրոցում» աշխատությունը³: Շահան Ջրպետյանից հետո հայերենի ամբիոնը գլխավորել են Լը Վայան դը Ֆլորիվալը, ով սկիզբ դրեց հայոց լեզվի դասավանդմանը հենց ֆրանսիացիների կողմից, այնուհետև Էդուարդ Դյուլոբրիեն, Օգյուստ Կարիերը, Անտուան Մեյեն, Ֆրեդերիկ Մակլերը, Ժորժ Դյումեզիլը, Ֆրեդերիկ Ֆեյդին, Ժան Պիեռ Մահեն և Անահիտ Տոնապետյանը: Ամբիոնում դասավանդում են արևելահայերեն, արևմտահայերեն, դասական հայերեն, լեզվաբանություն, գրականություն և այլն:

2. Հայագիտական ինստիտուտներ՝

Չոպանյան ինստիտուտը⁴,

Հայկական ուսումնասիրությունների Սայաբալիան ինստիտուտը,

Հայկական հետազոտությունների Միջերկրածովյան ինստիտուտը:

Չոպանյան ինստիտուտը Եվրոպայում միակ հայկական վերլուծական կենտրոնն է և գիտավերլուծական գործունեություն է իրականացնում ոչ միայն հայագիտության ոլորտում: Հայագիտությունը ինստիտուտի հետազոտական ուղղություններից մեկն է: Հիմնադրվել է Փարիզում 2004թ.-ին Արշակ Չոպանյանի մահվան հիսունամյա տարելիցի կապակցությամբ: Ինստիտուտը քաղաքական և կուսակցական հակումներ չունի, օժանդակություն չի ստանում որևէ պետությունից և ձևավորում է իր բուջեն նվիրատվությունների, ինչպես նաև աշխատակից անդամների շնորհիվ:

3. Հայագիտական կենտրոններ՝

Հայկական հիշողության ազգային կենտրոն⁵:

Հայկական հիշողության ազգային կենտրոնը հիմնադրվել է 2013թ. Ֆրանսիայի Դեսին քաղաքում: Կենտրոնի հիմնական գործառույթներն են կրթական, հետազոտական, մշակութային ծրագրերի իրականացում, ինչպես նաև հայության վերաբերյալ նյութերի արխիվացման աշխատանքների կատարում: Փաստավավերագրական կենտրոնում պահվում են 110 000 փաստաթուղթ և 12 000 գիրք, հայկական պատմությանն առնչվող նյութեր, ինչպես նաև Ֆրանսիայում և եվրոպական այլ երկրներում ապրող հայ մշակույթի գործիչների ստեղծագործություններ:

³ **F. Macler**, *La Chaire d'arménien à l'Ecole spéciale des langues orientales vivantes, Paris, 1912*

⁴ www.tchobanian.org

⁵ www.cnma.fr

4. Միություններ՝

Հայկական հիշողության հետազոտման և արխիվացման ասոցիացիա⁶,

Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցություն⁷ :

Հայկական հիշողության հետազոտման և արխիվացման ասոցիացիան իրականացրել է Ֆրանսիայի հայկական համայնքի կողմից հրատարակվող թերթերի, հայագիտական պարբերականների և աշխատությունների թվայնացումը:

Ֆրանսիայի հայագիտական կառույցներն ունեն մի շարք խնդիրներ, որոնք արգելքներ են ստեղծում նրանց կանոնավոր գործունեության համար: Խնդիրներից են ֆինանսական հատկացումներ չունենալը, մասնագետների պակասը և այլն: Նման խնդիրների առաջ կանգնած են հատկապես հետազոտական և կրթական նեղ ուղղվածություն ունեցող կենտրոնները, որոնք ֆինանսավորման լայն շրջանակներ չունեն: Օրինակ՝ 2013թ. սկզբին աշխատանքները դադարեցրել է Ֆրանսիայի Սփյուռքի հետազոտությունների և փաստագրության կենտրոնը:

Պետք է նշել, որ հայագիտական որոշ հաստատություններ համացանցում ներկայացված չեն, եթե անգամ ունեն կայքեր, ապա դրանք չեն թարմացվում, հասանելի չեն հասարակության տարբեր շրջանակների համար, չկա կայքերում գետեղված տեղեկատվության հայերեն տարբերակը: Որոշ կայքերում կենտրոնների շարունակական գործունեության վերաբերյալ տվյալները չեն թարմացվում: Հայագիտական հաստատությունները պետք է ավելի արդյունավետ գործունեություն ծավալեն հայերենի պահպանման և տարածման համար, քանի որ գրական լեզուն գնալով անկում է ապրում, նոր սերունդները լեզուն սովորում են ընտանեկան միջավայրում կամ առհասարակ հետաքրքրված չեն հայոց լեզվի ուսուցմամբ:

Վերոնշյալ խնդիրների լուծման համար պետք է ավելի ամրապնդել Հայաստան-սփյուռք կապը, կադրեր պատրաստել կենտրոնների գործունեության պահպանման նպատակով, իրականացնել փոխանակման ծրագրեր և այլն:

Ամփոփելով նշենք, որ Եվրոպայում հայագիտական կենտրոնների, ամբիոնների առումով Ֆրանսիան առաջատար դիրքերում է:

⁶ www.webaram.com

⁷ www.etudes-armeniennes.org

Հայագիտական կենտրոնների ստեղծման, հայագիտության պահպանման և զարգացման գործում մեծ է ֆրանսիացի հայագետների դերը: XX դարավերջի և XXI դարասկզբի ֆրանսիացի հայագետներից կառանձնացնենք Ֆրեդերիկ Ֆեյդիին և Ժան Պիեռ Մահեիին: Ֆրեդերիկ Ֆեյդիի հայագիտական գործունեությանն անդրադարձել է Աելիտա Դոլուխանյանն իր մի շարք աշխատություններում՝ «Եվրոպացի հայագետները Մաշտոցի և հայոց այբուբենի մասին»⁸, «Ֆրեդերիկ Ֆեյդիին հայագետ»⁹ և այլն:

Բանասիրական գիտությունների դոկտոր **Ֆրեդերիկ Ֆեյդին** ֆրանսիացի մեծ հայագետներից է, ով թողել է հարուստ գիտական ժառանգություն: Նա երկար տարիներ զբաղվել է հայագիտությամբ, եղել է Սորբոնի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչը, Փարիզի Արևելյան լեզուների բարձրագույն ուսումնարանի պրոֆեսոր: Մի շարք ուսումնասիրություններ է նվիրել ժամանակակից արևմտահայերենին, դրանցից հատկանշական է հատկապես «Հայոց լեզվի ձեռնարկ (արդի արևմտահայերեն)»¹⁰ դասագիրքը: Խորապես ուսումնասիրել է մաշտոցյան այբուբենը, որի վերաբերյալ ամենահանգամանավրից արդյունքը «Նըկատումներ սուրբ Մեսրոպի այբուբենի և հետազոտություն հայերենի հնչյունաբանության»¹¹ աշխատությունն է:

Ֆեյդին խորապես ուսումնասիրել է նաև հայ ժողովրդի բանահյուսությունը և գրականությունը, կատարել գրական թարգմանություններ, վերլուծության ենթարկել Հակոբ Պարոնյանի, Երվանդ Օտյանի, Դանիել Վարուժանի, Արշակ Չոպանյանի ստեղծագործությունները: Գրել է հայագիտական բազմաթիվ հոդվածներ, թղթակցել «Բազմավեպ», «Հանդես ամսօրեայ», «Զուարթնոց», ինչպես նաև եվրոպական լեզուներով հրատարակվող գիտական պարբերականների:

Ֆրեդերիկ Ֆեյդին սովորել է ոչ միայն արևմտահայերեն, դասական հայերեն, այլև ուսումնասիրել հայերենի բարբառները:

⁸ **Աելիտա Դոլուխանյան**, *Եվրոպացի հայագետները Մաշտոցի և հայոց այբուբենի մասին*, Էջմիածին, 2005:

⁹ **Աելիտա Դոլուխանյան**, *Եվրոպացի հայագետներ V, Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ*, Երևանի պետական համալսարանի հրատ., 2008:

¹⁰ **Frederic Feydit**, *Manuel de langue armenienne : (Arménien occidental moderne)*, Paris, 1969.

¹¹ **Frederic Feydit**, *Considerations sur l'alphabet de Saint Mesrop et recherches sur la phonétique de l'arménien*, Wien, 1982.

Աելիտա Դոլուխանյանն իր «Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ» աշխատությունում մի ամբողջ գլուխ նվիրել է Ֆեյդիի հայոց լեզվի դասագրքի վերլուծությանը՝ «դասագիրքը հրատարակվել է երկու անգամ, գրված է արևմտահայերենի ուսուցման համար: Այդ գրքում եղած բոլոր դասերը մեթոդապես անցել են գործնական կիրառման ստուգման ընթացքով, այդ իսկ պատճառով նրանք երաշխավորում են հայոց լեզվի կատարյալ ուսուցումը: Դասագրքի «Նախաբանը» բնորոշում է հայոց լեզվի հնդեվրոպական լեզվաընտանիքում ունեցած առանձնահատկությունները: Այստեղ սեղմ անդրադարձ կա հինգերորդ դարի հայոց լեզվին: Ֆեյդին շեշտում է, որ հայերենը հին մշակված լեզուներից է: Հինգերորդ դարում՝ ազգային այբուբենի հայտնագործումից հետո, աստվածաբանությունը և դավանաբանական վեճերը թարգմանիչների գրչի տակ զարգացրել են այդ լեզուն: Հետո հայերենի վրա իրենց կնիքն են դրել խաչակրաց արշավանքները: Հայոց լեզվի վրա ազդել է նաև գաղթօջախների առկայությունը Եվրոպայում և այլ երկրներում: Հայերենը նոր զարգացում է ստացել 18-րդ դարում, երբ Վենետիկում Մխիթարյանները հիմնեցին իրենց միաբանությունը»¹²:

«Այս տասնհինգ դարերի ընթացքում հայոց լեզվի կազմավորման արդյունքն այն է, որ արդի հայերենը քաղաքակիրթ մի լեզու է, կատարելապես բացառիկ որակի»¹³:

Ա. Դոլուխանյանը նշում է, որ Ֆ. Ֆեյդիի հայոց լեզվի դասագրքի ամենամեծ արժանիքն այն է, որ հեղինակը լեզվական ուսուցման գործընթացն իրականացնում է հայ ժողովրդի պատմության փաստերին ծանոթացնելուն զուգընթաց, և այդ միահյուսվածության արդյունքը կարևորվում է նրանով, որ օտարազգին յուրացնելով հայերենը, լիովին պատկերացում է կազմում հայ ժողովրդի պատմական անցյալի մասին, իմանում է հայ ժողովրդի ծագումը, զարգացումը, 20-րդ դարում նրա ունեցած դերը¹⁴:

Ֆեյդին անդրադառնում է նաև Վռամշապուհ թագավորին, Մահակ Պարթևին և Մեսրոպ Մաշտոցին: Ըստ նրա՝ նրանք գրերի գյուտին մոտեցել են որպես քաղաքական ու պետական բացառիկ իրադարձության, որի հետևանքով Հայաստանում արագ ծավալվեց լուսավորական հզոր շարժում, ողջ երկրով մեկ բացվեցին դպրոցներ, թարգմանվեց

¹² *Աելիտա Դոլուխանյան, նշվ. աշխ., էջ 75-76:*

¹³ *Frederic Feydit, Manuel de langue armenienne : (Arménien occidental moderne), Paris, 1969.*

¹⁴ *Աելիտա Դոլուխանյան, նշվ. աշխ., էջ 76:*

Աստվածաշունչը. «Աստվածաշունչն այնքան սքանչելապես թարգմանեցին, որ հայերեն թարգմանությունը կը սեպվի «թագուհի ամեն թարգմանութեանց»:

Ֆ. Ֆեյդին գրքի եզրակացության մեջ ասում է, որ Մեսրոպ Մաշտոցն իր առջև խնդիր էր դրել ստեղծել մի այնպիսի այբուբեն, որ յուրաքանչյուրին հնարավորություն տա նվագագույն ջանքերով կարդալ ու գրել հայերեն. «Եվ այս խնդիրը նա լուծել է հոյակապորեն, ըստ որում 1500 տարի հետո ուղղագրական դժվարությունները մնացել են և չնայած լեզվի էվոլյուցիային՝ ուղղագրական դժվարությունները մնացել են նվագագույն»¹⁵:

Ֆեյդինն աշակերտել է ներկայիս անվանի հայագետ **Ժան Պիեռ Մահեն**: Նա ուսումնասիրել է ոչ միայն գրաբար և արևմտահայերեն, այլև 1975-1978 թթ-ին Երևանի պետական համալսարանում ժամանակակից ֆրանսերեն դասավանդելու տարիներին իր ընտանիքով սովորել է նաև արևելահայերեն: Նրա գրչին է պատկանում «Ժամանակակից հայոց լեզվի (արևելահայ)» ֆրանսերեն դասագիրքը, ֆրանսերեն է թարգմանել Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանն ու որոշ հատվածներ, Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»: Թարգմանության հիմքում Վիկտոր Լանգլուայի կատարած աշխատանքն է՝ վերախմբագրված և կատարելագործված Մահեի կողմից: Գրել է նաև «Հայաստան. պատմություն և ներկա» գիրք-ուղեցույցը: Հայերեն է հրատարակվել Գրիգոր Նարեկացուն նվիրված Մահեի աշխատությունը: Իսկ Մահեի կինը՝ Անին, ամուսնու գիտական օգնականն է և «Մատենան ողբերգութեան» պոեմի ծանոթագրությունների համահեղինակը: Խոսելով Նարեկացու թողած հոգևոր ժառանգության մասին՝ հայագետը շեշտում է. «Եթե, ասենք, բոլորովին չես հետաքրքրվում կրոնով և առաջին անգամ ես Նարեկացի կարդում, միանգամից խաղաղությամբ և մխիթարությամբ ես լցվում: Ես կարծում եմ, թե Նարեկացին ընդհանրապես մարդկային ցեղի ամենամեծ մխիթարիչներից մեկն է»¹⁶: Մատենադարանի տնօրեն Հրաչյա Թամրազյանի խոսքով՝ Ժան-Պիեռ Մահեն վերապրել ու ներապրել է Նարեկացու աշխատությունը. «Մա ոչ թե օտարի հայացք է դեպի մեր մշակույթ, այլ այդ մշակույթը կրողի ներքին հայացք»¹⁷:

¹⁵ Տե՛ս 13.

¹⁶ <http://www.azatutyun.am/a/27262951.html>, Երևան, 22 սեպտեմբեր, 2015թ.:

¹⁷ <http://www.aravot.am/2013/04/19/233161/> *Քրիստինա Միքզոյան, Ժան-Պիեռ Մահեն պարզևստրվեց «Սուրբ Մ. Մաշտոց» և «Գրիգոր Նարեկացու» հուշամեդալներով, 2013թ.:*

«Գրական թերթի» 2014թ. համարում Ավիկ Իսահակյանն իր «Ժան-Պիեռ Մահե՝ հայ ժողովրդի ֆրանսիացի բարեկամը» հոդվածում¹⁸ պատմում է, որ Ժան-Պիեռ Մահեն, Ֆրեդերիկ Ֆեյդին, Գուրգեն Հովսեփյանը և ինքը 1975 թ. հյուր էին Թալինի շրջանի Իրինդ գյուղի իր բարեկամների տանը: Գիշերը հարսանիք էր. գյուղապետ Արշո Քոթանյանի որդին ամուսնանում էր: Երբ խնջույքը սկսվում է, վեր է կենում Ֆրեդերիկ Ֆեյդին ու անբասիր հայերենով սրտառույզ խոսք ասում: Քիչ անց Ժան-Պիեռն է նույնպես ընտիր հայերենով ոգեշունչ ճառ ասում, վերջում էլ խոսքն ավարտում «Մասնա ծեփից» մի ընդարձակ հատվածի արտասանությամբ: Հավաքվածները և՛ հիացած են, և՛ զարմացած: Քոթանյան Արշոն ուղղվում է դեպի Իսահակյանը և ասում.

- Բա ասում էիր ֆրանսիացի են, չէ, տղա, հայ են:
- Հա, հայ են, իսկական հայ, այն էլ՝ սասունցի, – հաստատում է Իսահակյանը:

Ժան-Պիեռ Մահեն իր գործունեության համար ընտրվել է Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ: 2015 թ. ՀՀ Նախագահի հրամանագրով պարգևատրվել է Բարեկամության շքանշանով, Մատենադարանի տնօրենության կողմից ստացել է «Սուրբ Մ. Մաշտոց», Մշակույթի նախարարության կողմից՝ «Գրիգոր Նարեկացու» հուշամեդալ:

Այսպիսով, ֆրանսիացի հայագետները, ֆրանսահայությունը, Ֆրանսիայում գործող հայագիտական կենտրոնները հայերենագիտության պահպանման և զարգացման այն հիմնական խթաններն են, որոնց շնորհիվ այսօր Ֆրանսիան հայերենագիտության կարևոր ու նշանակալից կենտրոններից մեկն է աշխարհում:

Ditsanush Babayan- Armenology in France at the end of the twentieth and at the beginning of the twenty-first century- Armenology is one of the fields of Armenian linguistics, which flourished mostly in the 20th century. In our article we touch upon Armenology, its origin and path of development. Then we introduce armenological institutions in France, their role in Armenians' life, their problems and challenges and as well as ways of solving the mentioned problems. We also present the most prominent French armenologists, among them Frederic Feydit, Jean-Pierre Mahe, refer to their works and their essential role in the development and maintainance of Armenology and Armenian studies.

¹⁸<http://www.grakanter.am> Գրական թերթ, **Ավիկ Իսահակյան, Ժան-Պիեռ Մահե՝ հայ - ժողովրդի ֆրանսիացի բարեկամը**, 13.02.2014թ.:

Дицануш Бабаян- Арменоведение является одной из сфер деятельности в армянской лингвистике, которая процветала в основном в 20 веке. В нашей статье мы коснемся арменоведения, его происхождения и пути развития. Затем мы представим арменоведческие институты во Франции, их роль в жизни армян, их проблемы и трудности, а также пути решения указанных проблем. Мы также представим самых известных французских арменоведов, среди них Фредерик Фейди, Жан-Пьер Маэ, поговорим об их работах и их важной роли в развитии и хранении арменоведения.

**ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՆԳԼԵՐԵՆԻ ՆԱԽԴԻՐ+ԳՈՅԱԿԱՆ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ՝ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

Հոլովի կարգը գոյականի կարևորագույն քերականական կարգերից մեկն է: Հոլովը գոյականի փոփոխությունն է, ձևափոխությունը, որով դրսևորվում են առարկաների, իրերի, երևույթների այլնայլ հարաբերություններ: Հոլովը հոլովական իմաստի և ձևի միասնությամբ հանդես եկող քերականական կարգ է:

Հոլովի կարգը տիպաբանական և ձևակազմական տարբեր հատկանիշներով առկա է հնդեվրոպական լեզվաընտանիքի մի շարք լեզուներում, որոնցում այս կամ այն տեսքով պահպանված հոլովական համակարգերը, իրենց ընդհանրություններով հանդերձ, հաճախ դրսևորում են նաև զգալի տարբերություններ:

Հայ լեզվաբանությանմեջ ժամանակակից հայերենի հոլովական համակարգի և հոլովների վերաբերյալ միանշանակ մոտեցում չի ցուցաբերվել առ այսօր: Որոշ լեզվաբաններ ընդունում են 5 հոլով, որոշ լեզվաբաններ՝ 6, մյուսներն էլ ընդունում են 7 հոլով:

Հայերենի հոլովներն են՝ **ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական, ներգոյական:**

Հին անգլերենն ուներ 5 հոլով՝ նոմինատիվ /ուղղական/, ակուզատիվ /հայցական/, գենետիվ /սեռական/, դատիվ /տրական/ և ինստրումենտալ /գործիական/:

Ժամանակակից անգլերենում գոյականն ունի միայն երկու հոլով՝ ընդհանուր (thecommoncase) և ստացական (thepossessive կամ thegenitivecase):

Ընդհանուր հոլովով դրված գոյականը չունի հատուկ վերջավորություն: Ստացական հոլովի վերջավորությունն է -s: Ընդհանուր հոլովն ունի անորոշ իմաստ:

Անգլերենի ստացական հոլովը ցույց է տալիս պատկանելություն՝ George's belongings – Ջորջի իրերը:

Պատկանելություն կարող է ցույց տալ նաև գոյականի ընդհանուր հոլովով կապակցությունը՝ Ann's predictions – PredictionsofAnn. Պատկանելությունն արտահայտվում է նաև of նախդրի միջոցով, եթե գոյականը, որին պատկանում է որևէ բան, անշունչ գոյական է: Այնուամենայնիվ, սա ավելի վաղ շրջանի քերականագետների դիրքորոշում է, և մեր օրերում այդպիսի սահմանափակումներ չկան /of-ը պատկանելություն կարող է ցույց տալ ինչպես անշունչ, այնպես էլ շնչավոր գոյականների հետ/:

Գոյականի եզակի ստացականը կազմվում է բառին -s ավելացնելով: Հոգնակի ստացականը կազմվում է ապաթարցի հավելումով՝ students' grades.

Եթե գոյականի հոգնակին կազմվում է բառարմատի ձայնավորի փոփոխությամբ, ստացական հոլովը կազմվում է ճիշտ այնպես, ինչպես եզակի թվի դեպքում՝ men's glows, women's dresses:

Բաղադրյալ գոյականների ստացական հոլովը կազմվելու համար -s վերջավորությունն ավելացվում է վերջին բաղադրիչին՝ my mother-in-law's visit:

Այս հոդվածի նպատակն է պարզել, թե անգլերենի նախդիր + գոյական կապակցությունները հայերենի որ հոլովներին են համապատասխանում:

Համեմատենք Ռիչարդ Բախի «Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճայը», Թեոդոր Դրայզերի «Ջեննի Գերհարդ» և Ջեկ Լոնդոնի «Մարտին Բդեն» ստեղծագործություններից քաղված որոշ օրինակների հայերեն թարգմանությունները՝ ուշադրության առնելով վերոնշյալ երևույթները: Այս աշխատանքի մեջ դիտարկվել են «Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճայը» ստեղծագործության երկու թարգմանիչների՝ Վահե Հովհաննիսյանի և Նաիրա Հարությունյանի կողմից արված թարգմանությունները:

across -ունի **այն կողմ, հանդիպակաց, զուգահեռաբար, վրայով** իմաստները:

Տեսնենք, թե ինչպես է թարգմանվել այն հայերեն հետևյալ հատվածներում.

1) It was morning, and the new sun sparkled gold **across the ripples of a gentle sea.**

Առավոտ էր, ծագող արևը ոսկե շողում էր **հանդարտ ծովի մեղմ ծփանքում** /Ն. Հարությունյան/:

Լույսը բացվեց, և ջահել արեգակի ոսկե ցուլքերը պար բռնեցին խաղաղած **ծովի հազիվ նշմարելի կռիակների վրա** /Վ. Հովհաննիսյան/:

2) He learned to sleep in the air, setting a course at night **across the offshore wind...**

Նա սովորեց օդում քնել. գիշերով ուղղություն վերցնել **ափից փչող քամուն հակառակ...** /Ն. Հարությունյան/:

Նա սովորեց օդում քնել, սովորեց, երբ քամին **փչում էր ափից...** /Վ. Հովհաննիսյան/:

3) As it had shined **across him** all his life, so understanding lighted that moment for Jonathan Seagull.

Իր ողջ կյանքում դա ցուցացել էր նրա խորքերում, եւ հիմա Ջոնաթան Ճայի միտքը հանկարծ լուսավորվեց /Ն. Հարությունյան/:

Ջոնաթանն իր ամբողջ կյանքն ապրել էր այդ մտքով, և Ջոնաթանը հասկացավ, հասկացավ ակնթարթորեն/Վ. Հովհաննիսյան/:

4) He gave one last long look **across the sky.**

Նա մի վերջին երկար հայացք **գցեց երկնքին...** /Ն. Հարությունյան/:

Նա մի վերջին հայացք **ձգեց երկնքին...** /Վ. Հովհաննիսյան/(Ռ. Բախ, «Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճայը»):

5) Then as though not caring to linger any longer amid such plebeian company, he hastened **across** the network of tracks and was lost to view.

Ապա որպես թե չցանկանալով կանգ առնել այդքան անարժան խմբի մեջ՝ նա **շտապ անցավ ռելսերը և չքացավ** (Թեոդոր Դրայզեր, «Ջեննի Գերհարդ»):

6) They bristled with unknown perils, and he gazed at them, fascinated, till their dazzle became a **background across** which moved a succession of forecastle pictures.

Այդ իրերը նրան սպառնում էին անհիմանալի վտանգներ, և նա, կարծես հմայված, երկար նայում էր նրանց, մինչև որ աչքերը շլացան նրանց փայլից, և **այդ պսպղուն ֆոնի վրա** նրան երևաց նավաստիների կամրջակի ծանոթ պատկերը (Ջեկ Լոնդոն, «Մարտին Իդեն»):

Across բառը, որը հիմնականում ունի **այն կողմ, հանդիպակաց, զուգահեռաբար, վրայով** իմաստները, վերնում բերված նախադասություններում թարգմանված է տարբեր բառերով և բառակապակցություններով:

Ընդհանուր առմամբ, «Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճայը» ստեղծագործության թարգմանված երկուտարբերակների առնչությամբ կարելի է նշել, որ Վահե Հովհաննիսյանի կողմից արված թարգմանությունը, ըստ իս, ավելի հոգեհարազատ է բնագրին, գեղարվեստական և քերականական

տեսանկյունից ավելի ճիշտ է ձևակերպված, և անգլերեն նախդիրների իմաստներն այստեղ ավելի ճշգրիտ են արտահայտված:

Այսպես, առաջին օրինակում **/across the ripples of a gentle sea/** across բառը հայերենում համապատասխանաբար թարգմանվել է **ծփանք** բառի ներգոյական հոլովով **/ծփանքում/**, իսկ թարգմանության երկրորդ տարբերակում այն թարգմանվել է **կռհակ** բառի հոգնակի սեռականով և **վրա** շաղկապով: Երկրորդ օրինակի առաջին տարբերակում՝ **հակառակ** բառով, երկրորդ տարբերակում՝ **ափ** բառի բացառական հոլովով, երրորդ օրինակի առաջին տարբերակում՝ կրկին ներգոյական հոլովով, իսկ երկրորդ տարբերակում բոլորովին այլ կերպ է թարգմանված, որն ավելի ճշգրիտ է արտահայտում անգլերեն նախադասության իմաստը: Չորրորդ օրինակի առաջին տարբերակում այն թարգմանվում է գոյականի տրական հոլովով և ճիշտ այդպես է թարգմանված նաև երկրորդ տարբերակում: Հինգերորդ օրինակում across նախդրի իմաստն արտահայտված է **ռելսեր** բառի հայցական հոլովով, իսկ վեցերորդ օրինակում այն ունի **վրա** իմաստը:

through- հայերենում թարգմանվում է **միջով, միջոցով, շնորհիվ, ընթացքում:**

1) Flock flashed **through** the air.

Երամի ճիչը ակնթարթորեն ծակեց **օդը/Ն.** Հարությունյան/:

Այդ լուրը ակնթարթորեն հասավ նախաճաշի սպասող **երամին.../Վ.** Հովհաննիսյան/:

2) Ten times he tried, and all ten times, as he passed **through** seventy miles per hour, he burst into a churning mass of feathers, out of control, crashing down into the water.

Նա տասն անգամ փորձեց և ամեն անգամ, երբ անցնում էր ժամում յոթանասուն մղոն **արագությունից**, վերածվում էր չկառավարվող փետրազնդի և գահավիժում ջրի մեջ /Ն. Հարությունյան/:

Տասը փորձ արեց և տասն անգամ էլ, հենց **արագությունը գերազանցում էր ժամում յոթանասուն մղոնը**, նա վերածվում էր փշաքաղված փետուրների չկառավարվող գնդի ու քարի պես ընկնում /Վ. Հովհաննիսյան/ (Ռ. Բախ, «Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճայր»):

3) After a time another form came shadowlike **through** the side gate.

Քիչ անց մի ինչ-որ ստվեր ներս ընկավ կողքի **դռնակից** (Թեոդոր Դրայզեր, «Ջեննի Գերհարդ»):

4) The moon and the lights twinkling on the water, throwing out little beacon-trails **through the night**, and all so peaceful and still ...

Լուսինն ու աստղերը առկայծում էին ջրում՝ փոքրիկ, փարոսող ցուլքեր սփռելով **գիշերվա մեջ**. ամեն ինչ այնպես լուռ էր ու խաղաղ /Ն. Հարությունյան/:

Լուսինը և փարոսի կրակների պես **գիշերային ծովի մեջ** խայտացող լույսի արտացոլանքը, չորս բոլորն այնպես խաղաղ ու հանգիստ է /Վ. Հովհաննիսյան/ (Ռ. Բախ, «Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճայր»):

5) He was in the books himself, adventuring **through** the printed pages of bound volumes.

Ասես նա ինքը գրքի մեջ էր ընկել և դեգերում էր կազմած **հատորի էջերում** (Ջեկ Լոնդոն, «Մարտին Իդեն»):

6) Do you have any idea how many lives we must have gone through before...

Պատկերացնո՞ւմ ես, թե քանի կյանք է հարկավոր եղել /Ն.Հարությունյան/:

Պատկերացնո՞ւմ ես քանի-քանի կյանք պիտի ապրել մինչև ... /Վ. Հովհաննիսյան/ (Ռ. Բախ, «Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճայր»):

Through բառը հայերենում թարգմանվում է **միջով, միջոցով, շնորհիվ, ընթացքում**, սակայն **Flock flashed through the air** (Երամի ճիչը ակնթարթորեն ծակեց օդը) նախադասության մեջ այն թարգմանվել է **օդ բառի հայցական հոլովով**: Թարգմանության երկրորդ տարբերակում (Այդ լուրը ակնթարթորեն հասավ նախաճաշի սպասող **երամին**...) նախադասության իմաստը բոլորովին այլ կերպ է տրված և ավելի է համապատասխանում բնագրի մտքին: Երկրորդ օրինակի առաջին տարբերակում և երրորդ օրինակում կարելի է տեսնել, որ այն թարգմանվում է նաև գոյականի բացառական հոլովով, թարգմանության երկրորդ տարբերակում այն տրված է գոյականի հայցական հոլովով, իսկ չորրորդ և հինգերորդ օրինակներում՝ ներգոյական հոլովով: Վեցերորդ օրինակում to go through դարձվածային արտահայտության մեջ **through** նախդիրը կորցրել է իր առաջնային իմաստը՝ թարգմանվելով փոխաբերական իմաստով:

beyond- վեր, ուշ, հեռվում, այն կողմը, անդին

1) Jonathan took all his courage in hand and walked to the Elder Gull, who, it was said, was soon to be **moving beyond this world**.

Իր ողջ քաջությունը հավաքելով՝ Ջոնաթանը դիմեց Ավագ Ճային, որը, ասում էին, շուտով հեռանալու էր այս **աշխարհից**։ /Ն. Հարությունյան/

Ջոնաթանը սիրտ արեց մոտենալ Տոհմավագին՝ ճայ, որն, ինչպես ասում էին, պատրաստվում էր շուտով հրաժեշտ տալ այս **աշխարհին**։ /Վ. Հովհաննիսյան/

2) **Beyond a few hundred feet**, I can lift this old body no higher.”

...այն ինչ էս չեմ կարող այս ծեր մարմինը **մի քանի հարյուր ոտնաչափից** ավելի բարձրացնել /Ն. Հարությունյան/:

Ես իմ լիկաժ մարմինը կարող եմ ևս մի **քանի հարյուր ֆուտ բարձրացնել**, բայց ավելի վեր՝ ոչ .../Վ. Հովհաննիսյան/:

3) **Beyond** boat and shore...

ձկնորսանավից ու ափից **անդին**.../Ն. Հարությունյան/:

ձկնորսանավից և ափից **հեռու**... /Վ. Հովհաննիսյան/:

4) ...to see the meaning of flight **beyond** a way of travel to get a breadcrumb from a rowboat.

...որ կարող էր թիանավից հացի փշրանքները փախցնելուց **անդին** տեսնել թռիչքի իմաստը /Ն. Հարությունյան/:

Նա... ձգտում է հասկանալ, թե ինչ կարող են անել թևերը՝ բացի մինչև առագաստանավ թռչելուց ու հացի փշրանք **փախցնելուց**։/Վ. Հովհաննիսյան/ (Ռ. Բախ, «Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճայը»)։

5) There was something there — artistically, temperamentally, which was far and **beyond** the keenest suspicion of the herd.

Նրա մեջ ինչ-որ պոետական բան կա, հոգեկան մի նրբություն, որն **անմատչելի է** ամբոխի ըմբռնողությանը (Թեոդոր Դրայդեր, «Ջեննի Գերհարդ»)։

6) It was a transfigured face, with great shining eyes that gazed **beyond the veil** of sound...

Դա բոլորովին այլ դեմք էր՝ մեծ, փայլատակող աչքերով, որոնք կարծես թափանցում էին **հնչյունների քողը** (Ջեյ Լոնդոն, «Մարտին Բդեն»)։

Beyond (վեր, ուշ, հեռվում, այն կողմը, անդին) նախդիրն իր սկզբնական իմաստով հանդես է գալիս երրորդ և չորրորդ օրինակներում, որտեղ, իդեալկարելի է նկատել, որ Վ. Հովհաննիսյանը խուսափել է **անդին** բառի կիրառությունից՝ սահմանափակվելով գոյականի բացառական հոլովի կիրառությամբ։ Վերջինս ավելի նախընտրելի տարբերակ է, քանի որ **անդին** բառի գործածությունն այժմ այնքան էլ տարածված չէ, հնաբույր է։ Առաջին և երկրորդ օրինակների առաջին տարբերակներում նախդիր

իմաստն արտահայտվում է գոյականի բացառական հոլովով, առաջին օրինակի երկրորդ տարբերակում՝ գոյականի տրական հոլովով, իսկ երկրորդ օրինակի երկրորդ տարբերակում՝ գոյականի ուղղական հոլովով: Չորրորդ օրինակում *far* մակբայի հետ հանդես գալով մեկ կապակցության մեջ՝ */far and beyond/*, այն ձեռք է բերել բոլորովին այլ իմաստ՝ **անմատչելի**: Վերջին՝ վեցերորդ օրինակում, այն թարգմանված չէ առանձին բառով և իմաստային առումով նույնացված է **քող** բառի հայցական հոլովի հետ:

in

1) As he came from Earth now, above the clouds and **in close formation** with the two brilliant gulls, he saw that his own body was growing as bright as theirs.

Այժմ, թողնելով Երկիրը և երկու ադամանդափայլ **ճայերի հետ թևթևի** բարձրանալով ամպերից էլ վեր, նա տեսավ, որ իր սեփական մարմինը ևս փոխվում դառնում է նրանց պես /Ն. Հարությունյան/:

Այժմ, երբ հրաժեշտ տվեց երկրին և երկու շողշողուն **ճայերի հետ թևթևի** բարձրացավ ամպերից վեր, նկատեց, որ իր մարմինն էլ աստիճանաբար դառնում է նրանց պես ճաճանչավետ /Վ. Հովհաննիսյան/:

2)**in** fierce concentration...

....ուժեղ կենտրոնացումից.../Ն. Հարությունյան/:

Նա ... ամբողջովին դարձավ մեն միակ ցանկություն ... /Վ. Հովհաննիսյան/ (Ռ. Բախ, <<Ջոնաթան Լիվինգթոն անունով ճայը>>):

3) Gerhardt was **in** despair...

Գերհարդը **հուսահատ վիճակում էր** (Թեոդոր Դրայզեր, «Ջեննի Գերհարդ»):

The wide rooms seemed too narrow for his rolling gait, and to himself he was **in terror** lest his broad shoulders should collide with the doorways...

Թվում էր, թե հսկայական սենյակները նեղ էին նրա լայնարձակ քայլվածքի համար, նա շարունակ **վախենում էր** ուսով դիպչել դռանը (Ջեկ Լոնդոն, «Մարտին Իդեն»): /ավելի ճիշտ թարգմանության դեպքում պետք է լիներ վախենում էր ուսով դռանը դիպչելուց/

In նախդիրը, որը հայերենում հիմնականում համապատասխանում է գոյականի ներգոյական հոլովի վերջավորությանը, վերոհիշյալ օրինակներում, տարբեր բառերի հետ կապակցվելով, արտահայտում է տարբեր իմաստներ: Առաջին օրինակում այն հանդես է գալիս որպես ձևի պարագա, երկրորդ օրինակի առաջին տարբերակում՝ որպես պատճառի պարագա,

երկրորդ տարբերակում թարգմանված է բոլորովին այլ իմաստով: Ըստ իս, **in fierce concentration** կապակցության համար լավագույն թարգմանությունը կարող էր լինել **ուժեղի գերլարումից** տարբերակը, և այս պարագայում Ն. Հովհաննիսյանի տարբերակն ավելի մոտ է բնագրին: Երրորդ օրինակում **in** նախդիրը ցույց է տալիս հոգեկան վիճակ,իսկ վերջին օրինակում թարգմանված է **վախենում** անկատար դերբայի միջոցով:

At

1) **At two hundred fifty miles per hour** he felt that he was nearing his level-flight maximum speed.

Ժամում երկու հարյուր հիսուն մղոն թռչելիս նա զգաց, որ մոտեցել է հորիզոնական թռիչքի՝ իր համար առավելագույն արագությանը /Ն. Հարությունյան/:

Ժամում երկու հարյուր հիսուն մղոն արագության ժամանակ նա զգաց, որ մոտենում է հորիզոնական թռիչքի առավելագույն սահմանին /Վ. Հովհաննիսյան/:

2) The wing-strain now **at a hundred and forty miles per hour** wasn't nearly as hard as it had been before at seventy,

Այժմ, երբ նա թռչում էր **Ժամում հարյուր քառասուն մղոն արագությամբ**, թևերի լարումն ավելի փոքր էր, քան նախկին յոթանասունի դեպքում /Ն. Հարությունյան/:

Հիմա՝ **Ժամում հարյուր քառասուն մղոն արագության ժամանակ**, ուժերի նման լարում չէր զգում, ինչպես առաջ, յոթանասունի դեպքում... /Վ. Հովհաննիսյան/:

3) but when he flew **at altitudes** less than half his wingspan

Նա չգիտեր՝ ինչու է այդպես, բայց ծովի մակերևույթից իր թևաբացվածքի կեսից ավելի փոքր **բարձրությամբ** թռչելիս ինքը կարողանում էր ավելի քիչ լարվելով առավել երկար մնալ օդում /Ն. Հարությունյան/:

Նա, օրինակ, չէր հասկանում, թե ինչու իր թևերի կես բացվածքից պակաս **բարձրություն** թռչելիս կարողանում էր գրեթե առանց ջանքի օդում երկար մնալ /Վ. Հովհաննիսյան/ (Ռ. Բախ, «Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճայր»):

4) Any person could enter, and, by applying **at a rear entrance** to the lobby, gain the attention of the clerk.

Ով ուզենար, կարող էր ներս մտնել **դռնով**, հասնել նախասրահը, և այստեղ կլերկը կնկատեր նրան (Թեոդոր Դրայդեր, «Ջեննի Գերհարդ»):

5) He walked **at the other's heels** with a swing to his shoulders....

... նա հետևեց իր ուղեկցին (Ջեկ Լոնդոն, «Մարտին Իդեն»):

At տեղի նախդիրը, տարբեր կապակցություններում հանդես գալով, կարող է ունենալ նաև այլ իմաստներ. առաջին օրինակի առաջին տարբերակում վերջինիս իմաստն արտահայտված է համակատար դերբայի միջոցով, իսկ երկրորդ տարբերակների դեպքում՝ գոյականի և **Ժամանակ** կապի միջոցով, երկրորդ և երրորդ օրինակների առաջին տարբերակներում և չորրորդ օրինակում՝ գոյականի գործիական հոլովով, երրորդ օրինակի երկրորդ տարբերակում՝ գոյականի ուղղական հոլովով, իսկ վերջին օրինակում *to walk at the other's heels* իդիոմատիկ արտահայտության մեջ հայերենով թարգմանվելիս արտահայտված է գոյականի տրական հոլովով:

above

1) ...he flew through heavy seafogs and climbed **above them** into dazzling clear skies ...

...նա թռչում էր թանձր ծովամշուշի միջով ու **նրանից** բարձրանալով՝ հասնում շլացուցիչ պայծառ երկնքին /Ն. Հարությունյան/:

Նույն ինքնատիրապետումով նա թանձր ծովային մշուշի միջով սլանում էր դեպի ջինջ, շլացուցիչ փայլով շողշողացող երկինք... /Վ. Հովհաննիսյան/:

2) He didn't know why, for instance, but when he flew at altitudes less than half his wingspan **above the water**, he could stay in the air longer, with less effort.

Նա չգիտեր՝ ինչու է այդպես, բայց **ծովի մակերևույթից** իր թևաբացվածքի կեսից ավելի փոքր բարձրությամբ թռչելիս ինքը կարողանում էր ավելի քիչ լարվելով առավել երկար մնալ օդում /Ն. Հարությունյան/:

Նա, օրինակ, չէր հասկանում, թե ինչու իր թևերի կես բացվածքից պակաս **բարձրություն** թռչելիս կարողանում էր գրեթե առանց ջանքի օդում երկար մնալ/Վ. Հովհաննիսյան/ (Ռ. Բախ, <<Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճայլ>>):

3) There came into the reception-hall to greet her mistress a man of perhaps thirty-six years of age, **above the medium in height**, clear-eyed, firm-jawed, athletic, direct, and vigorous.

Հյուրասենյակ մտավ և տանտիրուհուն ողջունեց մոտ երեսունվեց տարեկան մի մարդ՝ **միջակից ավելի բարձր հասակով**, ատլետիկ

կազմվածքով, գլուխը բարձր բռնած, վճիտ աչքերով և համառ կզակով (Թեոդոր Դրայզեր, <<Ջեննի Գերհարդ>>):

4) It was a revelation of the heights of existence that were attained in the **world above**.

Դա նրա աչքին յուրահատուկ մի հայտնություն էր, զգացմունքների այն վեհության ապացույցը, որին հասել են **բարձր դասակարգերը** (Ջեկ Լոնդոն, «Մարտին Բդեն»):

Above նախդիրը, բացի իր հիմնական իմաստներից (**վրա, վերևում, վերոհիշյալ**), կարող է արտահայտվել գոյականի կամ դերանվան բացառական հոլովով (1-ին և 2-րդ օրինակների առաջին տարբերակները): Առաջին օրինակի երկրորդ տարբերակում **above** բառի և նրան հաջորդող դերանվան թարգմանությունը միտումնավոր բաց է թողնված՝ նախադասության ավելի ճշգրիտ ձևակերպման նկատառումներից ելնելով, իսկ որոշ դեպքերում էլ (3-րդ և 4-րդ օրինակները) **above** բառը ձեռք է բերել **բարձր** իմաստը:

With

1) **With the same inner control**, he flew through heavy seafogs and climbed above them into dazzling clear skies ...

Նույն ինքնատիրապետմամբ նա թռչում էր թանձր ծովամշուշի միջով ու նրանից բարձրանալով՝ հասնում շլացուցիչ պայծառ երկնքին: /Ն. Հարությունյան/

Նույն ինքնատիրապետումով նա թանձր ծովային մշուշի միջով սլանում էր դեպի ջինջ, շլացուցիչ փայլով շողշողացող երկինք ... /Վ. Հովհաննիսյան/

2) **With less effort**

ավելի քիչ լարվելով..../Ն. Հարությունյան/:

գրեթե առանց ջանքի... /Վ. Հովհաննիսյան/ (Ռ. Բախ, «Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճալը»):

3) He released her **with a short laugh**.

Լեսթերը ծիծաղեց և բաց թողեց նրան (Թեոդոր Դրայզեր, «Ջեննի Գերհարդ»):

4) Between a grand piano and a centre-table, piled high with books was space for a half a dozen to walk abreast, yet he essayed it **with trepidation**.

Դաշնամուրի ու գրքերով ծանրաբեռ սեղանի արանքով հեշտությամբ կարող էր անցնել վեց մարդ, մինչդեռ նա սիրտ առավ անցնել **շունչը պահած** (Ջեկ Լոնդոն, «Մարտին Բդեն»):

With նախդիրը (**հետ, միասին, պատճառով, չնայած** և այլն), տարբեր բառերի հետ կապակցվելով, կարող է հանդես գալ որպես ձևի մակբայ և արտահայտել տարբեր իմաստներ, ինչպես նաև թարգմանվել բայի անցյալ կատարյալով:

1) He now gained **for himself alone**...

նա միայն **մենություն** վաստակեց... /Ն. Հարությունյան/

...որ երբևէ **սովորածը** կիսելու է երամի հետ... /Վ. Հովհաննիսյան/

2) Sullivan Seagull laughed **in spite of himself**

Սալիվան **սկամա** ծիծաղեց: /Ն. Հարությունյան/

Սալիվան **սկամա** ծիծաղեց... /Վ. Հովհաննիսյան/(Ռ. Բախ, «Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճայը»):

3) "I might have bade her good-bye," he thought **to himself** as the train rumbled heavily along.

«Հարկավոր է հրաժեշտ տալ նրան», - **մտածում էր նա զնացքում** (Թեոդոր Դրայզեր, «Ջեննի Գերհարդ»):

The next moment, **angry with himself** for the boast, he had gripped the arms of the chair so savagely that every finger-end was stinging.

Եվ իսկույն **իրեն կշտամբելով** այդ պարծենկոտության համար նա այնպես պինդ սեղմեց թիկնաթոռի արմունկները, որ նրա մատները մղկտացին (Ջեյ Լոնդոն, «Մարտին Իդեն»):

Անգլերենում նախդիրների և անդրադարձ դերանվան կապակցությունները հայերենում արտահայտված են տարբեր ձևերով: Առաջին օրինակի երկու թարգմանություններն էապես տարբերվում են միմյանցից, և եթե հաշվի առնենք, որ **to gain for oneself** նաև նշանակում է **գիտելիք կուտակել, ձեռք բերել**, ապա կարելի է ենթադրել, որ Վ. Հովհաննիսյանի տարբերակն ավելի ճիշտ է: Ն. Հարությունյանն իր տարբերակում բաց է թողել **gain** բառի և դրան հաջորդող նախդրի և անդրադարձ դերանվան իմաստները՝ իր թարգմանության մեջ առաջնորդվելով միայն **alone** բառի իմաստով, որն էլ բովանդակային առումով սխալ է:

for

1) By the end of three months Jonathan had six other students, Outcasts all, yet curious about this strange new idea of flight **for** the joy of flying./Երրորդ ամսվա վերջում Ջոնաթանն ուներ ևս վեց աշակերտ, բոլորն էլ Աքսոբյալներ՝ հրապուրված իրենց նոր, տարօրինակ գաղափարով՝ թռչել **հանուն** թռիչքի երջանկության:

Երրորդ ամսվա վերջում Ջոնաթանի մոտ հայտնվեց ևս վեց աշակերտ՝ վեցն էլ Աքսոբյալներ, նոր տարօրինակ գաղափարով տարված՝ թըռչել **հանուն** թռիչքի երջանկության:

2) They liked the practice, because it was fast and exciting and it fed a **hunger for learning** that grew with every lesson.

Նրանք գործնական վարժություններ էին սիրում, որովհետև դրանց արագությունը խենթացնում էր, դրանք հագեցնում էին **սովորելու նրանց ծառավը**, որ յուրաքանչյուր պարապմունքի հետ ավելի էր սաստկանում (Ռ. Բախ, «Ջոնաթան Լիվինգսթոն անունով ճայր»):

Նրանց դուր էին գալիս պարապմունքները, որովհետև արագությունը արթեցնում էր, իսկ մարզումները օգնում էին հագեցնել **գիտելիքների ծառավը**, որը յուրաքանչյուր պարապմունքից հետո ավելի էր ուժգնանում:

3) He was a friend of Mrs. Bracebridge more than of her husband, **for** the former had been raised in Cincinnati and as a girl had visited at his father's house.

Առանձնապես մտերիմ էր միսիս Բրայսբրիջի հետ, **քանի որ** նա մեծացել էր Յինցիննատիում և աղջիկ ժամանակ հաճախ էր լինում իր հոր տանը (Թեոդոր Դրայզեր, «Ջեննի Գերհարդ»):

4) He had **starved for love** all his life.

Նա իր ողջ կյանքում սեր էր որոնում (Ջեյ Լոնդոն, «Մարտին Բդեն»):

Վերոնջյալ օրինակներում **for** նախդիրը (**համար, ընթացքում, քանի որ**), բացի իր հիմնական իմաստից, արտահայտում է նաև մի շարք այլ իմաստներ: Հարկ է նշել նաև, որ **for** բառը կարող է նաև հանդես գալ որպես շաղկապ՝ արտահայտելով քանի որ իմաստը:

Այսպիսով, համեմատելով անգլերենով գրված ստեղծագործությունների հայերեն թարգմանությունների տարբերակները, կարելի է վերհանել նախդիրների ինչպես առաջնային, այնպես էլ լրացուցիչ իմաստները և հայերենում դրանց արտահայտման առանձնահատկությունները:

Torchyan Lilit- Observations on preposition+noun combinations in English and their equivalents in contemporary Armenian.- This article aims to reveal which cases in Armenian stand for preposition + noun combinations in English.

For that purpose, some examples of “Jonathan Livingston Seagull” by Richard Bach, “Jennie Gerhardt” by Theodor Dreiser and “Martin Eden” by Jack London translated into Armenian were compared observing a number of phenomena. In this work, the

two translated versions of “Jonathan Livingston Seagull” made by Vahe Hovhannisyan and Naira Harutyunyan have been viewed.

Торчян Лилит - Наблюдения по поводу сочетаний предмет+существительное в английском языке и их соответствий в современном армянском.- В настоящей статье выявляется какому падежу в армянском языке соответствует сочетание предлог плюс существительное в английском.

С этой целью нами ведется сравнительный анализ определенных примеров, взятых из произведений “Чайка по имени Джонатан Ливингстон” Ричарда Баха, “Дженни Герхардт” Теодора Драйзера, “Мартин Иден” Джека Лондона в армянском переводе, принимая во внимание ряд явлений.

В работе рассматривались переводы произведения Ричарда Баха “Чайка по имени Джонатан Ливингстон”, сделанные Ованесяном Ваге и Арутюнян Наирой.

ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ ԵՎ ՈՃԸ

« Երկինք՝ եւ երկիր անցեն,
եւ բանք իմ ոչ անցանիցեն»:
(Մարկ.13.31)

Աստվածաշունչը ուսումնասիրվել է պատմաբանների, լեզվաբանների, մշակութաբանների, հնագետների և այլոց կողմից: Մակայն դեռ բազմաթիվ ու բազմակողմանի ուսումնասիրությունների փափագ ունի: Հայերեն Աստվածաշունչը ուսումնասիրվել է հենց իր ծնունդից սկսած մինչ այսօր, սակայն բազմաթիվ կնճռոտ հարցեր են մնացել, որոնք լուծման են սպասում: Հայերեն Աստվածաշունչը ենթարկվել է պատմական, բանասիրական, պատմաբանասիրական, աստվածաբանական քննությունների: Հայերեն Աստվածաշունչի ուսումնասիրությունը ընդհանրապես և ավետարանների՝ մասնավորապես կարող է բազմաթիվ բնագրական խնդիրների լուծումներ գտնել: Մեր ժամանակների աստվածաշնչյան հայտնի բանասեր Բրյուս Մետցգերը հետևյալ միտքն է արտահայտում. «*Ընդհանուր առմամբ հայերեն թարգմանությունը անգերազանցելի է իր ոճական գեղեցկությամբ և վերածումի ճշգրտությամբ: Կոչված «Թագուհի Թարգմանությանց» այն շատ ավելի ուշադրության է արժանի»*¹⁹:

Չնայած հունարենից թարգմանություն է կատարվել, բայց հայերենը չի կառչել դրանից, որի վառ օրինակն են հայերեն թարգմանությունները, որպեսզի ցույց տան, թե հայ թարգմանիչը չի կառչել միայն մեկ լեզվին. նա ընտրել է մեկը կամ մյուսը ըստ իր ճաշակի և ըմբռնումների: Ահա մի քանի համեմատություններ, որ բերում է Խ. Գուրյանն իր աշխատության մեջ: Հունարենն է. «*Եւ եկին թռչունք և կերան գնոսա*». (Մատթ. ԺԳ 4) հայերենը ըստ ասորականի ավելացնում է՝ երկնից. «*Թռչունք երկնից*»: Հունարենը՝ «*Եթե կամիս ի կեանս մտանել*», հայերենը ավելացնում է յաւիտենականս՝ «*ի կեանս յաւիտենականս*» ըստ ասորականի (Մատթ. ԺԹ 17): «*Համբոյր մի ողջունի ոչ ետուր ինձ*», հայերենը ըստ հունարենի կրճատում է **ողջունի**

¹⁹ Metzger B. M., «Versions ancient», in *The Interpreter's Dictionary of the Bible*, Vol. 4, 1997, p. 757.

բառը (Ղուկ. Է 45): Հայերենը ըստ ասորերենի ունի «*Յորժամ կոչիցէ որ գրեզ ի հարսանիս և ի կոչունս*», հունարենը չունի **ի կոչունս** (Ղուկ. ԺԴ 8): Հունարենն է, «*Տեսանէ՛ս գայս կին, մտի ի տուն քո, ջուր ոտից իմոց ոչ ետուր, իսկ սա արտասուօք իւրովք եթաց գոտս իմ և հերով գլխոյ իւրոյ ջնջեաց. Համբոյր մի դու ոչ ետուր ինձ. սա աւասիկ յորմէ հետէ մտեալ եմ, ոչ դադարեաց ի համբուրելոյ գոտս իմ. իւղով զգլուխ իմ ոչ օծեր, սա իւղով անուշիւ օծ գոտս իմ, վասն որոյ ասեմ քեզ՝ թողեալ լիցին սմա մեղք իւր բազումք, զի յոյժ սիրեաց, զի որում շատ թողուցու, շատ սիրէ և որում սակաւ՝ սիրէ*» (Ղուկ. Է 44-47): Հայերենը հիմնականում հետևում է հունարենին, բայց խմբագրելով հանում է *գլխոյ* բառը՝ թողնելով *հերով իւրով*: Հունարենը ունի «*սա իւղով անուշիւ օծ գոտս իմ*»: Հայերենը հանում է *գոտս իմ*, որովհետև նախորդ նախադասությունը վերաբերում է գլխին և ոչ թե ոտքերին: Ասորերենի զանազանությունը ավելի մեծ է, *տեսանել* բայը անցյալ կատարյալով է. շարադասությունը տարբեր է. *ետուր* բայաձևի փոխարեն *եղիր* է. չկան «*իւղով զգլուխ իմ ոչ օծեր, սա իւղով անուշիւ օծ գոտս իմ*» (Ղուկ. Է 44-47)²⁰:

Մեծանուն հայ լեզվաբանների կողմից լուրջ լեզվաբանական ուսումնասիրության է ենթարկվել, Մխիթարյան հայրերի կողմից ոչ միայն բանասիրական, այլ նաև աստվածաբանական քննության: Եթե բանասերներին մեծ հաշվով չպետք է հետաքրքրեր աստվածաբանական եզրերը, ապա մխիթարյան հայրերը չէին կարող անտարբեր անցնել, այս դեպքում էլ նրանք, չափից ավել նախանձախնդրություն ցուցաբերելով, հայերեն թարգմանության ցանկացած շեղումին աստվածաբանական մեկնություն էին շնորհում:

Խոսելով Ավետարանների լեզվի և ոճի մասին՝ պետք է հիշել ավետարանների սկզբնաղբյուրի կամ սկզբնաղբյուրների, ավետարանը գրողի, ավետարանի հասցեատերերի, ավետարանը գրվելու վայրի, ինչպես նաև երեք համատես ավետարանների մասին: Պատահականություններ չեն, որ Մարկոսի մոտ տեսնում ենք արամեերեն բառեր ու բառակապակցություններ, Մատթեոսի ավետարանի հունարեն բնագիրը կարծես եբրայերենից արված թարգմանություն լինի, Ղուկասի ավետարանի լեզուն ժամանակի գրական լեզուն է, իսկ Հովհաննեսի լեզուն և ոճը արմատական տարբերություն ունի նախորդ երեքից:

²⁰ Խ. Գուրեան, *Մեսրոպեան Աստուածաշունչը բանասիրութեան լոյսին տակ*, Գափիթ, 1944, էջ 549-553:

Բհարկէ Ավետարաններում չենք կարող չտեսնել եբրայական ոճի ազդեցություն, որի վառ ապացույցն է նախադասությունների սկզբում անհարկի «և» շաղկապի հաճախությունը, որը անցել է հունարեն, այնտեղից էլ հայերեն բնագրին: Մեծանուն գրաբարագետ Վ. Չալըխյանը նշում է. «Եբրայական ոճով շատ հաճախ է եւ-ի գործածությունն, որ ուրիշ շաղկապներու և հարաբերականներու տեղ ալ կդրուի»²¹:

Մ. Թ. առաջին դարում Միջերկրականի ավազանում խոսում էին չորս հիմնական լեզուներով՝ լատիներեն, եբրայերեն, արամեերեն և «կոյնե» կոչված հունարեն՝ դասական հունարենից առաջացած տեղական խոսվածքով:

Արամեերենը դասական եբրայերենից ավելի շատ էր տարածված Պաղեստինում. լինելով սեմական լեզու՝ այն մոտ է եբրայերենին: Հիսուսի քարոզները, գրավոր որոշ փաստաթղթեր ցույց են տալիս, որ մեր Քրիստոս օգտվել է արամեերենից, օրինակ. «Դու Յովնանի որդի Միմոնն ես. դու պիտի կոչուես Կեփաս» (որ թարգմանում է՝ Պետրոս) (Հովհ. 1:42), «դէպի երկինք նայեց, հոգոց հանեց եւ ասաց՝ Եփիաթա, որ նշանակում է՝ բացուի ր» (Մարկ. 7:34) և այլն: Հատկանշական է, որ արամեերենով է գրվել Նոր Կտակարանի ամենահիշարժան տողերից մեկը, երբ Քրիստոսը աղաղակում է խաչի վրայից. «Էլի ,Էլի ,լա մա սաբաթթանի» (Ηλι ηλι λεμα σαβαχθανι), այսինքն՝ «Աստվա ծ իմ, Աստվա ծ իմ, ինչո՞ւ թողեցիր ինձ» (Մաթ. 27:46):

Բհարկէ, լատիներենը և եբրայերենը այնքան գերակշիռ ու վճռական դեր չեն խաղացել Նոր Կտակարանի տարածման գործում, ինչքան արամեերենն ու հունարենը, սակայն պետք է նշել, որ Քրիստոսի խաչի վրայի մակագրությունը եբրայերեն, լատիներեն և հունարեն լեզուներով էր. «Այդ տախտակը հրեաներից շատերը կարդացին, որովհետեւ այն տեղը, ուր Յիսուս խաչուեց, քաղաքին մօտ էր (եւ գրուած էր եբրայերէն, լատիներէն եւ յունարէն)» (Հովհ. 19:20), մի բան, որն ապացուցում է այդ դարաշրջանում հիշյալ լեզուների կարևորությունը:

Հետաքրքրական է, որ Ավետարանական ամենահայտնի հատվածներից մեկում տրված է մի բառ, որ Նոր Կտակարանի գրվելուց առաջ ոչ մի անգամ չի հիշատակվել ողջ հունական պահպանված գրականության մեջ: Այս բառը հիշատակված է հանրածանոթ Տերունական աղոթքում (Մատթ. 6:11): Դա սովորաբար թարգմանվում է՝ «Մեր հանապազօրեայ հացը տո՛ւր մեզ այսօր»: Խնդրո՞ւ առարկա բառը (ἐπιούσιον) թարգմանված է

²¹ Վ. Չալըխեան, Քերականություն հայկազեան լեզուի, Վիեննա, 1885, էջ 128:

«հանապազօրյա»: Հունարենի գիտակաները դեռևս համաձայնության չեն եկել ոչ դրա ծագման, ոչ էլ դրա հստակ իմաստի շուրջ: Տարբեր մեկնաբաններ փորձում են առնչություն գտնել հունարեն հայտնի բառերի հետ, և շատ առաջարկություններ են եղել իմաստի վերաբերյալ²²:

ՄԱՏԹԵՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆ

Մատթեոսի Ավետարանը, լինելով Նոր Կտակարանի առաջին գիրքը, ինչ-որ ձևով հանդիսանում է Հին և Նոր կտակարաններն իրար կապող կամուրջ: Հին եկեղեցական ավանդությունը այս ավետարանը վերագրում է Քրիստոսի 12 առաքյալներից մեկին՝ Մատթեոսին: Ավետարանիչը մեծ կարևորություն է տալիս դրամական մանրամասնություններին, ինչը վկայում է Մատթեոս մաքսավորի և Մատթեոս Ավետարանիչի նույնության մասին: Պապիասի հիշատակությունը, որը փրկվել է Եվսեբոսի կողմից, ասում է. «Մատթեոսը Հիսուսի խոսքերը շարադրեց եբրայեցերեն բարբառով, և յուրաքանչյուրը մեկնեց այն, ինչպես որ կարողացավ»: Եպիփան Կիպրացին գրում է. «Նոր Կտակարանում միայն Մատթեոսը եբրայեցերեն և եբրայերեն տառերով գրեց Ավետարանի շարադրությունը և քարոզը»²³:

Այսօր ընդունված է, որ ավետարանների գրությունից առաջ գոյություն է ունեցել Հիսուսի խոսքերի մի ժողովածու, որը նշագրվում է Q տառով (գերմաներեն Quelle-աղբյուր): Q աղբյուրը գրավոր էր, թե՛ բանավոր, արամերեն, թե՛ հունարեն՝ դժվար է ասել: Որոշ գիտնականներ գտնում են, որ Մատթեոսի ավետարանը և Q աղբյուրը նույն են, սակայն այս տեսակետը այսօր չի դիմանում քննադատության: Մատթեոսի ավետարանի կեսը համապատասխանում է Մարկոսի ավետարանին, որը համարվում է Մատթեոսի և Ղուկասի հիմնական աղբյուր: Մարկոսի ավետարանի 90 տոկոսը տեսնում ենք Մատթեոսի մոտ: Սակայն Մատթեոսը ունի մի շարք նյութեր, որոնք անձանոթ են համատեսներին և Հովհաննեսին: Հետևաբար նա ունեցել է մի յուրօրինակ աղբյուր:

Մատթեոսի ավետարանը, բնական է, որ ողողված պետք է լինի եբրայաբանություններով:

²² **Ջոշ Մակ-Դաուել**, *Վճռական վկայություն*, Հ. 1, Երևան 2006, էջ 67:

²³ **Եգնիկ Օ. Վրդ. Պետրոսյան**, *Ներածություն Նոր Կտակարանի*, Ս. Էջմիածին 1996, էջ 39:

ՄԱՐԿՈՍԻ ԱՎԷՏԱՐԱՆ

Մյուս Ավետարանիչներից ավելի Մարկոսը Հիսուս Քրիստոսի կյանքը ներկայացնում է որպես ականատես: Նա կարծես իր առջև նպատակ է դրել Քրիստոսին ներկայացնելու այնպիսին, ինչպիսին որ նա եղել է:

Ամեն հարմար առիթով Մարկոսը բարձրաձայնում է Քրիստոսի Աստվածության մասին: Ավետարանի հենց սկզբում կարծես բանաձևում է իր հավատքը. «Աստծո Որդու՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանի սկիզբը»: Նա հաճախ է խոսում Քրիստոսին լսողների մոտ ձևավորված տպավորությունների մասին, որ արտահայտվում է հետևյալ ձևերով. «Եվ նրանք զարմանում էին Նրա քարոզության վրա» (Մարկ. 1:22), կամ «Եվ ամենքը զարմացան, այնպես որ հարցնում էին իրար և ասում. «Այս ի՞նչ նոր վարդապետություն է, որ իշխանությամբ պիղծ ոգիներին էլ է սաստում» (Մարկ. 1:27): Հակառակ նրան, որ մշտապես Տիրոջ կողքին էին, բայց երբեմն վախով ու զարմանքով է պարուրվում նաև աշակերտների սրտերը. «Եվ նրանք սաստիկ վախեցան և միմյանց ասում էին. «Ո՛վ է արդյոք սա, որ թե հողմը, թե ծովը հնազանդվում են սրան» (Մարկ. 4:41): Այսպիսով՝ Մարկոսի Ավետարանում ընդգծված է Քրիստոս Աստծո կերպարը, ով Աստված է մարդկանց մեջ, որի պատճառով էլ մարդիկ զարմացած են Իր խոսքերից և գործերից:

Մինևույն ժամանակ Մարկոսի Ավետարանում Հիսուսի կերպարը այնքան մոտ է մարդկային բնությանը, որ մյուս համատեսները թերևս ընթերցողի մոտ թյուրըմբռնում չառաջացնելու միտումով երբեմն աննշան փոփոխություններով փորձում են մեղմել մարդկային բնության շեշտադրումը: Անապատում փորձությունը նկարագրելիս Մարկոսը հետևյալ կերպ է ներկայացնում. «Եվ անմիջապես Հոգին նրան հանեց տարավ դեպի անապատ...», իսկ Մատթեոսը գրում է. «Նրանից հետո Հիսուս անապատ տարվեց Հոգուց...», իսկ Ղուկասի մոտ հետևյալ կերպ է. «Հոգով անապատ առաջնորդվեց...»: Մարկոսը նաև անհամեմատ ավելի խորն է ներկայացնում Քրիստոսի զգացմունքների նկարագրությունը՝ հոգոց հանեց (7:34), գթաց նրանց (6:34), զարմանում էր նրանց անհավատության վրա (6:6), ցատումով լցված (3:5), Հիսուս քաղցած էր (11:12) և այլն: Այսպիսով՝ Մարկոսի Ավետարանում Հիսուս, ներկայացվելով մարդկային շեշտված բնութագրումներով, դառնում է մեզ համար ավելի մոտ և հասանելի:

Այս Ավետարանի կարևոր առանձնահատկություններից է նաև այն, որ Մարկոսը, պատմությունների մեջ դնելով փոքր մանրամասնություններ, դրանք դարձնում է առավել պատկերավոր և բնութագրական: Հիսուս և մանուկները դրվագում երբ աշակերտները արգելում են մանուկներին

մոտենալ Հիսուսին, Հիսուս նրանց հանդիմանում է՝ ասելով թե այդպիսիներինն է երկնքի արքայությունը: Այս հատվածի վերջում Մատթեոսը գրում է. «Եվ նրանց վրա ձեռք դրեց ու այդտեղից գնաց» (19:13-15), Ղուկասը ոչինչ չի ավելացնում, իսկ Մարկոսը ասում է. «Եվ Նա վերցնելով նրանց իր գիրկը՝ նրանց վրա ձեռքը դրեց և օրհնեց նրանց» (10:13-16): Հինգ հազարի կերակրման պատմության մեջ միայն Մարկոսն է նշում, որ «դաս-դաս նստեցին, տեղ-տեղ հարյուր, տեղ-տեղ հիսուն», իսկ փոթորկի խաղաղեցման պատմության մեջ ի տարբերություն մյուս համատեսների Մարկոսը ավելացնում է մի փոքրիկ նախադասություն՝ պատկերը դարձնելով առավել կենդանի. «Իսկ ինքը նավախելի կողմը բարձի վրա ննջում էր» (4:38):

Հետաքրքրական առանձնահատկությունն է նաև Մարկոսի լեզուն և ոճը: Այն շատ պարզ է՝ երբեմն հասնելով մանկական պարզության: Երբեմն տարբեր պատմությունների մասին խոսելիս դրանք պարզապես միացնում է «և»-ով, «ապա»-ով, «ու»-ով: Մարկոսը շատ է սիրում օգտագործել պատմական ներկա ժամանակը՝ անցած պատմության մասին խոսում է ներկա ժամանակով: Սա մի ոճ է, որով Մարկոսը փորձում է ցույց տալ, թե հիշողությունները վառ և կենդանի են, դրանք կարծես դեռևս շարունակվում են իր աչքերի առաջ (11:1-2, 14:49 և այլն): Այս ձևը նա օգտագործել է 151 անգամ:

Ավետարանը գրվել է ժամանակի խոսակցական լեզվով: Սակայն Մարկոսը հաճախ մեջբերում է այն արամեերեն բառերը և բառակապակցությունները, որոնք արտասանել է Հիսուս՝ Հայրոսի աղջկան ասում է. «ταλιθα κουμι-տալիթա կումի--աղջի՛կ, դո՛ւ, քե՛զ եմ ասում, վե՛ր կաց» (5:41), խուլ ու համրին. «Εφφαθα-Եփփաթա-բացվի՛ր» (7:34), Գեթսեմանիի պարտեզում Հիսուս ասում է. «Αββα-Աբբա-Հայր» (14:36):

Ավետարանում տեղ են գտել բազմաթիվ լատիներեն բառեր. Κεντυρίων- կենտուրիոն-հարյուրապետ (Մարկ. 15:39), πραιτώριον-պրայտոռիոն-ապարանք, հրապարակ (Մարկ. 15:16), σπείρα-սպեիրոս-գունդ (Մարկ. 15:16), σπεκουλάτορ- սպեկուլատոր-դահլիճ (Մարկ. 6:27), ὠσαννά-օվսաննա-օրհնություն (Մարկ. 11:10) և այլն:

ՂՈՒԿԱՍՈՒ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Ավանդության համաձայն, որ պահպանվել է մի քանի վաղ եկեղեցական գործիչների մոտ (Եվսեբիոս Կեսարացի, Հերոնիմոս և այլն), Ղուկասը ծնվել է Անտիոքում: Ենթադրվում է, որ նա հեթանոս էր, որովհետև Կոդոսացիս 4:10-15 համարներում Պողոս առաքյալը թլպատվածներին և ոչ

թլփատվածներին առանձին է հիշատակում: Կարծիք կա, որ նա մինչև քրիստոնյա դառնալը եղել է հրեա նորադարձ, քանի որ քաջատեղյակ է հրեական օրենքներին և սովորություններին: Մասնագիտությամբ բժիշկ էր (Կող. 4:14):

Այս Ավետարանը լեզվառճական իմաստով Նոր Կտակարանի լավագույն գրքերից մեկն է: Ըստ Հերոնիմոսի. «Ղուկասը բոլոր ավետարանիչների մեջ հունարեն լեզվի ամենահմուտ կիրառողը եղավ»²⁴: Ղուկասու Ավետարանի հունարենը առավել մոտ է Յոթանասնից թարգմանության լեզվին:

Ավետարանը գրված է գեղեցիկ, ճոխ բառապաշարով, հղկված ոճով, գաղափարները ներկայացվում են հստակ և մշակված: Մարկոսյան հատվածները ներկայացնելիս հաճախ դրանք դնում է ոճական նոր ձևերի մեջ, որտեղ նրա լեզվի գեղեցկությունն ու յուրահատկությունն ավելի է շեշտվում:

Ղուկասի լեզվի գեղեցկությունը ցայտուն է հատկապես այն հատվածներում, ուր հեղինակը ինքնուրույն է՝ անկախ աղբյուրներից: Նրա լեզվի գեղեցկությունը երևում է նաև համատես հատվածներում, որտեղ նա փոխում է մի շարք բառեր. *οὐδὲς τοῦ φερόδεν*՝ հույոս տու *φρουρούμενος*՝ որդիներ (Ղուկ. 16:8), *οὐδὲ τοῦ ἀνθρώπου*՝ հույո տու *ἀνθρώπου*՝ մարդու որդի (Ղուկ 17:25) և այլն:

ՀՈՎՀԱՆՈՒ ԱՎԵՏԱՐԱՆ

Հետաքրքրական է, որ Հովհաննեսի Ավետարանի մեջ Զեֆեդիոսի երկու որդիների՝ Հովհաննեսի և Հակոբոսի անունները ընդհանրապես չեն հիշվում: Հակառակ դրան Մատթեոսը երկու անգամ հիշում է Հովհաննեսին և Հակոբոսին, Մարկոսն ինն անգամ, իսկ Ղուկասը վեց անգամ Հովհաննեսի և չորս անգամ Հակոբոսի անունները: Գիտնականների մեծամասնության կարծիքով այս լռությունը պատահականություն չի կարող լինել, այլ արդյունք է առաքյալի համեստության, ով ընդհանրապես չնշելով իր և եղբոր անունները՝ պարզապես գրում է. «մյուս աշակերտը», կամ «այն աշակերտը, որին Հիսուս սիրում էր»:

Ավետարանի վերջաբանում՝ 21-րդ գլխի մեջ, ակնարկվում է Տիրոջ սիրելի աշակերտը, որը և փարվեց նրա կրծքին վերջին ընթրիքի ժամանակ, ապա ավելացնում է. «Այս աշակերտն է, որ վկայում է այս բաների մասին, որ և գրեց այս բաները, և գիտենք, որ նրա վկայությունը ճշմարիտ է» (Հովհ.

²⁴ Եզնիկ Ծ. Վրդ. Պետրոսյան, *Ներածություն Նոր Կտակարանի*, Ս. Էջմիածին 1996, էջ 42:

21:24): Չորս Ավետարաններն էլ վկայում են, որ վերջին ընթրիքի ժամանակ ներկա էին միայն տասներկուսը, և հետևաբար այն անձը, ով խոնարհվեց Տիրոջ կրծքին, Հովհաննեսից գատ ուրիշ մեկը չի կարող լինել:

Հովհաննեսի Ավետարանի լեզուն և ոճը ունեն յուրահատուկ մի երանգ: Հովհաննեսի Ավետարանի լեզուն տվյալ ժամանակաշրջանի koine կոչվող հունարենն է: Թեև բառամթերքը աղքատ է, սակայն գաղափարները հաճախ խորհրդավոր ու վերացական: Պատմությունները կենդանի են և միաժամանակ լի խորը աստվածաբանությամբ: Ավետարանիչը ունի մի յուրահատուկ շարադրելաձև: Նա բազմաթիվ անգամներ է վերադառնում նույն նյութին, սակայն ամեն անգամ մի նոր տարր ավելացնելով ասվածին: Նա հաճախ օգտագործում է այսպես կոչված «դժվարըմբռնելիների տեխնիկան»։ Հիսուսի վարդապետությունները ունկնդիրների կողմից չեն հասկացվում իրենց «ոգեկան» խորությամբ, այլ ըմբռնվում են միայն իրենց մակերեսով: Այդպիսով՝ Հիսուսը հնարավորություն է ունենում դրանք ավելի լուսաբանելու, որ ճշգրիտ հասկացվեն ունկնդիրների կողմից:

Հովհաննեսի Ավետարանը մյուս համատես Ավետարաններից տարբերվում է թե լեզվով, թե ոճով և թե մտածելակերպով ու գաղափարներով ընդհանրապես: Մա պայմանավորված է ոչ միայն առաքյալի անձնական հատկանիշներով, այլև նրա ապրած միջավայրով, մշակույթով և զանազան կրոնական հոսանքներով:

Աստվածաշնչյան բանասեր Շվայցերը նշել է 33 հազվագյուտ բառեր և արտահայտություններ, որոնք օգտագործում է ավետարանիչը, և դրանք կոչել «Հովհաննիսյան յուրահատկություններ»²⁵:

Ավետարանի ներքին փաստերը հուշում են, որ դրա հեղինակը ամենայն հավանականությամբ հրեա է՝ քաջատեղյակ Հին Կտակարանին և հրեական սովորություններին: Թեև Ավետարանը գրվել է հունարեն լեզվով, սակայն հեղինակի մայրենի լեզուն արամեերենն է, քանի որ Ավետարանում առկա են բազմաթիվ արամեերեն բառեր և արտահայտություններ: Երբեմն հեղինակն ինքն է բացատրում սեմական բառերը. «Ռաբբի, որ վարդապետ է նշանակում» (1:38), «Կեփաս, որ թարգմանվում է Պետրոս» (1:42), «Պրոֆատիկեի մոտ մի ավազան կար, որ եբրայեցերեն Բեթհեզդա էր կոչվում» (5:2), Գնա, լվացվիր Սիլվամի ավազանի մեջ (որ թարգմանվում է՝ առաքյալ)» (9:7), և բարձրանում էր այն տեղը, որ Գանգ էր կոչվում, իսկ եբրայեցերեն կոչվում էր Գողգոթա» (19:17) և այլն:

²⁵ Եզնիկ Ծ. Վրդ. Պետրոսյան, *Ներածություն Նոր Կտակարանի*, Ս. Էջմիածին 1996, էջ 58:

Եբրայաբանության այս օրինակները պատճառ հանդիսացան, որ ուսումնասիրողներից ոմանք առաջ քաշեցին մի վարկած, ըստ որի Հովհաննեսի Ավետարանը թարգմանություն է արամեերեն լեզվից: Այս տեսակետը սակայն ընդունելության չարժանացավ, քանզի դրա օգտին խոսող փաստերը անհամոզիչ են և անբավարար, մյուս կողմից Ավետարանում կան հունարեն բառեր և արտահայտություններ, որոնք անհնարին է, որ թարգմանված լինեն արամեերենից:

Մատթեոսն իր Ավետարանը գրել է հավատափոխ հրեաների համար, Մարկոսը՝ հռոմեական ծագում ունեցող քրիստոնյաների, Ղուկասը՝ հույն հեթանոսների, իսկ Հովհաննեսի Ավետարանի ընթերցողները ամենքն են: Այս հանգամանքները Ավետարանների լեզվառձական առանձնահատկությունների պատճառներից են:

Иордания В. – Язык и стиль евангелий.- В докладе представлены языковые особенности Евангелия. В 4 Евангелиях перечислены отдельно отличительные языковые особенности. Каждый отличается своим уникальным стилем и языкового воздействия, понесенный той или иной язык.

Iordanyan V. - Language and style of gospels.- The report presents the Gospel linguistic peculiarities. 4 Gospels are listed separately distinctive linguistic features. Each is distinguished by its unique style and linguistic impact suffered by this or that language.

ԱՂՁՆԻՔԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՆԻ
ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍԵՊԱԳԻՐ ԱՂՔՈՒՐՆԵՐՈՒՄ

(Պատմալեզվական-ստուգաբանական քննություն)

Վանի թագավորության սեպագիր արձանագրություններում Աղձնիքին առնչվող տեղանուններն առաջին անգամ հիշատակվում են՝ սկսած Մենուայի (Ք.ա. 810-786 թթ.) գահակալության սկզբնական շրջանից: Դրանք վկայակոչող պատմական սկզբնաղբյուրները հազվագյուտ են, թվագրվում են Ք.ա. 9-րդ դ. վերջերով, հավանաբար նաև 8-րդ դ. սկզբներով: Ի մասնավորի՝ սեպագիր վավերագրերում արձանագրված տեղանունները հիմնականում ներկայացնում են այսպես կոչված «երկրներ» (KUR) և «քաղաք»-բնակավայրեր (URU), որոնցից մի քանիսը ստորև կփորձենք քննել պատմալեզվաբանության դիրքերից²⁶:

1. Վանա լճից հյուսիս գտնվող Պատնոց-Բադնոց գյուղի շրջակայքից հայտնաբերված սեպագիր արձանագրությունում ներկայացվում է Մենուայի գահ բարձրանալու տարում վերջինիս Աղձնիք ձեռնարկած անդրանիկ արշավանքը: Այս վավերագրում հիշատակվում են *Ալզի*, *Կուտումե* և *Շաշնուինի* (*Շաշնու*) տեղանունները²⁷:

ա) *Ալզի* «երկիրը» (^{KUR}Alzi) մեզ հայտնի բիայնական սեպագիր աղբյուրներից առաջին անգամ վկայված է վերոհիշյալ արձանագրությունում: Այն Աղձնիքի առաջին գավառ *Աղձնի* (նաև՝ *Արձն*) հնագույն սեպագիր տեղանվանաձևն է, որն էլ իր հերթին ընկած է նահանգի անվան

²⁶ Սույն աշխատանքում փորձել ենք զուտ լեզվաձագումնաբանական տեսակետից քննել Մենուայի թագավորության ժամանակաշրջանի (Ք.ա. 810-786թթ) բիայնական սեպագիր աղբյուրներում հիշատակվող մի քանի տեղանուններ, որոնք գտնվել կամ ենթադրաբար կարող էին լինել հետագայում ձևավորված Մեծ Հայքի Աղձնիք նահանգի սահմաններում: Հողվածում ներկայացված և Աղձնիքի այլ տեղանունների պատմական աշխարհագրության և տեղադրավայրի մասնավոր խնդիրներին մենք հետագայում կանդրադառնանք առանձին ծավալուն ուսումնասիրությամբ:

²⁷ **Н. В. Арутюнян;** *Корпус урартских клинообразных надписей*, (առնիւտէս՝ **КУКН**) Национальная академия наук Республики Армении, Институт востоковедения, Издательство «Гитутюн» НАН РА, Ереван 2001, (148), строки (22)-(28), стр. 141-142.

հիմքում²⁸։ Աղձն տեղանունը լեզվաբանորեն բաղդատելի է *Աղձք* տեղանվան հետ²⁹, որտեղ առաջինն ունի գրաբարյան *-ն*, իսկ երկրորդը՝ *-ք* վերջավորությունը։ Երկու տեղանունների հիմքում ըստ ամենայնի *աղձ* չվկայված բառարմատն է։ Մեր նախորդ քննությամբ՝ *աղձ* և *արձ* ենթադրյալ արմատները, եթե անգամ չունեն միևնույն լեզվական ծագումը, ապա երկուսն էլ նախապես ունեցել են «ժայռ, վեմ, լեռ, քար» բառիմաստները³⁰։ *Արձ*-ը հանդիպում է գրաբարյան *արձագանգ*, ըստ մեզ՝ նաև *արձան* բառերում և թերևս ներկայացնում է վաղնջահայերենի կամ մեկ այլ լեզվից հնագույն ժամանակներում փոխառված, սակայն երբևէ առանձին չվկայված արմատ³¹։

Խնդիրն այն է, որ հնդեվրոպական մյուս լեզուներում վերոհիշյալ բառարմատները կարծես չունեն իրենց ընդհանուր արմատածագումնաբանական գուգահեռները։ Ուստի դրանք կամ անդրենածին են, այսինքն փոխառվել են այլ լեզվից կամ տեղածին, սակայն ոչ ընդհանուր հնդեվրոպական բառահիմքով։ Այսուհանդերձ, եթե ընդունենք, որ տվյալ բառարմատները հնդեվրոպական ընդհանուր արմատից են, ապա դա կարող է վերաբերել նախալեզվի *sald* կամ *saldio* ձևին, որից ծագում են հայերենի *աղ*, *աղտ* և *աղծ* արմատական բառերը³²։

²⁸ Վ. Խաչատրյան, *Հայկական տեղանունները սեպագիր աղբյուրներում (տեղագրական և ստուգաբանական քննություն)*, Ե., 2012, էջ 23, **Հ. Խուդանյան**, «Ալզի» (*Աղձնիք*) տեղանվան ստուգաբանության հարցերի շուրջ, Պատմաբանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), N1, 2012, էջ 185, ծնթ. 2, 189, նույնի՝ *Հնագույն Աղձնիքի տեղագրության և տնտեսության մասին*, Լրաբեր հասարակական գիտությունների, 2014, N2, էջ 59։

²⁹ Առաջին անգամ *Աղձք* ձևով հիշատակում է Փավստոս Բուզանդը. «Ապա թափեր Վասակ զգերությունն ամենայն զՀայաստան աշխարհին. և գոսկերս թագաւորացն Հայոց, գորս թափեաց Վասակ, հանեալ թաղեցին յամուր ի գելոյ՝ որ Աղձքն անուանին, յՄյարաւոս գաւառին՝ որ կայն ի խինձս ի գոգս ի ծոցս յանձուկս ի դժուարս լերինն մեծի, գոր Արագածն կոչեն»։ **Փաւստոսի Բուզանդացիոյ Պատմութիւնն հայոց**, ի չորս դպրութիւնս, երրորդ տպագրութիւն, Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, յամի 1914 ՌՅԿԴ, գլուխ ԴԴ, էջ 187-188։ Հետագայում աղավաղված տարբերակներն են *Աղց*, *Աղք*, *Աղցից*, *Աղցուց գյուղ* և այլն։ Խորհրդային շրջանում անվանափոխվել է կոչվելով *Չորափ*։ Ինչպես հասկացվում է մեջբերված հատվածից, *Աղձքը* գտնվել է ամրադիր կամ ամրացված վայրում։ Բնակավայրն իրապես գտնվում է քարքարոտ կիրճի ապառաժե բարձունքում, որից էլ ըստ էության ստացել է *Աղձք* անվանումը։

³⁰ **Հ. Խուդանյան**, «Ալզի» (*Աղձնիք*) տեղանվան ստուգաբանության հարցերի շուրջ, էջ 190։

³¹ Նույն տեղում, էջ 189-190։ Տե՛ս նաև **Գ. Զախուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան* (այսուհետև՝ **ՀՄԲ**), Երևան, «Ատոդիկ» հրատարակչություն, 2010, էջ 92, **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, (այսուհետև՝ **ՀԱԲ**), 7 հտ., Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1926, հ. 1, էջ 323, 325։

³² **ՀԱԲ**, հ. 1, էջ 116, **ՀՄԲ**, էջ 38։

Աղձնիքի հարկան պատմական Ծովք նահանգում (ներկայիս Խարբերդի շրջան) հիշատակվում են *Աղձնիք Վարի* և *Աղձնիք Վերին* տեղանունները³³: Բացի այդ, վկայված է նաև *Աղձիզետ* գետանունը, որը հավանաբար կազմված է *աղձ* արմատի սեռական հոլովի և *զետ* բառերի համակցությամբ՝ ըստ երևույթին նշանակելով «քարքարոտ, ժայռերի միջով հոսող գետ, լեռնագետ»³⁴:

Կարծում ենք՝ *արձ* արմատից են կազմված *Արձախ* (նաև՝ *Արձախա աշխարհ*, *Արցախ*)³⁵, Սյունիքի Կովսական գավառի *Արձախամայրի* և Վասպուրականի *Արձախաձոր* տեղանունները: Վերջին երկուսում ակնբախ է *Արձախ* հատկանունը: *Ա(ղ)խ*-ը գրաբարյան բազմիմաստ բառ է, որը նշանակում է «փականք, օղակ, կահ-կարասիք, ունեցվածք, վաճառքի բեռ, ճանապարհորդների բազմություն, ամբոխ, ցեղ, զարմ, ժողովուրդ, մարմնի հորդ»³⁶: Հաշվի առնելով *Արձախ* երկրամասի լեռներով շրջափակված լինելու հանգամանքը՝ կարծում ենք, որ տվյալ դեպքում *ա(ղ)խ* արմատն ունի «փականք, օղակ» իմաստը: Հետևաբար *Արձախ* տեղանունը պետք է կազմված լիներ *արձ*՝ «լեռ, ժայռ» և *ա(ղ)խ* արմատից՝ նշանակելով «լեռներով, ժայռերով փակված, օղակված, ներփակ տարածք/երկրամաս»:

Պատմական Սյունիք նահանգի *Արձանաձոր* և *Արձանաքար* տեղանունները կազմված են *արձան* բառից և համապատասխանաբար *ձոր* և *քար* արմատներից: Ըստ ամենայնի, *արձ* արմատն են կրում Բագրևանդի *Արձնի*, Բարձր Հայքի *Արձն*, Ներքին Ջավախքի *Արձնե* և այլ հին բնակավայրերի անունները՝ իմաստայնորեն կապվելով «ժայռ, լեռ, քար» հասկացությունների հետ:

³³ Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան* (այսուհետև՝ **ՀՀԵՏԲ**), 4 հատորով, հատոր 1, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1986, էջ 181-182:

³⁴ Նույն տեղում, էջ 180:

³⁵ Ամենավաղ հիշատակությունը Փ. Բուզանդինն է. «Հարկաներ գերկիրն Արձախայ մեծապատերազմաւ, գերեր զբազումս ի նոցանէն. և զմնացորդացն առնոյր պանդանդս, և զմնացեալսն ի հարկի կացուցանէր»: Փաւստոսի Բուզանդացիոյ Պատմութիւնն հայոց, ի չորս դրարութիւնս, երրորդ տպագրութիւն, Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, յամի 1832 ՌՄՁԱ, գլովս ԺԲ, էջ 210:

³⁶ ՀԱԲ, հ. 1, էջ 131, ՀՄԲ, էջ 38: Գ. Զահուկյանը գտնում է, որ *ա(ղ)խ* բառը սեմական փոխառություն է՝ անհավանական համարելով Ի. Դյակոնովի տեսակետը, համաձայն որի *ա(ղ)խ*-ը ծագում է խոտիերենի «տիրային» նշանակությամբ *alla(e)lhi* բառից:

Հատկանշական է, որ քննվող տեղանունները, գտնվելով Մեծ Հայքի տարբեր հատվածներում, ըստ էության ենթարկվում են միևնույն ստուգաբանական օրինաչափություններին:

բ) *Քուտումե* «քաղաքը» (^{URU}Qutume) միայն մեկ անգամ է հիշատակվում բիայնական սեպագիր աղբյուրներում: Ժ դ. պատմիչ Թովմա Արծրունու հիշատակած միջնադարյան Կոտոմ բնակավայրն է³⁷: Այդ անունով է հայտնի նաև Ճորոխի աջակողմյան վտակը և նրա ափին գտնվող համանուն գյուղը³⁸:

Պատմական Հայաստանի տարբեր վայրերում հիշատակված *Կոտ* (*Քոթ*), *Կոտա գավառ*, *Կոտայք*, *Կոտան* (*Քոթան*), *Կոտառիճ*, *Կոտեա*, *Կոտեր* (*Քոթեր*), *Կոտիկ*, *Կոտիս*, *Կոտման*, *Կոտնի*, *Կուտ* (*Կուլթ*), *Կուտան* (*Քութան*), *Կուտիս*³⁹ և մի շարք այլ տեղանուններ կարող են ծագումնափմաստաբանական հարաբերության մեջ լինել Կոտոմի հետ:

Վ. Խաչատրյանը Քուտումե տեղանվան մեջ տեսնում է հայերենի հնդեվրոպական *կոյտ*՝ «կույտ» արմատի *կուտ* տարբերակը՝ ենթադրելով, որ բնակավայրը գտնվել է թմբի վրա⁴⁰:

գ) *Շաշնու[ինի]* «երկիրը» (^{KUR}Šašnu[ini]) եզակիորեն վկայակոչվում է միայն բիայնական այս աղբյուրում և նույնացվում Աղձնիքի *Սանասունք* գավառի (*Սասուն*) և նույնանուն բերդի հետ⁴¹:

Ի. Դյակոնովը տվյալ սեպագիր տեղանվան համար առաջարկում է ^{KUR}Šašnu/o ընթերցումը⁴², որը հիշեցնում է *Սասուն* տեղանվան՝ սեռական հոլովով դրված հանրահայտ *Սասնո* ձևը:

Սասուն տեղանվան ծագման և ստուգաբանության առթիվ գոյություն ունեցող տեսակետներն ընդհանուր առմամբ խիստ թեական են: Ըստ մեզ՝ այն կարող է կազմված լինել ենթադրյալ *սաս* արմատից, որը թերևս պահպանվել է *սասան* գրաբարյան բառում: Հ. Աճառյանը վերջինիս տալիս է

³⁷ **О. Караѳезян**; *Город Кутуме урартских источников*, (ՊԲՀ, 1974, N 3, с. 191-192), КУКН, N 148, (24), с. 141-142, прим. 23, с. 144, **Թովմա Արծրունի և Անանուն**, *Պատմություն Արծրունյաց տան* (աշխարհաբար թարգմանությունը՝ Վարդանյան Մ.-ի), Ե., 1985, էջ 460-461:

³⁸ **ՀՀԵՏԲ**, հատոր 3, էջ 227:

³⁹ Նույն տեղում, էջ 224-226, 282-284:

⁴⁰ **Վ. Խաչատրյան**, *Հայկական տեղանունները սեպագիր աղբյուրներում*, էջ 168:

⁴¹ Նույն տեղում, էջ 23, 148, **Յ. Կարազեղեան**, *Հայկական լեռնաշխարհի սեպագիր աղբյուրներում I, Սեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում)*, Ե., 1998, էջ 41, նաև ծնթ. 1 և հղված գրականությունը:

⁴² **GNAUT**, p. 79.

«կանգնած տեղը շարժիլ» նշանակությունը⁴³, ինչից կարելի է հավանաբար բխեցնել, որ *սաս* արմատը պետք է ունենար «շարժ, ցնցում, երկրաշարժ» իմաստները: Աղձնիքը, ի դեմս Հայկական Տավրոսի, իրենից երկրաշարժական գոտի է ներկայացնում, որտեղ հնուց անտի հզոր երկրացնցումներ են տեղի են ունեցել:

Պատմալեզվական որոշ առնչակցություն կարելի է տեսնել *Մասունի* և Աղձնիքի (Բիթլիսի նահանգ) *Մասենց*, *Մասիկ* և *Մասնուտ* գյուղանունների միջև⁴⁴:

2. Վանի Սուրբ Պողոս եկեղեցու պատի շարվածքից հայտնաբերված արձանագրությունում հիշատակվում են *Բաբանախի*, *Ուսուսունի*, *Սրա/փույանի* տեղանունները⁴⁵:

ա) *Բաբանախի* «երկիրը» (^{KUR}Babanahi) միայն մեկ անգամ հիշատակվում է Վանի թագավորության այս սեպագիր վավերագրում: Տեղադրվում է Ալզի «երկրի» հարևանությամբ՝ Արևմտյան Տիգրիս և Ջերմ գետերի (Արևելյան Տիգրիս, Բոհտան) միախառնման վայրում, նույնացվելով ժամանակակից Թել-Ֆաֆան բնակավայրի հետ⁴⁶: Այսպիսով, *Բաբանախի* մի հատվածը գտնվել է Աղձնիքի ծայր հարավարևելյան անկյունում՝ թերևս ծավալվելով նաև տարբեր աշխարհագրական ուղղություններով:

Համաձայն որոշ հեղինակավոր մասնագետների՝ *Բաբանախի* տեղանունը կրում է խուռիերեն *babané-բ աբ ա՛* «լեռ» բառը և նշանակում է «լեռնային»⁴⁷: Թեև տվյալ պարագայում սույն տեղանունը որոշակի է իր տեղադրությամբ, այդուհանդերձ, այն ընդհանուր առմամբ կարող է վերաբերել նաև Հայկական լեռնաշխարհի ցանկացած լեռնային շրջանի:

Գ. Ղափանցյանը ժամանակին նկատել է խուռաուրարտական *babané-բաբա* և հին հայերենի *բաբայ* «բլուր»⁴⁸ նշանակությամբ բառերի միջև ի-

⁴³ ՀԱՔ, հ. 1, էջ 177, Գ. Աւետիքեան, Խ. Միսրէլեան, Մ. Աւգերեան, *Նոր Բաղդիրը Հայկազեան Լեզուի* (այսուհետև՝ ՆԲՀԼ), Տպարան ի Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1836, հ. 2, էջ 696:

⁴⁴ ՀՀԵՏԲ, 1986, էջ 503, 505:

⁴⁵ КУКН; (44), Верхняя сторона, строки (5)-(11), стр. 64-65.

⁴⁶ Н. В. А р у т ю н я н; *Топонимика Урарту* (այսուհետև՝ ТУ), Ереван, 1985, с. 50.

⁴⁷ I. M. Diakonoff and S. M. Kashkai, *Geographical Names According to Urartian Texts* (այսուհետև՝ GNAUT), Wiesbaden, 1981, p. 17, М. Л. Х а ч и к я н; *Хурритский и урартский языки*. Ереван. 1985, с. 31, 49. Տե՛ս նաև М. С. Astour, *Semites and Hurrians in Northern Transjordan, Studies on the Civilization and Culture of Nuzi and the Hurrians, General Studies and Excavations at Nuzi 9/1*, edited by D. Lowen and M. A. Morrison, Volume 2, p. 54.

⁴⁸ ՀԱՔ, հ. 1, էջ 372, ՀԱՔ. էջ 109:

մաստային կապը, որը նա աղերսում է նաև Մհերի դռան արձանագրությունում վկայակոչվող ⁴⁹Baba դիցանվան հետ⁴⁹: Միննույն կամ մոտավոր իմաստ ունի նաև ուրարտերենի ^{SADU}*babani* բառը⁵⁰:

*Բաբանախի*ն գտնվել է Հայկական լեռնաշխարհի՝ խուռիերենի լեզվատարածության սահմանակցող հարավարևմտյան ծայրամասում, ինչպես արդեն նշվեց, *Ալզի* «երկրի» հարևանությամբ: Կրելով «Ժայռ, լեռ» և «լեռնային» իմաստները՝ այս տեղանունները ևս մեկ անգամ փոխադարձաբար ամրապնդում են միմյանց միջև եղած իմաստաձագումնաբանական ընդհանրությունները և մատնանշում տվյալ աշխարհագրական միջավայրի առանձնահատկությունները:

Babané-բաբայ արմատներն են թերևս հիշեցնում Սյունիք նահանգի Ճահուկ գավառի միջնադարյան *Բաբանք* (նաև՝ *Բաբոնք*, *Բաբունք*) բնակավայրը և Փամբակի լեռնաշղթայի *Բաբան* լեռնագագաթը⁵¹:

բ) *Ուսուսուա[նի]* «երկիրը» (^{KUR}Ususua[ni]) եզակի հիշատակությամբ հանդիպում է միայն բիայնական այս սեպագիր հաղորդման մեջ: Ընդհանուր առմամբ տեղադրվում է Վանա լճից հարավ-արևմուտք՝ Դիրգու և Ուլիբա «երկրների» հարևանությամբ կամ Ուրմե (Արմե)-Շուպրիայից հարավ-արևելք՝ *Բաբանախի* և *Ուլիբա* երկրների միջև⁵², այսինքն պատմական Աղձնիքի տարածքում:

Վ. Խաչատրյանը *Ուսուսուա* «երկիրը» տեղադրում է Մասունի Մոտկան գավառի տարածքում՝ գտնելով նաև, որ տեղանունը կազմված է հայերենի հնդեվրոպական *ուս* արմատի կրկնությամբ⁵³: Հավելենք, որ *ուս* բառը դեռևս գրաբարյան շրջանում ունեցել է նաև «լեռան լանջ, լեռնալանջ, սարալանջ», ինչպես նաև «բլուր» իմաստները՝ ծագելով հնդեվրոպական նախալեզվի *omso* ձևից⁵⁴:

Ըստ տեղադրության՝ *Ուսուսուան* թերևս գտնվել է Հայկական Տավրոսի վրա և կարող էր ծագել լեռնահամակարգին կամ տվյալ տեղանքին բնորոշ նկարագրությունից:

⁴⁹ Ս. Գրիգորյան, *Ուրարտա-հայկական լեզվաաղերսները ակադ. Գր. Ղափանցյանի աշխատություններում*, Մերձավոր Արևելք III, (պատմություն, քաղաքականություն, մշակույթ), ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, հոդվածների ժողովածու, Երևան, 2006, էջ 12, **Գ. Ա. Ղափանցյան**, *Հայոց լեզվի պատմություն*, Երևան, 1961, էջ 133:

⁵⁰ **ΚΥΚΗ**, Лексика урартского языка, տե՛ս ^{SADU}*babani* բառը:

⁵¹ **ՀՀՇՏԲ**, հ. 1, էջ 525, 529, 530:

⁵² **TY**; c. 213, **GNAUT**, p. 96.

⁵³ Վ. Խաչատրյան, *Հայկական տեղանունները սեպագիր աղբյուրներում*, էջ 161:

⁵⁴ **ՀԱԲ**, հ. 3, էջ 609, **ՀՄԲ**. էջ 752:

Պատմական Հայաստանի մի շարք տեղանուններ, ինչպես օրինակ, Սյունիք աշխարհի Ծղուկ գավառի *Ուսակ/ին* /և Տուրուբերանի *Ուսապսակ* վայրերը, Արսիանի լեռնաշղթայի *Ուսոտ* լեռը, Բաբերդի գավառակի *Ուսուսել* և Վանի նահանգի Կարճկան գավառակի *Ուսունց* բնակավայրերը⁵⁵ կարող են որոշակի ծագումնաբանական կամ իմաստաբանական հարաբերություն ունենալ *Ուսուսուա* «երկրանվան» հետ:

գ) *Արպ/փու/յա/նի* «քաղաքը» (^{URU} Arpaia[ni]) միայն մեկ անգամ է հիշատակվում բիայնական սեպագիր աղբյուրներում: Վկայակոչված է որպես *Ուսուսուա* «երկրի» «քաղաք»:

Ն. Հարությունյանը *Արպ/փու/յա/ն* տեղադրում է Վանա լճից հարավ-արևմուտք՝ Ուլիքա և Դիրգու «երկրների» միջև, իսկ Վ. Խաչատրյանն այն նույնացնում է Մոտկան գավառի Արփի գյուղի հետ⁵⁶: Թվարկելով մի շարք հայկական տեղանուններ՝ Վ. Խաչատրյանը գտնում է, որ ինչպես *Արպ/փու/յա/ն*, այնպես և դրանք իրենց կազմում ունեն հին հայերենի *արփ*՝ «եթեր» նշանակությամբ արմատը⁵⁷: Չնայած անհայտ ծագում ունենալուն այն նշանակում է նաև «արեգակը»՝ որպես լույսի աղբյուր, լույս, լուսեղեն տարածություն»⁵⁸:

Ի. Դյակոնովն առաջարկում է *Արփ/բու/յա/* (^{URU} Arp/bua) ընթերցումը՝ բնականաբար հաշվի առնելով սեպագիր համակարգին բնորոշ հնչյունական բազմարժեքությունը⁵⁹: Ըստ մեզ՝ այս տեղանվան հիմքում կարելի է տեսնել ոչ միայն *արփ*, այլ ավելի շուտ *արբ* արմատը, որը կապվում է «ըմպել, խմել» և «գինարբութ» նշանակությունների հետ⁶⁰: Հ. Աճառյանն ու Գ. Զահուկյանն այն բխեցնում են հնդեվրոպական նախալեզվի *srbh* ձևից, սակայն միևնույն ժամանակ Հ. Աճառյանի մոտ կարդում ենք թերևս մեկ այլ կարծիք, ըստ որի՝ հայերենի *արբ*, ումբ և *ըմպ* ձևերը գալիս են նախնական *աբ*, *ամ*՝ «ջուր, ըմպելիք» արմատից⁶¹:

Ասուրական սեպագիր աղբյուրներում հիշատակվում են Ադձնիքից արևելք գտնվող *Ներքին Խաբխի* «երկրի» *Արբակ(կ)ու/ի* և

⁵⁵ ՀՀՇՏԲ, հ. 5, էջ 204-206:

⁵⁶ ԿԿ; Կ. 40, Վ. Խաչատրյան, *Հայկական տեղանունները սեպագիր աղբյուրներում*, էջ 94:

⁵⁷ Վ. Խաչատրյան, *Հայկական տեղանունները սեպագիր աղբյուրներում*, էջ 94:

⁵⁸ ՀԱԲ, էջ 97, Մտեփան Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան* (այսուհետև՝ ՀԲԲ), 4 հատորով, հատոր 1, Հայկական ՄՍՄԻ պետական հրատարակչություն, Երևան, 1944, էջ 286:

⁵⁹ GNAUT, p. 11.

⁶⁰ ՀԱԲ, հ. 1, էջ 298-299, ՀԱԲ, էջ 86:

⁶¹ Նույն տեղում՝ ՀԱԲ, հ. 1, էջ 298-299, ՀԱԲ, էջ 86:

Արմարիլի «երկրի» *Արբու* բնակավայրերը⁶²: Հատկապես վերջինս իր հնչյունական կազմությամբ հիշեցնում է Ուսուսուա «երկրի» Արբ/-փույա բնակավայրը:

Պատմական Հայաստանում *արփի* կամ *արբ* արմատներով բազում տեղանուններ են վկայված, ինչպես օրինակ, Սյունիք նահանգի Վայոց ձոր գավառի *Արբանյալ* կամ *Արփանյալ* բնակավայրը (ներկայիս Վայոց ձորի մարզի Արենի գյուղը), Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհի Եկեղյաց գավառում գտնվող *Արբենուտ* աղբյուրը, Սասունի Մոտկան գավառակի *Արբի* գյուղը, Արածանիի ավազանի մի փոքրիկ գետակի մոտ՝ լեռնալանջի վրա գտնվող *Արբունք* գյուղը, Կարսի մարզում՝ Կուր գետի ակունքի շրջանում *Արփաշեն* գյուղը և այլն⁶³:

Հարկ է նկատել, որ վերը բերված և բազում այլ տեղանուններ անմիջականորեն առնչվում են ջրային միջավայրի՝ գետի, աղբյուրի, վտակի կամ լճի հետ: Այսպիսով, չհերքելով որոշ տեղանուններում «երթ» նշանակությամբ *արփի* արմատի առկայությունը, կարծում ենք, որ գերազանցապես *արբ* արմատից են կազմված Հայկական լեռնաշխարհի մի շարք տեղանուններ ու հատկապես ջրանուններ: Ավելին՝ գտնում ենք, որ տվյալ վայրերին այդ անունները հիմնականում փոխանցվել են հենց ջրանուններից: Այս ամենից կարելի է գալ այն համոզմանը, որ *արբ* արմատը, ամենայն հավանականությամբ, վաղնջահայերենում ունեցել է «ջուր, հեղուկ» կամ «ջրով, հեղուկով լի/հագեճալ, լիանալ» նշանակությունը՝ հետագայում ձեռք բերելով նաև «ջրային տարածք», «խմել, ըմպել», «գինարբուք» իմաստները: Բացառված չէ, որ հնագույն ժամանակներում *արբ* արմատը կրող հատկանունները որոշակի աղերսներ ունեցած լինեն նաև ջրի սրբազան պաշտամունքի հետ:

Անհրաժեշտ է նշել, որ հաճախ *արբ* արմատը կրող տեղանուններն ու ջրանունները ներկայացված են *արփի* ուղղագրությամբ, ինչը երբեմն կարող է շփոթության մեջ գցել:

Հայկական լեռնաշխարհում հիշատակված հայտնի ջրանուններից են Արաքսի ձախակողմյան վտակ *Արփա* գետը (նաև՝ Արփանյալ), *Արփա* կամ *Արփի* լիճը Ախուրյան գետի ակունքում, *Արփա* լճակը Գեղամա լեռների շրջանում, Սասունի *Արփի* գետակը և այլն⁶⁴:

⁶² **ԿՄ**, Կ, 32.

⁶³ **ՀՀԵՏԲ**, էջ 402, 512:

⁶⁴ **ՀՀԵՏԲ**, էջ 510-511, 514:

Այսուամենայնիվ, ցայժմ գտնված Վանի թագավորության սեպագիր արձանագրություններում բացակայում են Աղձնիքին առնչվող գետանուններ: Մասնավորապես այս պատմաաշխարհագրական տարածքի արևմտյան և հարավարևմտյան բնական սահմանը՝ Տիգրիսը, հիշատակված չէ Բիայնայի տիրակալների կողմից, ինչը որոշ առումով զարմանալի է:

Հատկանշական է, որ այդ վավերագրերում մանրատեղանուններ ևս չկան՝ չհաշված հազվադեպ հանդիպող սակավաթիվ ցեղանունները կամ տոհմանունները և դրանց կողմից զբաղեցված տարածքները:

Ի ամփոփումն՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ թեև Մենուայի ժամանակաշրջանով թվագրվող սեպագիր աղբյուրներում Աղձնիքի տեղանունների քանակն անցնում է շուրջ երկու տասնյակը, սույն պատմաստուգաբանական քննությունը վերաբերում է դրանցից ընդամենը վեցին: Հենվելով մի շարք լեզվաբանական տվյալների վրա՝ ձգտել ենք ցույց տալ, որ քննվող տեղանուններից մի քանիսը կարող էին ծագել ինչպես վաղնջահայերենից և իրենց հիմքում ունենալ հնդեվրոպական արմատներ, այնպես էլ խուրիերենից: Մյուս կողմից՝ տվյալ ուսումնասիրությունը նաև փորձ է հաստատելու Վանի թագավորության սեպագիր և միջնադարյան հայկական տեղանունների հնարավոր ընդհանրական ծագումնախմաստաբանական կապը:

Khudanyan Harutyun- The first records on the toponyms of Aghdznik in the cuneiform inscriptions of the kingdom of Van (Historical Linguistics-Etymological Study).- The first records on the toponyms of Aghdznik in the Urartian cuneiform inscriptions are dated by the reign period of king Menua (810-786 BC). They mainly present so-called “countries” and “towns” which are mentioned in relation with Menua’s military campaign to the south-western part of the Armenian Highlands. In the result of the historical linguistics and etymological study it may be assumed that some of the cuneiform toponyms should have their parallels with medieval Armenian ones bearing both ancient Hurrian and Armenian roots of Indo-European origin.

Арутюн Худанян- Первые упоминания топонимов Алзника в клинописных источниках Ванского царства (Историко-лингвистический-этимологический анализ). - Первые упоминания топонимов Алзника в урартских клинописных надписях датируются периодом правления царя Менуа (810-786 гг. до н.э.). В основном они представляют так называемые “страны” и

“города”, которые упоминаются в связи с военными компаниями Менуа в юго-западную часть Армянского нагорья. В результате историко-лингвистического и этимологического анализа предполагается, что клинописные топонимы имеют свои параллели со средневековыми армянскими топонимами, которые происходят от хурритских или армянских корней индоевропейского происхождения.

**ԳԳ ԿԱՂԱՊԱՐՈՎ ԿՐԿՆԱՎՈՐ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

Բառակազմության վերլուծական տիպին հատուկ եղանակներից մեկը կրկնումն է: Հ. Աճառյանի բնորոշմամբ՝ «կրկնությունը, իբր բառակազմության շատ հասարակ մի միջոց, ամեն լեզվի մեջ էլ գործածական է...»⁶⁵: Բառակրկնությամբ բառապաշարի հարստացումը եղել է գործուն երևույթ հայերենի պատմական զարգացման ողջ ընթացքում:

Սույն հոդվածի նպատակն է հայերենի և անգլերենի ԳԳ կաղապարով կրկնավոր վերլուծական բաղադրությունների զուգադրական քննությունը: Ըստ Գ. Ջահուկյանի՝ կրկնության անդամներից մեկը կրկնության *հիմքն* է կամ *կրկնյալը*, իսկ մյուսը՝ *նմանակը* կամ *կրկնորդը*: Ելնելով նրանից, որ կրկնությունների մեծ մասի մեջ առաջին բաղադրիչը կրկնյալն է, սակայն մի շարք դեպքերում իբրև այդպիսին հանդես է գալիս երկրորդ բաղադրիչը, առանձնացվում է դրանց երկու տիպ՝ AA₁ և A₁A, որոնց մեջ A-ով նշանակված է *կրկնյալը*, իսկ A₁-ով՝ *կրկնորդը*: Ժամանակակից հայերենում կրկնության գործուն և արտադրողական տիպը AA₁-ն է⁶⁶:

Անգլերենի բառակրկնությունները բնորոշ են լեզվի գրական և խոսակցական տարբերակներին, սակայն դրանց մեծ մասը, այնուամենայնիվ, ավելի հատուկ է խոսակցական լեզվին, ժարգոնային բառապաշարին ու մանկական խոսքին: Անգլերենում գերակշռող են վերլուծական տիպի կրկնությունները, իսկ համադրական տիպի կրկնավորները խիստ հազվադեպ են, հետևաբար երկու լեզուների կրկնավոր կազմությունների միջև տիպաբանական ընդհանրությունների կամ տարբերությունների հաստատման տեսանկյունից առավել նպատակահարմար է զուգադրել հենց վերլուծական տիպի կառույցները: Անգլերենն այնքան հարուստ է

⁶⁵ Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների*, հ. 3, Եր., 1957, էջ 69:

⁶⁶ Տե՛ս Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, Եր., 1989, էջ 215:

կրկնավոր բաղադրություններով, որ դեռևս 1866թ. Հ. Ուիթլին կազմել է անգլերենի կրկնավորների մի ընդգրկուն բառարան⁶⁷:

Հայերենում բազմազան են Գ+Գ կաղապարով կրկնավոր վերլուծական բաղադրությունները. այս կաղապարն անուն խոսքի մասերից մակբայներ կազմելու հիմնական եղանակներից է: Անգլերենում ևս դրանց թիվը քիչ չէ:

Ըստ բաղադրիչների կապակցման միջոցի՝ կրկնավոր բաղադրությունները բաժանվում են *հարակցական*, *շաղկապական* և *նախդրական* տեսակների.

1. **Գ+Գ կաղապարով հարակցական** կրկնավոր բաղադրություններ են հայերենում՝ *այլակ-այլակ*, *բուռ-բուռ*, *գյուղ-գյուղ*, *դուլլ-դուլլ*, *թե-րթ-թերթ*, *կաթիլ-կաթիլ*, *կոհակ-կոհակ*, *ճար-ճարակ*, *ճաք-ճաք*, *ձեղքոռ-ձեղքոռ* (*ձեղք-ձեղք*), *ճուղ-ճուղ*⁶⁸ (*փունջ-փունջ*), *պտղունց-պտղունց*, *ջոկատ-ջոկատ*, *ցեղ-ցեղ* և այլն, անգլերենում՝ *hodge-podge/hotch-potch* «խառնիխուռն բաներ», *hubble-bubble* «զլզլակ», *hugger-mugger* «խառնաշփոթություն», *niddle-noddle* «զլխով հավանություն տալը», *prattle-prattle/bibble-babble* «անիմաստ զրույց»⁶⁹, *ship-shape* «տեղը տեղին» և այլն: Անգլերենում N+N կաղապարով հարակցական կրկնություններ հանդիպում են նաև մանկական խոսքում, ինչպես՝ *night-night* «քարի զիշեր»:

⁶⁷ H. Wheatley, *A Dictionary of Reduplicated Words in the English Language*, London, 1866:

⁶⁸ Նման բառերը հատուկ են ժողովրդախոսակցական լեզվին. թեև դրանք այսօրվա գրական նորմին չեն համապատասխանում, սակայն հայերենի բառազանձի մասն են կազմում:

⁶⁹ Անգլերենում հաճախ անհրաժեշտ է լինում անդրադառնալ այս կամ այն կրկնավորի ծագման պատմությանը՝ պարզելու, թե ինչպես է այն առաջացել, ինչ խոսքիմասային պատկանելություն և իմաստ են ունեցել դրա բաղադրիչները, քանի որ կրկնավորները կարող են ամենատարբեր մեկնաբանություններ ստանալ. օրինակ՝ *pitter-patter* «1. հաճախակի թեթև թխկթխկոց, 2. «հաճախակիորեն և թեթև» նշանակությամբ կրկնության ծագման վերաբերյալ կա երկու վարկած. այն ծագել է. ա) *Pater noster* «Հայր մեր» աղոթք, տերոդորմյա» բառի՝ արագ-արագ աղոթելու իմաստից, բ) ուշ միջնադարյան *patter/pat* «1. հաճախակի թխկթխկոց, թփթփոց, 2. հաճախակի, թեթև թփթփացնել» բառից՝ նմանաձայնական կրկնության (*onomatopoeic repetition*) եղանակով (տե՛ս H. Wheatley, *նշվ. աշխ.*, էջ 6):

Հաճախ բառակրկնությունների բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունը որոշելիս բախվում ենք անվանաբայական համանունության խնդրին, օրինակ՝ *niddle-noddle* «1. զխտվ անել, հավանություն տալ» *կրկնավորի* դեպքում միայն բառի ծագման պատմությունն ուսումնասիրելուց հետո է պարզ դառնում, որ այն կազմվել է *noddle* «զլուխ» գոյականից, [**o-i**] հնչյունափոխությամբ և ոչ թե *nod* «զլխով անել» բայից (տե՛ս <http://www.oxford-dictionaries.com/definition/english/niddle-noddle>—*Oxford Dictionaries*):

2. **Շաղկապական** կրկնավորները հայերենում կազմվում են *ու*, հազվադեպ նաև *և* շակապներով, իսկ անգլերենում՝ *and* շաղկապի միջոցով: Գ+ու (և)+Գ կաղապարով շաղկապական կրկնավորներ են հայերենում՝ *թոհ և բոհ, ժանգ ու ժունգ, խազ ու մազ, ծալ ու ծալ, կապ ու կուպ, կուզ ու կուզ, հանգ ու հունգ, ճախ ու ճուխ* և այլն, անգլերենում՝ *half and half* «կես-կես, հավասարապես», *neck and neck* «կողք կողքի (վազքի ժամանակ)», *party and party (costs)* «պետական դրամական (պարզև)» և այլն:

3. **Նախդրական** կրկնավորները զուտ գրական ձևեր են և արդի արևելահայերենին են ժառանգվել գրաբարից⁷⁰: Դրանք են *առ, ընդ և ի* նախդիրներով կազմված կապակցությունները: Ավելի հաճախադեպ են *առ* նախդրով, երբեմն էլ *ի* նախդրով գոյականական կրկնությունները, օրինակ՝ *անդամ առ անդամ, բառ առ բառ, դեզ առ դեզ, երես առ երես, էջ առ էջ, ժամ առ ժամ, ժամանակ առ ժամանակ, լեզեռն առ լեզեռն, խավ առ խավ, կոհակ առ կոհակ, ճակատ առ ճակատ, տող առ տող, ծալ ի ծալ, ծայր ի ծայր, շար ի շար* և այլն⁷¹: Անգլերենում նախդրական կրկնավոր բաղադրությունները կազմվում են *in, on, to, by, for* և այլ նախդիրներով⁷², ինչպես՝ *N-in-N*՝ *arm-in-arm* «թև թևի», *hand-in-hand* «ձեռք ձեռքի», *N-on-N*՝ *body-on-body* «սուսերամարտում մերձամարտ», *chest-on-chest* (ամրկ.) «բարձր կոմոդ՝ դարակներով պահարան», *year-on-year* «նախորդ տարվա համեմատությամբ հաշվարկված», *N-to-N*՝ *bumper-to-bumper* «կիպ», *coast-to-coast* «ափեափ», *eyeball-to-eyeball* «երես առ երես», *hand-to-hand* «ամերիկյան մարտաձև», *head-to-head* «բանավեճ (երկու կողմերի միջև)», *heart-to-heart* «անկեղծ, մտերմիկ», *mouth-to-mouth* «բերան բերանի (արհեստական շնչառության մասին)», *N-by-N*՝ *day-by-day* «օր օրի», *bit by*

⁷⁰ Տե՛ս **Լ. Հովսեփյան**, Կրկնությունը գրաբարի բառակազմության մեջ, *Slovo*, vol. 26-27 (2001-2002), “*Actes du Sixième Colloque international de Linguistique arménienne (INALCO-Académie des Inscriptions et Belles-Lettres 5-9 juillet 1999)*”, Paris, 2002, էջ 169-178:

⁷¹ շայերենի զարգացման ներկայիս փուլում նախդրական վերլուծական կրկնավորները դրսևորում են սերտաճելու և համադրական բարդությունների վերածվելու միտում. այդ դեպքում հիմնականում *առ* և *ընդ* նախդիրներն անփոփոխ են մնում, իսկ *ի* նախդիրը դառնում է *է*. այսպես օրինակ՝ *թափ ընդ թափ/թափընդթափ, ուս ընդ ուս/ուսընդուս, տող առ տող/տողառտող, փոխ ի փոխ/փոխեփոխ, շար ի շար/շարեշար, ժամ ի ժամ/ժամեժամ* և այլն (տե՛ս **Ա. Գաբայետյան**, *Վերլուծական կրկնավոր բարդությունները ժամանակակից հայերենում*, ՊԲՀ Մ 2, Եր., 2005, էջ 265):

⁷² Տե՛ս **Գ. Ambardaryan**, *Semantic-Typological Analysis of Reduplicated Formations (based on the material of the Armenian, Russian, English Languages)*, Gyumri, 2013, էջ 58:

bit//brick by brick//piece-by-piece «աստիճանաբար», *play-by-play* «սպորտային խաղի մանրամասն մեկնաբանություն», *side by side* «կողք կողքի», *step-by-step* «քայլ առ քայլ», *N-for-N letter-for-letter* «տառացի», *word-for-word* «բառացի», *N-till-N' computer-till-computer* «համակարգիչ առ համակարգիչ» և այլն:

Գ+Գ բառակրկնությունների բաղադրիչները կարող են անփոփոխ մնալ կամ ենթարկվել հնչյունական զանազան փոփոխությունների: Փոփոխությունների է ենթարկվում հիմնականում երկրորդ բաղադրիչը՝ կրկնորդը: Անհնչյունափոխ կրկնություններ են՝ *բզիկ-բզիկ, բլիթ-բլիթ, գլուկ-գլուկ, դար ու դար, դեզ-դեզ, երփն-երփն, թույր-թույր, խուրձ-խուրձ, ծվեն-ծվեն, շարք-շարք, պուտ-պուտ* և այլն, իսկ անգլերենում հիմնականում բաղադրիչներից մեկը փոփոխված է, հազվադեպ են անհնչյունափոխ բաղադրիչներով կրկնությունները, ինչպես՝ *goody-goody* «առաքինի ձևացող մարդ»:

Երկու լեզուներում հնչյունափոխված բաղադրիչներով Գ+Գ կրկնություններում տեղի են ունենում հնչյունական հետևյալ փոփոխությունները.

1. Երկրորդ բաղադրիչի ձայնավորի/ձայնավորների հնչյունափոխություն, հիմնականում *ա>ու*, երբեմն նաև *ա>ե, ե>ու* հնչյունափոխությամբ, ինչպես՝ *ծակ-ծուկ, ճար ու ճուր, շախ ու շուխ, շառ ու շուռ, ձեն-ձուն, փասա-փուսա, ժանգ ու ժենգ, դեղ ու դուղ* և այլն, ինչպես նաև երկու ձայնավորի փոփոխությամբ՝ *աղքատ-ուղքուտ, լակոտ-լուկուտ, ջահել-ջուհուկ, փալաս-փուլուս* և այլն: Անգլերենին հիմնականում բնորոշ են [i]-[æ] և [i]-[o] հնչյունափոխությամբ կրկնավորները, որոնք կոչվում են *ablaut combinations* (ձայնդարձային կապակցություններ), ինչպես՝ ա) [i]-[æ]- *chit-chat* «շատախոսություն», *fiddle-faddle* «անկարևոր բաներ», *flim-flam* «խարդախություն», *mish-mash* «խառնաշփոթ», *riff-raff* «աչքի անցկացնելը», *zig-zag* «բեկյալ գիծ», բ) [i]-[o]- *ding-dong* «զանգերի դողանջ», *flip-flop* «ոտիին հողաթափ», *ping-pong* «սեղանի թենիս», *sing-song* «միապաղաղ», *tip-top* «առաջնակարգ» և այլն:

2. Երկրորդ բաղադրիչի բառասկզբի բաղաձայնը փոխարինվում է մեկ այլ բաղաձայնով՝ հիմնականում *մ*-ով, ինչպես՝ *աքիս-մաքիս, բան-ման, գիծ ու միծ, գոգլի-մոգլի, թուք ու մուք, հուր ու մուր, սագ ու մագ, վնաս ու մնաս*, երբեմն նաև այլ բաղաձայնով՝ *գեկ ու փեկ, գրոց-բրոց, լոթի-փոթի, ճիծ ու պիծ/ճիծ ու բիծ, նագ ու բագ, շենիկ-մենիկ* և այլն: Անգլերենում երկրորդ բաղադրիչի առաջին բաղաձայնի հնչյուն-

նափոխությամբ կրկնավորները շատ են հանդիպում հանգավորված կապակցությունների (rhyme combinations⁷³) շարքում, ինչպես՝ *fuddy-duddy* «հնաճ մարդ», *handy-dandy* «մանկական խաղ», *hocus-pocus* «աճապարություն», *popsy-wopsy* «փոքրիկ աղջիկ», *rowdy-dowdy* «կոժարար մարդ» և այլն: Սրանք նաև կոչվում են *կեղծ (շինծու)* բարդություններ, քանի որ դրանց մի մասի իմաստն առհասարակ պատճառաբանված չէ. հաճախ երկու բաղադրիչներն էլ *կեղծ (շինծու)* ձևեր են: Դրանք հեշտ է շփոթել սովորական կրկնավոր բաղադրությունների հետ, որոնց բաղադրիչները, ի տարբերություն հանգավորվածների, լի-իմաստ բառեր են, ոչ թե շինծու ձևեր. այս կազմություններում փոխվում է ոչ թե երկրորդ բաղադրիչի առաջին բաղաձայնը, այլ երկրորդ բաղադրիչը բոլորովին այլ բառ է, պարզապես սրանց բաղադրիչները ևս հանգավորված են, ինչպես՝ *chug-drug* «պայթյունի ձայն», *clap-trap* «անմիտ զրույց», *fender-bender* «թեթև բախում», *hugger-mugger* «խառնաշփոթ», *hurry-scurry* «իրարանցում», *razzle-dazzle* «անբովանդակ, ցուցադրական բան», *slang-whang* «հայիոյախոսություն»⁷⁴:

3. Անգլերենում կրկնորդի առաջին բաղաձայնը կարող է փոխվել *shm* կամ *schm* հնչյունակապակցության, ինչպես՝ *breakfast-shm(r)akfast* «նախաճաշ-մախաճաշ», *child-schmild* «երեխա-մերեխա», *crisis-shmisis* «ճրգնաժամ-մգնաժամ», *table-shmable* «սեղան-մեղան» և այլն: Կրկնորդի առաջին բաղաձայնը կարող է փոխարինվել մեկ այլ բաղաձայնով կամ տառակապակցությամբ նաև հատուկ անունների դեպքում, ինչպես՝ *Charlie-Parlie*, *Pedro-Schmedro* և այլն: Կրկնության այս տեսակն անգլերենին է անցել եբրայերենից, որում *s(c)hm* հնչյունակապակցությամբ սկսվող բառերը բացասական կամ արհամարհական, իսկ երբեմն նաև հումորային իմաստ ունեն⁷⁵:

4. Երկրորդ բաղադրիչի սկզբում ավելանում է որևէ բաղաձայն՝ մեծ մասամբ *մ*, որոշ դեպքերում էլ *չ*, *ճ*, *պ* և այլ բաղաձայններ՝ *ախտ ու մախտ*, *աղբատ-մաղբատ*, *աման-չաման*, *առակ-պառակ*, *ավել-մավել*, *ընկեր-մընկեր*, *օրենք-մօրենք* և այլն: Երկրորդ բաղադրիչի սկզբում հայերենում կարող է ավելանալ նաև գրաբարյան *զ* նախդիրը, ինչպես՝ *ամսյ ու զամսյ*, *արդ ու զարդ*, *արմանք-զարմանք* և այլն: Անգլերենում

⁷³ Տե՛ս **И. Арнольд**, Лексикология современного английского языка, М., 1986, էջ 130-131:

⁷⁴ Տե՛ս **E. Mariello**, Extra-Grammatical Morphology in English: Abbreviations, Blends, Reduplicatives and Related Phenomena, "Topics in English Linguistics", Vol. 82, Berlin/Boston, 2013, էջ 154:

⁷⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 153, էջ 161:

այդպիսիք են, օրինակ՝ *apple-shmapple* «խնձոր-մնձոր», *art-shmart* «արվեստ-մարվեստ», *Europe-Shmeurope* «Եվրոպա-մեվրոպա», *moon-schmoon* «լուսին-մուսին», *opinion-shmopinion* «կարծիք-մարծիք» և այլ կրկնություններ, որոնց դեպքում կրկնորդի սկզբում ավելանում է մի ամբողջ տառակապակցություն:

5. Առաջին բաղադրիչի սկզբում ընկնում է առաջին բաղաձայնը, ինչպես՝ *ալան-թալան*, *ալաս-փալաս*, *ալոց-գալոց*, *ախտ ու բախտ*, *աբան-շարան*, *արն-բարն*, *արուն-գարունք* (*գարնանային օրեր*) և այլն⁷⁶: Անգլերենում մեզ նման կառույցներ չհանդիպեցին: Հաճախ միայն առաջին հայացքից կարող է թվալ, թե կրկնավորի մեջ ընկել է առաջին բաղադրիչի սկզբի բաղաձայնը, սակայն երբ անդրադառնում ենք բառի պատմությանը, պարզվում է, որ այդպես չէ. օրինակ՝ *eastie-wastie* «անկայուն, անվստահելի մարդ» կրկնավորի դեպքում թվում է, թե առաջին բաղադրիչի *ա*-ն է ընկել, սակայն իրականում կրկնավորի իմաստն է՝ “one who veers from east to west” — «մարդ, որը մերթ դեպի արևելք, մերթ դեպի արևմուտք է գնում»⁷⁷, որ նշանակում է՝ կրկնությունը կազմված է *east* և *west* առանձին, ինքնուրույն բառերից:

Հայերենում կան հոլովված բաղադրիչ(ներ)ով կրկնավորներ (*առքով-փառքով*, *շախով-շուխով*): Կան այնպիսիք, որոնց հիմքում թեև բուն բառակազմական գործընթացներ ընկած չեն, սակայն դրանք բառայնացել են շարահյուսական կապակցությունների հետագա կայունացման եղանակով, հետևաբար կարող են համարվել քերականական ձևավորմամբ կրկնավոր բաղադրություններ, որոնց 1. առաջին բաղադրիչը դրված է՝ ա) բացառական հոլովով՝ *գյուղից գյուղ*, *թոռից թոռ*, *թփից թուփ*, *ժամից ժամ*, *ծովից ծով*, *շենից շեն*, *ցեղից ցեղ* և այլն⁷⁸, բ) գործիական հոլովով՝ *տեղով տեղ*, գ) գրաբարյան սեռական-տրական հոլովաձևով՝ *առկոց առակ*, *արքայից արքա*, *իշխանաց իշխան*, *ձեռաց ձեռ*, *քաջաց քաջ*, 2. երկրորդ բաղադրիչը դրված է՝ ա) գործիական հոլովով՝ *աշխարհ աշխար-*

⁷⁶ Նման կրկնություններում երբեմն առաջին բաղադրիչը որպես ինքնուրույն բառ է ընկալվում, և ամբողջ բաղադրությունը թվում է հարակցական հարադրություն: Օրինակ՝ *արմանք-գարմանք* և *աղատ-պաղատ* կրկնավորները նույն հաջողությամբ կարող են ընկալվել որպես *արմանք* և *գարմանք*, *աղատ* և *պաղատ* առանձին, ինքնուրույն բառերից կազմված հարակցական հարադրություններ (տե՛ս Է. Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Եր., 1987, էջ 233-234):

⁷⁷ Տե՛ս <https://www.wordnik.com/words/eastie-wastie> Wordnik:

⁷⁸ Է. Աղայանը սրանք համարում է տվորական շարահյուսական կառույցներ (տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 231):

հով, բ) տրական հոլովով՝ *ազգ ազգի, գիրկ գրկի, թն թնի, շունչ շնչի, ուս ուսի*, գ) երկրորդ բաղադրիչը՝ տրական հոլովով, իսկ առաջինը՝ ուղղականով՝ որոշյալ առումով՝ *ծերը ծերին, տեղը տեղին*, դ) երկրորդ բաղադրիչը դրված է գրաբարյան հոգնակի սեռական հոլովաձևով՝ *գիրք գրոց, երգ երգոց, սրբություն սրբոց*,

Բնական է, որ անգլերենի կրկնավորները նման հոլովական ձևեր ունենալ չեն կարող, քանի որ հոլովական իմաստներն անգլերենում արտահայտվում են գերազանցապես նախդիրների օգնությամբ, ինչպես՝ *arm-in-arm* «թն թնի», *day-by-day* «օր օրի», *hand-in-hand* «ձեռք ձեռքի», *house-to-house* «տնից տուն» և այլն: Հայերենում կրկնավոր հարադրությունների առանձին տեսակ են նրանք, որոնցում առաջին բաղադրիչը գոյական է, իսկ երկրորդը՝ այդ գոյականից բաղադրված ածանցավոր կամ բարդ բառ, ինչպես՝ *անդ ու անդաստան, գեղ-գեղովի, դուռ-դրացի, հանդ-հանդվոր, հոտ-հոտոտանք, ձի-ձիատեր, շուն-շնվոր, սել-սելվոր, տեր-տիրական, տուն-տնեցի* և այլն⁷⁹:

Կան նաև արական ու իգական սեռեր մատնանշող բառակրկնություններ, որոնց դեպքում երկրորդ բաղադրիչն է ածանցավոր, ինչպես՝ *աշակերտ-աշակերտուհի, բանվոր-բանվորուհի, դերասան-դերասանուհի, երգիչ-երգչուհի, ուսուցիչ-ուսուցչուհի* և այլն⁸⁰:

Հայերենում բառակրկնությունը, ըստ բաղադրիչների հետ ունեցած գործառական փոխհարաբերության (խոսքիմասային գործառության), լինում է *համագործառական* և *փոխգործառական* (*համակադապարային* և *փոխկադապարային*)⁸¹: Կրկնավոր բաղադրությունը համագործառական է այն դեպքում, երբ ունի խոսքիմասային նույն արժեքը, ինչ նրա բաղադրիչները, հատկապես հիմնական բաղադրիչը՝ կրկնյալը, օրինակ՝ հայերենում՝ *ձայն-ձուն*, անգլերենում՝ *ping-pong* «սեղանի թենիս»:

Փոխգործառական կրկնության դեպքում առկա է խոսքիմասային փոխանցում, որի հետևանքով գոյականների կրկնությունից ստացվում են ածականներ՝ *աքիս-մաքիս* (*աքիսի նման*), *գույն-գույն*, *ծով-ծով*, *պուտ-պուտ* (*պուտեր ունեցող*), և մակբայներ՝ *բակ-բակ*, *բոլուկ-բոլուկ*, *գող-գող*, *երակ-երակ*, *կաթիլ առ կաթիլ*, *հատ-հատ*, *մաս առ մաս*, *շիթ առ շիթ*,

⁷⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 235:

⁸⁰ Է. Աղայանն այս տիպի բաղադրությունները հարակցական հարադրությունների շարքին է դասում (տե՛ս նույն տեղում, էջ 227):

⁸¹ Տե՛ս Գ. Զառուկյան, *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն*, Եր., 1989, էջ 216-217:

տեղ-տեղ: Որոշ կրկնավոր բաղադրություններ գործածվում են և՛ որպես անհատական, և՛ որպես մակբայ՝ ստանալով զանազանության, բազմակիության նշանակություն կամ ցույց են տալիս համագրի բաների հաջորդականություն, հետևաբար դրանք հիմնականում դրվում են հոգնակի գոյականի հետ⁸², ինչպես՝ *դարս-դարս (դարս-դարս փայտեր, դարս-դարս շարել)*, *խումբ-խումբ (խումբ-խումբ տղաներ, խումբ-խումբ նստել)*, *ծուռ-ծուռ (ծուռ-ծուռ գրեր, ծուռ-ծուռ քայլել)*, *կաթ-կաթ (կաթ-կաթ ջրեր, կաթ-կաթ թափվել)*, *կտոր-կտոր (կտոր-կտոր մսեր, կտոր-կտոր բաժանել)*, *տեսակ-տեսակ (տեսակ-տեսակ ուտել/եղեն, տեսակ-տեսակ հագնվել)*, *փոթ-փոթ (փոթ-փոթ շորեր, փոթ-փոթ խորշովել)* և այլն:

Անգլերենում ևս, ինչպես հայերենում, կարող ենք ունենալ համագործառական ու փոխգործառական կրկնություններ, սակայն անգլերենում, ի տարբերություն հայերենի, փոխգործառական կրկնության դեպքում գոյականների կրկնությամբ ստացվում են նաև **բայեր**, օրինակ՝ *criss-cross* գոյականական կրկնության իմաստներն են. 1. «խաղ մանուկների համար՝ խաչախաղ» (գոյ.), 2. «խաչաձև» (ած., մկբ.), 4. «խաչաձև գծեր անել մի բանի մակերեսին» (բայ): Նույն կերպ *tittle* գոյականի կրկնությամբ (երկրորդ բաղադրիչի հնչյունափոխված տարբերակով) ստացվել է *tittle-tattle* կրկնավորը, որը նույնպես երկարժեք⁸³ է՝ «1. *շատախոսություն (գոյ.)*, 2. *շաղակրատել (բայ)*»: Սրանք, փաստորեն, միաժամանակ համագործառական և փոխգործառական կրկնություններ են:

Երկու լեզուներում ընդհանրություններ կան նաև Գ+Գ կաղապարով բառակրկնությունների արտահայտած իմաստների առումով: Սովորաբար բաղադրիչների կրկնությունն առաջացնում է իմաստի կրկնություն՝ ցույց տալով հաճախակիություն, բազմակիություն, սաստկականություն և այլն: Բառակրկնությամբ խոսքին հաղորդվում է հուզականություն և արտահայտչականություն⁸⁴: Կրկնավորները կարող են արտահայտել.

ա) **հավաքականություն, խառնաշփոթ վիճակ, անորոշություն՝ ալլաս-փալաս, աման-չաման, գիրք-միրք, ծակ-ծուկ/ծակ ու ծուկ, հավմավ, հաց-մաց, մարդ-մուրդ, ջահել-ջուհուլ, փալաս-փուլուս, փասա-**

⁸² Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Երկեր, հ. 2., Եր., 1974, էջ 146:

⁸³ «Երկարժեք» եզրույթի մասին տե՛ս **Լ. Խաչատրյան**, Խոսքիմասային տարաբնույթությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Եր., 1996, էջ 85:

⁸⁴ Տե՛ս **Լ. Եզեկյան**, *Հայոց լեզվի ոճագիտություն*, Եր., 2003, էջ 362:

փուսա, փլանփստան/ֆլան-ֆստան և այլն: Անգլերենում՝ *higgledy-piggledy* «խառնաշփոթ», *hodge-podge* «խառնիխուռն բաներ», *knick-knackery* «ամեն տեսակ զարդարանք, պաճուճանք», *ribble-rabble* «ամբոխ», *riff-raff* «հասարակության թափթփուկները», *tag-rag* «հասարակության ցածր խավը» և այլն,

բ) **մարդկային հատկանիշներ**՝ *whetl-zwhetl*, *լոթի-փոթի*, *ճստիկ-պստիկ*, անգլերենում՝ *harum-scarum* «անխոհեմ», *high muck-a-muck* «ինքնագոհ», *lovey-dovey* «սիրառատ, քնքուշ», *niddle-noddle* «օրորվող, ոտքի վրա հագիվ կանգնող» և այլն,

գ) **սաստկականություն**՝ *ամիսներ-ամիսներ*, *դարեր-դարեր*, *տարիներ-տարիներ*, *օրեր-օրեր*, *artist-artist* «իսկական, լավ արվեստագետ (սաստկական իմաստով)», *coke-coke* «իսկական կոկա-կոլա (ըմպելիք)» և այլն⁸⁵:

Թեև բառակրկնությունը երկու լեզուներում հիմնական բառակազմական միջոցներից չէ, սակայն այդ եղանակով բառեր կազմելը կենդանի երևույթ է և նպաստում է զուգադրվող լեզուների բառապաշարի հարստացմանը:

Карапетян Сирарпи. – Аналитические редубликаты модели N+N в армянском и английском языках-В статье исследуются структурные и семантические особенности номинальных аналитических редубликатов в армянском и английском языках, выявляется сходство и различие в этих словообразовательных конструкциях. Рассматриваются семантические схождения между соответствующими словообразовательными единицами двух языков. Выявленные особенности имеют существенное значение для структурной и типологической характеристики каждого из них.

Karapetyan Sirarpi. – Analytical Reduplicates with the pattern N+N in the Armenian English and Languages. – The article deals with the structural and semantic peculiarities of nominal analytical reduplicates in the Armenian and English languages. The aim of the article is to reveal the similarities and differ-

⁸⁵ St 'u http://vanhise.lss.wisc.edu/ling/files/ling_old_web/iso/wpl/5.1/LSOWP5.1-08-Kajitani.pdf **M. Kajitani**, Semantic Properties of Reduplication among the World's Languages, "LSO Working Papers in Linguistics 5: Proceedings of WIGL", Madison/Wisconsin, 2005, p. 93:

ences in the mentioned word-formation constructions. The article also deals with the semantic similarities between the corresponding word-formation units in both languages. The peculiarities revealed have important significance to the structural and typological characterization of the languages under study.

Համաբարբառների համակարգչային մշակման խնդիրները

Արդի գիտության նորագույն նվաճումներին հաղորդակից լինելը, տեխնիկական համապատասխան միջոցների գործնական կիրառությունը հայ լեզվաբանության մեջ կարող են զարգացման լայն հեռանկարներ բացել ավանդական այնպիսի բնագավառներում, ինչպիսին համաբարբառների կազմությունն է:

Համաբարբառները, ինչպես հայտնի է, բնագրային օրինակներով ներկայացնում են հեղինակի բառապաշարը՝ ըստ այբբենական հաջորդականության, տալիս բառերի գործածության հաճախությունը: Վերջին տասնամյակներում կազմվել և լույս են ընծայվել ինչպես հինգերորդ դարի հայ մատենագրության, այնպես էլ հետագա շրջանի մի շարք հիմնականում գրաբարագիր հեղինակների երկերի համաբարբառներ:

Իհարկե, մեր նպատակներից դուրս է անդրադառնալ նախորդ շրջանում կազմված համաբարբառներին՝ ըստ ամենայնի արժևորելով դրանք, կամ խոսել դրանցում եղած բացթողումների ու նկատված թերությունների մասին: Պարզապես կարող ենք փաստել, որ, առանց տեխնիկական որևէ օժանդակության, կատարվել է հսկայական աշխատանք, սակայն ժամանակները փոխվել են, և տեխնիկայի աննախադեպ առաջընթացը հասցրել է նրան, որ անհրաժեշտություն է առաջացել վերանայելու համաբարբառների կազմության նախկինում ընդունված ավանդական եղանակները: Որոնման սահմանափակ հնարավորություններ ունեցող նախկին մեքենագիր համաբարբառներին կարող են փոխարինել համակարգչային զանազան ծրագրերով ստեղծված, որոնողական ճկուն համակարգ ունեցող, համացանցում հասանելի էլեկտրոնային համաբարբառները:

Մեծամասամբ էլեկտրոնային եղանակով կազմվում են օտարալեզու համաբարբառները, որոնք պայմանականորեն կարելի է երկու խմբի բաժանել. համաբարբառներ, որոնք ներկայացնում են որևէ առանձին հեղինակի բառապաշարը (Ուիլիամ Շեքսպիր, Թոմաս Գրեյ, Ջոն Բիրթ, Ջերարդ Հոփքինս, Ուիլիամ Բլեյք), և միաժամանակ մի քանի հեղինակների երկերի բառապաշարը ներկայացնող համաբարբառներ («Անգլիական պոեզիայի համաբարբառ»):

Ցավոք սրտի, հայերեն էլեկտրոնային համաբարբառների մասին խոսելը դեռ վաղ է, որովհետև հիմա էլ կազմվելուց հետո դրանք շարունակում են տպագրվել առանձին գրքով, կամ լավագույն դեպքում տպագիր համաբարբառը Microsoft Word փաստաթղթի տեսքով տեղադրվում է որևէ կայքում, օրինակ՝ այսպես է ներկայացվում Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմութիւն» երկի համաբարբառը լեզվի ինստիտուտի կայքում⁸⁶:

Հայաստանի ամերիկյան համալսարանի թվանշային գրադարանում էլ փորձ է արվում մեքենական եղանակով կազմել էլեկտրոնային համաբարբառ, սակայն ներկայացված է միայն Եղիշեի պատմությունը, այն էլ ոչ թե համաբարբառը, այլ երկում գործածված բառերի և բառաձևերի՝ այբբենական հաջորդականությամբ դասավորված ցանկը:

Կարո՞ղ են սրանք էլեկտրոնային համաբարբառներ համարվել և օրինակ ծառայել հետագայում կազմվելիք համաբարբառների համար: Կարծում ենք՝ ո՛չ: Տպագիր համաբարբառի ներկայացման ձևաչափը փոխելը դեռևս չի նշանակում բովանդակության փոփոխություն, իսկ էլեկտրոնային համաբարբառը տպագրից տարբերվում է հենց բովանդակությամբ:

Էլեկտրոնային համաբարբառների կազմության համար պետք է.

ա. մշակել դրանց կազմության սկզբունքները՝ հաշվի առնելով տպագիր համաբարբառներում եղած սահմանափակումները և նպատակ ունենալով վերացնել դրանք,

բ. արդեն ստեղծված համաբարբառները դարձնել էլեկտրոնային,

գ. ընտրել այն հեղինակներին, որոնց երկերի համաբարբառների կազմությունը մյուսների համեմատությամբ ավելի կարևոր է,

դ. ստեղծել լեզվաբանի աշխատանքը մեծ չափով ավտոմատացնող ծրագրային ապահովման համակարգ:

Նախ տեսնենք, թե ինչ եղանակով և որտեղ կարող ենք ներակայացնել էլեկտրոնային համաբարբառները: Տրամաբանական է, որ ժամանակի ընթացքում ավելի մեծ թվով հեղինակների համաբարբառներ են կազմվելու, և տվյալների հենքը շարունակ մեծանալու է, ուստի նպատակահարմար է դրանք որևէ կայքում տեղադրելու փոխարեն ստեղծել հատուկ համաբարբառների համար նախատեսված նոր կայք: Այստեղ լրացուցիչ տեղեկություններ կտրվեն արդեն կազմված և մոտ ապագայում նոր կազմվելիք համաբարբառների, դրանց օգտագործման եղանակների և այլնի մասին:

⁸⁶ Տե՛ս <http://language.sci.am/hy/concordancias>:

Կայքի գլխավոր բաժիններից առաջինը կլինի գրադարանը, որտեղ թվային տարբերակով կներկայացվեն հեղինակների այն ստեղծագործությունները, որոնց համաբարբառները կազմվել են: Սա ընթերցողին այս կամ այն ստեղծագործությունն առցանց կարդալու հնարավորություն կտա, իսկ լեզվաբանը ազատ կարող է օգտվել այդ տեքստից հետազոտական աշխատանքներ կատարելիս:

Կայքի երկրորդ և կարևորագույն հատվածը կլինի համաբարբառների բաժինը: Սովորաբար տպագիր համաբարբառում բառերը ներկայացվում են այբբենական կարգով, էլեկտրոնայինում կարող ենք օգտվողին ընտրելու հնարավորություն տալ. բառերը այբբենական հաջորդականությամբ դասավորվեն, թե՛ ըստ գործածության հաճախության: Այնուհետև, նպատակահարմար է ներկայացնել հեղինակի բառապաշարը՝ սկսած առանձին ստեղծագործություններում եղած բառերից մինչև բոլոր ստեղծագործություններում եղած ամբողջական բառապաշարը՝ հիպերտեքստային հղումներով, գլխաբառերի տակ թեքվող խոսքի մասերի դեպքում դնել բառաձևերը, իսկ բառաձևերի տակ՝ բնագրային համապատասխան օրինակները: Ներկայումս եղած օտարալեզու էլեկտրոնային համաբարբառների մեծագույն մասում այբբենական կարգով դասավորված են ոչ թե բառերը, այլ բառաձևերը: Պատճառն այն է, որ ցանկացած տեքստում գործածված բառաձևերը հեշտությամբ կարելի է դասավորել այբբենական կարգով (իսկ այդ համաբարբառները կազմվում են մեքենական եղանակով), սակայն սա մեզ համար ընդունելի չէ: Ճիշտ է վերականգնել գլխաբառը և նոր միայն դրա տակ ներկայացնել համապատասխան բառաձևը:

Դրանից բացի՝ օտարալեզու համաբարբառների մեծագույն մասում, հիպերտեքստային հղումներից բացի, չկա բառը նարավորություն: Ենթադրենք՝ որևէ մեկին հետաքրքրում է **անրջել** բայի գործածությունը: Համապատասխան բառացանկերում կարդալու փոխարեն նա կարող է այդ բառը, ընտրել տեքստերի ծավալը, որոնցում ցանկանում է տեսնել դրա գործածության բոլոր օրինակները: Սա ևս անչափ կարևոր նոր հնարավորություն է, որը պետք է ունենան հայերեն էլեկտրոնային համաբարբառները:

Այժմ անդրադառնանք ձևային և բովանդակային այն տարբերություններին, որ հանդես կբերեն էլեկտրոնային համաբարբառները նախորդների համեմատությամբ: Այսպես՝ օգտագործման դյուրության տեսակետից էլեկտրոնայիններն այն առավելությունը կունենան, որ հարկ չի լինի թերթելով գտնել բառը: Ավելին՝ եթե մեզ անհրաժեշտ է ձևաբանական փոփոխության ենթարկված որևէ բառաձև, պետք է վերականգնել դրա ուղիղ

ձևը, ապա նոր միայն գլխաբառը գտնել տպագիր համաբարբառում: Մա բավական լուրջ խնդիր է հատկապես գրաբարի համաբարբառներում բառաձևեր որոնելիս, քանի որ գլխաբառը վերականգնելու համար պետք է շատ լավ իմանալ գրաբարի քերականությունը: Մինչդեռ էլեկտրոնային համաբարբառում կարելի է որոնել ցանկացած բառ ու բառաձև և որոնման արդյունքում գլխաբառն իր բառաձևերով կհայտնվի անմիջապես:

Մեքենագիր համաբարբառներում օրինակները բերվում են կիսատ՝ հիմնականում կարճ բառակապակցություններով: Սրա պատճառով հետագոտողը շատ հաճախ ստիպված է բառը փնտրել բնագրում՝ համատեքստում դրա ունեցած իմաստը ճշտելու համար: Էլեկտրոնային համաբարբառներում այս խնդիրը ևս հեշտությամբ լուծելի է: Իբրև ելակետ՝ բոլոր բառերը կարելի է ներկայացնել նախադասությամբ՝ օգտվողին հնարավորություն տալով ընդլայնելու նախադասությունը. ծավալային որևէ սահմանափակում չկա:

Քանի որ մեքենագիր համաբարբառները կազմվում են մարդկանց կողմից, նույնիսկ մեծագույն ուշադրության դեպքում հնարավոր է, որ դուրս մնան բնագրային որոշ օրինակներ կամ դրանք դիտավորյալ չներկայացվեն՝ բառահոդվածի ծավալը չմեծացնելու նպատակով: Էլեկտրոնային համաբարբառը այս խնդիրը ևս չի ունենա. բոլոր օրինակները տվյալների հենքից կընտրվեն մեքենական եղանակով և կպատկերվեն ամբողջական նախադասություններով:

Մեքենագիր համաբարբառները լրջորեն սահմանափակում են հետագոտողի հնարավորությունները լեզվական այս կամ այն երևույթը որևէ ժամանակաշրջանում ուսումնասիրելու առումով: Օրինակ՝ որևէ բառի գործածությունը հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ քննելու համար օգտվողը ստիպված է տվյալ բառը փնտրել բոլոր պատմիչների համաբարբառներում, գտնելուց հետո համեմատել դրանք, հաճախության ցանկերից գտնել հաճախության ցուցիչը, կարդալ օրինակները, երբեմն նաև՝ բնագրերի համապատասխան հատվածները: Այս ամենի փոխարեն էլեկտրոնային համաբարբառում կարելի է ընդամենը որոնել ցանկացած բառը՝ նախապես նշելով այն հեղինակներին, որոնց բնագրային օրինակները ցանկանում ենք տեսնել:

Ըստ էության՝ մեքենագիր համաբարբառները կարևոր են միայն բառագիտական մակարդակում, և դրանք՝ որևէ կերպ հնարավոր չէ օգտագործել քերականական իրողությունների ուսումնասիրության ժամանակ: Ենթադրենք՝ որևէ մեկին հետաքրքրում է անորոշ դերբայի կիրառությունը

Պարույր Սևակի «Մարդը փփի մեջ» ժողովածուում: Տպագիր համաբարբառը որևէ կերպ օգտակար լինել չի կարող, իսկ ահա էլեկտրոնային համաբարբառում բավական է որոնել անորոշ դերբայի

-ել, -ալ վերջավորություններն առանձին և համապատասխան հոլովաձևերով, և դրա գործածության բնագրային բոլոր օրինակները կապտկերվեն անմիջապես: Այսպես կարելի է ուսումնասիրել քերականական շատ իրողություններ. սա մեկն է այն նոր հնարավորություններից, որ կունենան էլեկտրոնային համաբարբառները:

Այսպիսով՝ հայերեն էլեկտրոնային համաբարբառներում, ինչպես տեսանք, բառերը ներկայացվելու են գլխաբառերով, յուրաքանչյուր գլխաբառի տակ տրվելու են համապատասխան բառաձևերը, բառաձևերի տակ՝ բնագրային օրինակները: Գլխաբառերը դասավորվելու են այբբենական կարգով կամ ըստ հաճախության, տրվելու է բառի որոնման հնարավորություն: Ակնհայտ է, որ տպագիրների համեմատությամբ էլեկտրոնային համաբարբառները հանդես կբերեն զգալի տարբերություններ և կունենան մի շարք առավելություններ:

Նոր համաբարբառներ կազմելուց առաջ նախևառաջ անչափ կարևոր է արդեն եղած տպագիր համաբարբառները (հատկապես մատենագիրների երկերի) դարձնել էլեկտրոնային ու տեղադրել այդ կայքում՝ ըստ անհրաժեշտության շտկելով դրանցում եղած վրիպակները և, որ ամենակարևորն է, ընդլայնելով բնագրային օրինակների ծավալը:

Ցանկացած դեպքում համաբարբառի կազմությունը բարդ է և աշխատատար, ուստի անհրաժեշտ է ճշտել՝ ի՞նչ չափով է կարևոր տվյալ համաբարբառի կազմությունը: Այն դեպքում, երբ մենք չունենք Հովհ. Թումանյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի և հայ պոեզիայի մյուս ականավոր ներկայացուցիչների համաբարբառները, որոնք շատ կարևոր են այդ հեղինակների լեզվի և ոճի ուսումնասիրության, բառագործածության, պատկերավորման համակարգի քննության համար, շարունակում են կազմվել գրաբարագիր այնպիսի հեղինակների երկերի համաբարբառներ, որոնք, վերոնշյալների համեմատությամբ, պակաս կարևոր են:

Կարծում ենք՝ ճիշտ կլիներ ստեղծել հայ դասական պոեզիայի կամ արձակի էլեկտրոնային համաբարբառը, որտեղ ներկայացված կլինեն գոնե դասական հեղինակները: Ավելին՝ ընդլայնելով ընդգրկման սահմանը՝ ցանկալի է ներառել նաև ժամանակակից հեղինակներին՝ պատկերացում կազմելու համար արդի հայ պոեզիայի զարգացման միտումների մասին գոնե լեզվագործածության առումով: Այդ կերպ կարելի է տեսնել, թե խոսքի

պատկերավորման համար ժամանակակից հեղինակների գործերում որ բառերն են առավել հաճախադեպ, կարելի է նույնիսկ համեմատել նախորդ և ժամանակակից այլ հեղինակների՝ նույն թեմայով գրված ստեղծագործությունների բառապաշարի հետ:

Օրինակ՝ Վիոլետ Գրիգորյանի «Մեր» վերնագրով պոեմի ամենահաճախադեպ գոյականներն են *մարմին (19) սեր (7), պաշիկ, տոտիկ (6)* բառերը, ամենահաճախադեպ բայերը՝ *արտաշնչել (5), ճոճել (4), համբուրել (4), ճնշվել (3)* բառերը: Վ. Տերյանի բանաստեղծական չորս շարքերում միասին վերցրած («Մթնշաղի անուրջներ», «Փշե պսակ», «Գիշեր և հուշեր», «Ոսկի հեքիաթ») *մարմին* բառը գործածվել է ընդամենը տասը անգամ, իսկ ամենահաճախ գործածված գոյականները *սիրտ, կյանք, հոգի* բառերն են, բայերից ամենաշատը գործածվում են *կանչել, սիրել, երգել* բառերը: Այսպես կարելի է հակադրել սիրո տերյանական ընկալումը հայ պոեզիայի էրոտիկ թևի ներկայացուցիչ բանաստեղծուհու՝ նյութական իմաստ արտահայտող բառերով սեր զգացմունքի մարմնական դրսևորմանը:

Քանի որ հատկապես արձակագիրների մեծածավալ ստեղծագործությունների համաբարբառների կազմությունը ենթադրում է հսկայական աշխատանք, անհրաժեշտ է պարզել, թե ուրիշ լեզուների համար արդեն ստեղծված համակարգչային ծրագրերը ի՞նչ չափով օգտակար կլինեն մեզ համար, և ի՞նչ նոր ծրագրեր մենք կարող ենք ստեղծել: Օրինակ՝ կան շատ կայքեր, որոնք հայերեն տեքստը հաջողությամբ վերածում են առանձին բառերի, դասավորում այբբենական կարգով, շատ ծրագրերով էլ կարելի է անմիջապես տեսնել որոնված բառի բնագրային բոլոր օրինակները: Ինչ խոսք, այս կերպ մեծապես հեշտանում է համաբարբառ կազմող լեզվաբանի աշխատանքը:

Անշուշտ, կարելի է հաջողությամբ ստեղծել նաև հատուկ ծրագրեր հենց հայերեն համաբարբառների կազմության համար (լեմատիզացիոն ծրագիր), սակայն քանի որ դրանք համաբարբառների կազմության լեզվաբանական կողմին չեն առնչվում, այժմ դրանց չենք անդրադառնա:

Այնուամենայնիվ, բոլոր դեպքերում հնարավոր չէ ամբողջապես մեքենայացնել համաբարբառների կազմությունը, քանի որ համակարգչային ծրագիրը գործնականում չի կարող անթերի կատարել լեզվաբանի աշխատանքը. որևէ ծրագիր չի կարող առանձնացնել հարադրավոր բայերն ու դարձվածքները: Ուստի բոլոր տեսակի եղած և նորաստեղծ համակարգչային ծրագրերը պետք է ընդամենը հեշտացնեն լեզվաբանի աշխատանքը,

իսկ համաքարքառները պետք է շարունակեն կազմվել բացառապես լեզվաբանների կողմից:

Վաղուց արդեն ժամանակն է, որ մեզանում համաքարքառների կազմությունը թևակոխի որակական զարգացման միանգամայն նոր փուլ. նոր մեթոդներով և տեխնիկական նորագույն միջոցներով ստեղծվեն նոր համաքարքառներ, որոնք կապահովեն փաստական հսկայական նյութ լեզվական տարբեր իրողությունների քննության համար:

Акопян Фрида - Проблемы компьютерной обработки конкордансов. - В статье представлены принципы создания армянских электронных конкордансов в соответствии с которым новый веб-сайт будет создан, где не только печатные конкордансы будут доступны в электронном виде, но и новые конкордансы для разных авторов будут собраны. Важность создания новых лингвистических инструментов подчеркивается, потому что с помощью компьютерных программ можно создать конкордансы, которые будут способствовать изучению языковых явлений.

Hakobyan Frida - The problems of computational processing of concordances. - The article presents principles of creating Armenian electronic concordances according to which a new web site will be created where not only printed concordances will be available in an electronic form, but also new concordances for different authors will be compiled. The importance of creating new linguistic tools is underlined because with the help of software programs it is possible to create concordances which will contribute to investigation of linguistic phenomena.

ՏԱՐԱԾԱՆՇՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՊԵՐԻ ԴԵՐԸ

Սույն հոդվածում քննում ենք տարածանշությունը լեզվում և կապերի դերը տարածական հարաբերությունների արտահայտման գործում: «Տարածություն» հասկացությունը կիրառվում է շատ գիտություններում և ունի բազմաթիվ սահմանումներ: Բնչպես նշված է “Encyclopædia Britannica”-ում, տարածությունը սահմաններ չունեցող եռաչափ տարածք է, որում գտնվող մարմիններն ու տեղի ունեցող իրադարձություններն ունեն հարաբերական դիրք և ուղղություն⁸⁷: Տարածությունը հնարավոր է նշել, արտահայտել, պատկերել տարբեր միջոցներով: Տվյալ հոդվածում մեզ հետաքրքրում են տարածանշության լեզվական միջոցները: Ընդ որում՝ քանի որ յուրաքանչյուր երևույթ առնչություն ունի տարածության հետ, որովհետև վերջինս իրականության մեր ընկալման անքակտելի մաս է, ուստի տարածանշությունը լայն առումով քննելիս տեսնում ենք, որ լեզվում տարածանիշ կարող է համարվել ցանկացած բառ, արտահայտություն, լեզվական կաղապար և այլն: Առավել տեղին ենք համարում մեր ուսումնասիրությունը նեղացնել և կենտրոնացնել տարածությունը նշող (տարածանիշ) կամ տարածական հարաբերության իմաստ արտահայտող լեզվական միջոցներից մեկի՝ կապի վրա:

Կապը քերականական իմաստ արտահայտող խոսքի մաս է: Այն բառերի կապակցության ձևերից մեկն է և ցույց է տալիս հարաբերություններ, այսինքն՝ ինչ հարաբերության մեջ են գոյականները, գոյականաբար գործածված բառերը և առարկայական իմաստ ունեցող դերանունները խնդրառու կամ գերադաս բառի նկատմամբ:

Օրինակ՝ «Անձրևոտ գիշերներին լապտերներն արտասվում են միայն այն մասին, ինչ չի հաջողվել մարդկանց, որովհետև իրենք ընդամենը լապտերներ են և չունեն սեփական թախիծ»⁸⁸:

Կարող ենք ասել, որ կապը խոսքի մեջ ունի շարահյուսական նշանակություն:

⁸⁷ **Encyclopædia Britannica**, <https://www.britannica.com/science/space-physics-and-metaphysics>

⁸⁸ Լ. Ենգիբարյան, *Լապտերները*, http://grapaharan.org/index.php/Լեոնիդ_Ենգիբարյան

Կապերն ու հոլովները փաստորեն նախադասության մեջ կատարում են միևնույն գործառնությունը և դերը՝ արտահայտելով բառերի տարբեր հարաբերություններ: Սակայն սա չի նշանակում, որ պետք է նույնացնել կապերն ու հոլովները, քանի որ սրանք տարբերվում են որպես լեզվի կառուցվածքային միավորներ: Հոլովները լեզվի ձևաբանական կառուցվածքի տարրեր են, իսկ կապերը՝ լեզվի բառապաշարային համակարգի միավորներ: Բացի այդ՝ կապերը հարաբերություն են արտահայտում իրենց բառային իմաստով և ոչ թե բառի քերականական ձևի փոփոխմամբ, ինչը բնորոշ է հոլովներին: Այսպիսով, կապերն առնչություն ունեն և՛ բառապաշարային, և՛ քերականական միավորների հետ:

Կապերը կարող են արտահայտել տարբեր հարաբերություններ, որոնցից առանձնացնենք ավելի հասկանալիները՝ տարածական, ժամանակային, վերաբերության, բացառման, պատճառի ու հիմունքի, նպատակի, փոխարինության, համապատասխանության, ձևի և նմանության, բացահայտման, ընդդիմության ու հակառակության, հակառակ հիմունքի, միասնության, չափի, համեմատության, շահի, սահմանափակման, ներգործության, դիմառնության, ստացականության և այլն:

Մույն հոդվածում մենք կանդրադառնանք տարածանիշ կամ տարածական հարաբերության իմաստ արտահայտող կապերին:

Տարածական հարաբերության իմաստ են արտահայտում, օրինակ, դիմաց, հանդեպ, մեջ, վրա, մոտ, քով, տակ, ներքո, միջև, հանդեպ, շուրջ, առաջ, առջև, ի վար, ի վեր, դեպի, հեռու, վերև, ներքև, վեր, վար, դուրս կապերը:

Նշված կապերի մեծ մասը ցույց են տալիս առարկայի որևէ կողմը (օրինակ՝ նրա մեջ, վրա, տակ լինելը)․ հիմնականում այսպես է արտահայտվում տարածական հարաբերությունը: Կապերի մի մասն արտահայտում է նաև ուղղության հարաբերությունը․ օրինակ՝ դեպի, մինչև, առ բառերը: Նույնը կարող ենք ասել նաև «ի վեր, ի վար» կապերի մասին: «Ի վեր, ի վար»-ը սովորաբար դրվում են այնպիսի իմաստ ունեցող բառերի վրա, որոնց հետ կարողանում են արտահայտել շարժման ուղղությունը առարկայի, տեղի, տարածության երկարությամբ․ այդպիսին են, օրինակ, գետ, հոսանք, լեռ բառերը:

Տարածական իմաստով «վրա» կապը առաջին հերթին ցույց է տալիս մի առարկա մյուսի վերևը, մակերեսին դրվելու, տարածությամբ մյուսին ուղղահայաց դիրքով հաջորդելու հարաբերություն: «Վրա» կապը կարող է

կիրառվել տարածական մի այլ իմաստով ևս. այն կարող է նշանակել «մոտ», «կողքին»:

Օր. Ճանապարհի վրա են գտնվում Ձեր բարեկամի խանութները:

Մեկ այլ առարկայի նկատմամբ հեռավորություն մատնանշելով է արտահայտվում «մոտ, քով, հեռու» բառերի տարածականության իմաստը:

«Շուրջ» կապն արտահայտում է որևէ առարկայի չորս կողմը լինելու հարաբերություն:

Մեկից ավելի առարկաների միջև եղած տարածության նկատմամբ գերադաս բառով արտահայտված գործողության կամ եղելության հարաբերություն է արտահայտում «միջև» կապը:

«Դուրս» կապը արտահայտում է որևէ առարկայի ներսում չլինելը, նրա սահմաններից դուրս լինելը: Ի տարբերություն վրա, տակ, մոտ և այլ կապերի, որոնց իմաստը նույնպես վերաբերում է առարկայի սահմաններից դուրս լինելուն՝ «դուրս» կապի մեջ չկա իմաստի մասնավորում, իսկ մնացածը ցույց են տալիս «դրսի այս կամ այն կողմը»:

«Մեջ» կապը ցույց է տալիս որևէ բանի ներսում գտնվելը: Իր իմաստով բավականին մոտ է ներգոյական հոլովին, բայց ներգոյական հոլովը ցույց է տալիս ընդհանրապես տեղ, իսկ «մեջ»-ը՝ սահմանազատված տեղ:

Նշենք, որ տարածական հարաբերությունն արտահայտող կապերը կարող են կիրառվել նաև այլ նշանակություններով՝ արտահայտելով ժամանակի, համեմատության և այլ հարաբերություններ:

Այդպիսին է, օրինակ, տարածական հարաբերության իմաստ արտահայտող «վրա» կապը, որը, բացի տարածությամբ մի առարկային ուղղահայաց դիրքով հաջորդելու իմաստը, ունի նաև հաջորդելու իմաստ ժամանակային տեսակետից: Այս իմաստի արտահայտման համար «վրա» կապը հիմնականում դրվում է գործողության իմաստ ունեցող կամ այդ իմաստի հետ անուղղակիորեն կապված բառերին կից: Օրինակ՝ երբ ասում ենք «Լուսանալու վրա էր, երբ տուն եկավ» կամ «Պաղպաղակի վրա տաք կաթ խմեց», գործ ունենք «վրա» կապի ժամանակային հարաբերության իմաստի արտահայտման հետ: Եթե «վրա» կապն ունի հաջորդելու իմաստ, ապա «մոտ»-ը՝ նախորդելու: Օրինակ՝ «Ժամը վեցին մոտ բոլորն արդեն գնացել էին»: Այս դեպքում «մոտ» կապը ցույց է տալիս ժամանակային միավորին մոտեցող ժամանակ: Ժամանակային հարաբերության իմաստ կարող են արտահայտել նաև «մեջ, ի վեր» կապերը, ինչպես՝ «Վաղվա մեջ կավարտեն գործս», «1998 թվականից ի վեր նա չէր եղել իր հայրենիքում»:

Իսկ հետևյալ օրինակում տեսնում ենք, որ տարածանիշ կապը արտահայտում է համեմատության հարաբերություն. «Արարատի մոտ այդ սարը բլուր էր թվում»:

Գ. Ջահուկյանը տարածական հարաբերությունն արտահայտող կապերն անվանում է տեղանիշ կապեր: Գ. Ջահուկյանը նշում է, որ այս կապերը ցույց են տալիս դիրք, տարածական չափ և ուղղություն: Հնարավոր է նաև, որ միևնույն տեղանիշ կապը արտահայտի նշվածներից երկուսը⁸⁹: Իհարկե, պետք է նշել, որ խոսքը տարածական կապերի առանձին կիրառելու մասին չէ. դրանք առանձին չեն նշում տարածությունը լիարժեքորեն: Օրինակ՝ «վրա» կապը արտահայտում է մի առարկա մյուսի վերևը, մակերեսին դրվելու գաղափար, այսինքն՝ առարկայի դիրքը, սակայն եթե մենք չունենք այդ առարկան, «վրա» կապը ինքնին դիրք ցույց տալ չի կարող: Այսպիսով, տարածության մեջ մեզ անհրաժեշտ է մի կետ, մի մարմին, որ տարածական կապերի արտահայտած գաղափարը տարածանիշ լինի, ուստի տարածական կապերը ցույց են տալիս դիրք, տարածական չափ և ուղղություն, բայց տարածության մեջ հարաբերականորեն ընտրված կետի նկատմամբ:

Դասակարգենք կապերը՝ ըստ Գ. Ջահուկյանի առանձնացրած երեք եզրույթների:

- Տարածական չափ են արտահայտում առնթեր, կից, մոտ, հեռու, սկսած, մինչև կապերը. ընդ որում՝ վերջին երկուսը կարող են նշանակել նաև ժամանակի չափ՝ կախված իրենց հետ զուգորդվող բառերի բնույթից: «Կողքին» կապը ցույց է տալիս թե՛ չափ, թե՛ դիրք:


- Տեղի ուղղություն են ցույց տալիս դեպի, ի վար, ի վեր, ուղղությամբ կապերը: Բացառական և գործիական հոլովներով, ուղղականաձև կամ դեպի բառի հետ միասին կիրառվելով՝ որոշ կապեր ևս կարող են արտահայտել ուղղության իմաստ. այդպիսիք են՝ վար, վեր, աջ, ձախ, կողմ, ներքև, տակ և այլ կապեր: Ուղղականաձև կամ դեպի բառի հետ գործածվող կապերն արտահայտում են ելակետ, անցում և ուղղություն:

- Տարածական դիրք են արտահայտում վերև-ներքև, աջ-ձախ, առջև(հ)ետև, ներս-դուրս, մեջ-կողմ բառերը և այլ զուգահեռ կապեր: Այսինքն՝ Գ. Ջահուկյանը դիտարկում է այս կապերը ըստ տարածության երեք գծային չափումների:

⁸⁹ **Ջահուկյան Գ.**, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ*, Երևան, 1974, 588, էջ 435:

Տարածության մեջ դիրքը նկարագրելու համար ընդհանրապես օգտագործվում է կոորդինատային համակարգը: Տարածական դիրքը արտահայտող կապերը նկարագրելու համար նույնպես նպատակահարմար է կոորդինատային համակարգի կիրառումը: Այդպես է վարվել Գ. Ջահուկյանը. նա պատկերել է խորանարդ, որի կենտրոնը համընկնում է կոորդինատային համակարգի սկզբնակետի հետ: Իհարկե, խորանարդի ընտրությունը պայմանական է, դրա փոխարեն կարող է լինել գունդ կամ այլ տարածական մարմին, որն ունի կենտրոն իր ներսում: Առավել տեսանելի դարձնելու համար տարածական դիրք արտահայտող կապերի քննությունը մեր ուսումնասիրության հիմքում դնենք Գ. Ջահուկյանի մեթոդը:

Պատկերենք խորանարդ, որի կենտրոնը համընկնում է կոորդինատային համակարգի սկզբնակետի հետ.



Հիշեցնենք, որ X առանցքը կոչվում է աբսցիսների առանցք, Y -ը՝ օրդինատների առանցք, իսկ Z - ը՝ ապլիկատների: Աբսցիսների առանցքով պատկերացում ենք ստանում տարածության մեջ աջի և ձախի մասին, օրդինատների առանցքով՝ վերևի և ներքևի, ապլիկատների առանցքով՝ առջևի և (հ)ետևի: Իսկ եթե դիտարկենք նաև խորանարդը, ապա աջը (աջ կողմում) դրական կիսաառանցքի խորանարդից դուրս գտնվող մասն է, ձախն էլ (ձախ կողմում)՝ բացասականի: Օրդինատների առանցքի դրական կիսաառանցքի խորանարդից դուրս գտնվող մասը վերևն է (վրա, վերևում, վեր), հակառակ մասը՝ ներքևը (տակ, ներքևում, վար, ցած, ներքո, ստորև): Ապլիկատների առանցքի դրական կիսաառանցքի խորանարդից դուրս գտնվող մասը առջևն է (առջևում, առաջ), հակառակ մասը՝ (հ)ետևը ((h)ետ, (h)ետևում): Նշենք, որ ի տարբերություն ապլիկատների առանցքով նկարագրվող մյուս կապերի՝ «վրա» և «տակ» կապերը արտահայտում են նաև

տարածության չափ կամ մերձավորության աստիճան. սրանք ունեն «կից» իմաստը:

Պետք է նշել, որ վերը քննված կապերի դիրքը հնարավոր էր նկարագրել նաև առանց խորանարդի: Այժմ ներկայացնենք այն կապերը, որոնց համար մեզ անհրաժեշտ է տարածական մարմինը: Խորանարդի սահմաններում կարող ենք քննել ներս, ներսում, մեջ, մեջտեղում կապերը, խորանարդի սահմաններում չեն գտնվում միայն «դուրս, դրսում» կապերը: Ինչպես վերևում նշել ենք, «դուրս» կապն արտահայտում է որևէ առարկայի սահմաններից դուրս լինելը առանց իմաստի մասնավորման: Առանձնացնենք նաև «մեջտեղում» կապը, որը համընկնում է կոորդինատային համակարգի սկզբնակետի հետ՝ ի տարբերություն ներս, ներսում, մեջ կապերի, որոնք կարող են լինել խորանարդի սահմաններում գտնվող ցանկացած կետում:

Տեղին է նշել, որ այս բոլոր կապերը ներկայացնում են մեկ առարկայի դիրքը, բայց կան նաև տարածական հարաբերություն ցույց տվող այլ կապեր՝ միջև, հանդեպ, հանդիման, դեմ, դիմաց և այլն, որոնք նշում են երկու կամ ավելի առարկաների դիրքը:

Անդրադառնանք մեկ այլ կարևոր հարցի ես: Հոլովվում են արդյոք կապերը: Հայերենի քերականության մեջ ընդունված է կապի՝ որպես չթեքվող խոսքի մասի բնորոշումը, սակայն որոշ կապերին հատուկ է հոլովվելը:

Դիտարկենք երկու նախադասություններ. «Կանգնեց սեղանի վրա», «Թռավ պարսպի վրայով»: Այս երկու դեպքերում էլ «վրա»-ն կապ է: Ապացույցներից մեկն էլ այն է, որ չի կարող ունենալ ածական որոշիչ, չենք կարող ասել. «Թռավ պարսպի հարթ վրայով»: «Որոշիչ ածականներ ընդունելը առարկայության լավագույն չափանիշ է»⁹⁰:

Սակայն չենք կարող ասել, որ հոլովման քերականական կարգը բնորոշ է հայերենի կապերին, քանի որ այն հիմնականում միայն տարածական իմաստ արտահայտող կապերի դեպքում է արտահայտվում՝ վրա, մոտ, տակ, մեջ, դիմաց, դեմ, առաջ, առջև և այլն: Պատճառն այն է, որ այս բառերը մեծ մասամբ առաջացել են գոյականներից և դեռ որոշ չափով պահպանել են իրենց նյութական նշանակությունը, որն էլ դրսևորվում է ն՝ ուղիղ, ն՝ թեք ձևերով կիրառվելու ժամանակ: Հենց այս նյութական նշանակության մասնակի պահպանումն է, որ հնարավորություն է տալիս այս կապերին

⁹⁰ Ասատրյան Մ., *Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն*, Երևան, 1983, 472, էջ 390:

ստացական հոդեր ստանալ և գործածվել ստացական հոգնակիների ձևով. օրինակ՝ վրաս, վրաներդ:

Պետք է նշել, որ տարածական կապերի հոլովական ձևերը կրկնակի հարաբերություն են արտահայտում (բառային իմաստ+հոլովական ձև)՝ իմաստային տեսակետից տարբերվելով մյուս բոլոր կապերից:

Այսպիսով, քննելով տարածանշությունը և կապերի դերը տարածական հարաբերությունների իմաստի արտահայտման գործում՝ կարող ենք փաստել, որ կապերը լեզվում տարածական հարաբերությունների արտահայտման ձևերից են:

- Տարածական կամ տեղանիշ կապերը ցույց են տալիս դիրք, տարածական չափ և ուղղություն՝ տարածության մեջ հարաբերականորեն ընտրված որևէ կետի նկատմամբ:
- Տարածական հարաբերություն արտահայտող կապերը կարող են կիրառվել նաև այլ նշանակություններով՝ արտահայտելով ժամանակի, համեմատության և այլ հարաբերություններ:
- Հոլովման քերականական կարգը բնորոշ չէ հայերենի կապերին, քանի որ այն հիմնականում միայն տարածական իմաստ արտահայտող կապերի դեպքում է արտահայտվում՝ վրա, մոտ, տակ, մեջ, դիմաց, դեմ, առաջ, առջև և այլն:
- Տարածական կապերի հոլովական ձևերը կրկնակի հարաբերություն են արտահայտում (բառային իմաստ+հոլովական ձև):

Амбарян Лусине- Выражение пространственных отношений и роль предлогов.- В этой статье, исследуя выражения пространственных отношений и роль предлогов, мы можем сказать, что предлоги являются одной из форм выражения пространственных отношений.

- Пространственные предлоги показывают расположение, пространственное расстояние и направления по отношению выбранной точки в пространстве.
- Пространственные предлоги могут также использоваться с другими значениями, выражающими время, сравнения и другие отношения .
- Армянскому языку нехарактерна грамматическая категория падежа, потому что это в основном применяется только в случае предлогов, выражающих смысл пространственных отношений: на, под, перед, за, и т.д.

- Падежные формы пространственных предлогов выражают двойное отношение (лексическое значение + форма падежа).
- Hambaryan Lusine- The expression of spatial relations and the role of prepositions.- Examining the expression of spatial relations and the role of prepositions in this article, we can state, that prepositions are one of the main forms of expression of the meaning of spatial relations.
- Spatial prepositions show the location, the spatial distance and direction in the space, relative to the selected point.
- Spatial prepositions may also be used with other meanings expressing time, comparison, and other relations.
- The grammatical category of case is not typical for Armenian language, because it is mainly used with the prepositions expressing spatial relations: on, under, in, down, etc.
- Case forms of spatial prepositions express double relations (lexical meaning + the case form).

Այսօր կան առանձին դարերի ձեռագրերի հիշատակարանների լեզվին ամբողջությամբ կամ լեզվական որևէ երևույթին նվիրված ուսումնասիրություններ՝ հոդվածների, գրքերի, ատենախոսությունների ձևով⁹³։ Սակայն

⁹³ **S. Մանուկյան,** *Ձեռագրերի հիշատակարանները որպես հայոց լեզվի պատմության սկզբնաղբյուր.* - Երիտասարդ լեզվաբանների հանրապետական գիտաժողովի զեկուցումներ, Ե., 2011, էջ 72-75, **Վ. Խաչատրյան,** *5-11-րդ դարերի ձեռագրերի հիշատակարանների բառապաշարը.* - Երիտասարդ լեզվաբանների հանրապետական գիտաժողովի զեկուցումներ, Ե., 2013, էջ 39-48, *Նորահայտ բառեր 13-րդ դարի ձեռագրերի բառարաններում.* - Ջահուկյանական ընթերցումներ, Ե., 2014, էջ 69-76, *Բարբառային բառեր ու բառամաներ 13-րդ դարի ձեռագրերի հիշատակարաններում.* - Արեղյանական ընթերցումներ, Ե., 2015, էջ 275-285, **Խ. Հարությունյան,**

մեզ հետաքրքրող նյութը, այն է՝ գրաբարյան դարձվածքները, քննված չեն ինչպես ընդհանրապես, այնպես էլ հիշատակարաններում ունեցած կիրառությամբ: Հիշատակարանների լեզվի քննությամբ զբաղվող կամ ուղղակի անդրադարձած ուսումնասիրողները միաձայն նկատում են, որ հիշատակարանների լեզվով կարելի է որոշակի պատկերացում կազմել տվյալ ժամանակաշրջանի խոսակցական հայերենի մասին: Թեև գրիչները հիմնականում փորձել են պահել ընդունված դասական ձևերը ինչպես ամբողջ ձեռագրում, այնպես էլ հիշատակարաններում, սակայն նկատելի շեղումներ, խոսակցական տարրեր, արտահայտություններ, ոճեր ու դարձվածքներ ևս հանդիպում են:

Քննության ենք առել Ա. Մաթևոսյանի կազմած և աշխատասիրած «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. Ե-ԺԲ դդ.» ժողովածուն, որտեղ ներկայացված են 5-11-րդ դարերի 160 ձեռագրի հիշատակարաններ: Հիշատակարանները 160-ից շատ են, քանի որ մի ձեռագիր կարող է ունենալ նույն դարի 1-ից ավելի հիշատակարան, որոնք ժողովածուում տրված են նույն համարի ձեռագրի ներքո՝ ա, բ, գ (եւ այլն) համարակալումով: Մեր հաշվումով, կիրառված են ընդամենը 102 դարձվածք: Քանի որ չունենք հիշատակարանների բառապաշարի վիճակագրական քննություն կամ հաճախականությունների բառացանկ-բառարան, ոչ էլ հիշատակարանների թվային տարբերակներ համապատասխան հաշվումները էլեկտրոնային եղանակով ճշգրիտ և արագ կատարելու համար, ապա չենք կարող որոշել՝ դարձվածքները ընդհանուր բառապաշարի ո՞ր տոկոսն են կազմում, և համապատասխան վիճակագրական եզրակացություններ անել:

Ուստի մեր նպատակն է պարզել՝ արդյոք հիշատակարաններում գործածված դարձվածքները նույն դարերի հայ մատենագիտության մեջ արդեն իսկ կիրառված և բառարաններում ամրագրված են, թե՞ կան այնպիսիք, որ առաջին անգամ (կամ միայն) այստեղ են վկայված: Ապա որոշել՝ ունեն տարբերություններ գրական լեզվի դարձվածքներից, եթե այո, ապա կարո՞ղ ենք ասել, որ դրանք ժամանակի խոսակցական կամ բարբառային ձևերից գրիչների միջոցով ձեռագիր մուտ գործածած տարբերակներ են: Ինչպես նաև աշխատանքում կատարել ենք հիշատակարաններում կիրառված դարձվածքների բառակազմական քննություն:

Քննությանը պարզեցինք, որ կիրառված է 104 դարձվածք, որոնցից 87-ը ավանդված են նաև հայ մատենագիտությամբ և ամրագրված «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» և գրաբարի դարձվածաբանական բառարաններում⁹⁴, իսկ 15-ը կարելի է համարել գրաբարյան դարձվածքների տարբերակներ, քանի որ դրանք, գրական կամ բառարանային ձևերի հետ նույնը լինելով իմաստով,

ա. տարբերվում են դարձվածքի կազմում եղած բաղադրիչներից մեկով⁹⁵.

1. *աղերս մատուցանել* («...աղերս առաջի մատուցանեմ ձեզ զպիտառութիւն զայս բանի», էջ 52) – բորն՝ *աղերս առնել*, *աղերս արկանել* (էջ 24),
2. *արտալած առնել* («...զանկարզ ճամարտակելն *արտալած արարեալ* անպատուիս ես մնացից յահեղ մրրկէ աստի...», էջ 52) – բորն՝ *արտահալած առնել* (էջ 47),
3. *գիրկ ընդ գիրկս խառն լինել* («Այսպէս եւ մեք *գիրկ ընդ գիրկս խառն լիցուք* սիրոյն Աստուծոյ...», էջ 92) – բորն՝ *գիրկ ընդ գիրկ խառնել* (էջ 62),
4. *թողութիւն շնորհել* («...որք ընթեռնութ, *թողութիւն շնորհեցէք* կաթոգնեալ ոգւոյն իմոյ...», էջ 99) – բորն՝ *թողութիւն տալ* (էջ 105),
5. *ի գուճ անկանել* («Նոյնպէս եւ տառապեալ *ի գուճ անգեալ* առաջի սրբաւնեալ եղբարց, ի խորոց սրտէ պաղատիմ...», էջ 7) – բորն՝ *ի գուճս իջանել* (էջ 116),
6. *ի կատարումն հասուցանել* («...ի կատարումն հասուցաք ոչ որչափ ունէր խորհրդածութիւն քարոզացն եւ աղաւթիցն բանք...», էջ 56) – բորն՝ *ի կատարումն ածել* (էջ 122),
7. *ի նախանձն կրթել* («...եւ լսելով զայլոց զպարսավանս՝ *ի բարի նախանձն կրթեալք* ջանասցին լաւանալ», էջ 9) – բորն՝ *ի նախանձ մտանել* (էջ 130),
8. *ի վայր բերել* («Ոչ ի փորձ հրոյ ի վայր բերեալ ըստ պայմանի խռուոյ յաւուրն ընտրութեան», էջ 54) – բորն՝ *ի վայր արկանել* (էջ 134),

⁹⁴ Գ. Աւետիքեան, Խ. Միւրմէլեան, Մ. Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, Վ., հ. 1, 1836, հ. 2, 1837: Ռ. Ղազարյան, *Գրաբարի դարձուածաբանական բառարան*, Ե., 2012:

⁹⁵ Ստորև բերվող դարձվածքների հիշատակարանային օրինակների համար օրինակից անմիջապես հետո նշում ենք միայն «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ.» ժողովածուի համապատասխան էջը՝ առանց անընդհատ կրկնելու գրքի տվյալները, իսկ բորն նշումով տալիս ենք Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձուածաբանական բառարան»ի դարձվածքը՝ կրկին նշելով միայն էջը:

9. *խնդիրք լինել* («...եւ զինչ տայցեմ պատասխանի յորժամ *խնդիրք լինին...*», էջ 70) – բորն՝ *խնդիր առնել* (էջ 148),
10. *ձեռնահաս լինել* («հ[ամբ]ուրելո[վ] արտասուաք զ[Աստուած] առ ձայնելով թեպետ [ձեռ]նահաս էաք...», էջ 131) – բորն՝ *ձեռնհաս լինել* (էջ 188),
11. *յառաջ խաղացուցանել* («...յառաջ *խաղացուցից* զբանսն...», էջ 48) – բորն՝ *յառաջ մատուցանել* (էջ 209),
12. *յիշատակի առնել* («...զի արժանի յիշատակի առնէք՝ յիշել անմախաբար...», էջ 7) – բորն՝ *յիշատակ առնել* (էջ 213),
13. *վճարել ի մարդկանէ* («...վճարեցաւ ի մարդկանէ արքայն Հայոց մեծիմաստն Յովհաննէս...», էջ 87) – բորն՝ *վճարել ի կենաց* (էջ 259),
14. *փոխել առ թագաւորն երկնաւոր* («...*փոխեցաւ առ թագաւորն երկնաւոր* եւ եթող բազում լալիւն...», էջ 84) – բորն՝ *փոխադրել առ Քրիստոս* (էջ 272):

բ. Տարբերվում են դարձվածքի բաղադրիչների քերականական կարգով.

1. *ի գրի արկանել* («Պատշաճ համարեցաւ *ի գրի արկանել...*», էջ 57) – բորն՝ *ի գիր արկանել* (էջ 114):

Մի դարձվածք *ք բռնն անկանել* (բորն՝ էջ 113), հանդիպում է *բռնն անկանել* տարբերակով («...զի մի *բռնն անկեալ* ի թշնամեացն պատիժս կրեցուք...», էջ 29), իսկ *մաշել ի սուր սուսերի* դարձվածքը (բորն՝ էջ 194) կիրառված է *մաշել ի սուրք սուսերի* ձևով («...առին զբաղաքն եւ *մաշեցին ի սուրք սուսերի* զվիշապն...», էջ 118):

Հիշատակարաններում կիրառված ևս 2 կապակցություն, կարծում ենք, կարելի է դարձվածք համարել՝ *թողություն հայցել* («...ինձ մեղաց *թողութիւն հայցեցէք* յԱստուծոյ...», էջ 69, նաև էջ 85, 87), *թողություն խնդրել* («...զգրիչս յիշեցէք եւ խնդրեցէք մեղաց թողութիւն» էջ 81, նաև էջ 82, 100)՝ *թողություն առնել*, *թողություն տալ* դարձվածքների համաբանությամբ (բորն՝ էջ 104, 105):

Այժմ դժվար է ասել՝ սրանք գրիչի կողմից կատարված փոփոխություններ են, թե՞ դարձվածքների ժողովրդախոսակցական տարբերակներ, որոնք ուղղակի կիրառել է գրիչը: Այս հարցին հնարավոր կլինի պատասխանել, եթե մատենագրության մեջ ևս գտնենք այս դարձվածքների կիրառություններ: Աշխատանքի համար ստուգել ենք միայն 5-րդ դարի մատենագրության համաբարբառները, որտեղ նման կիրառություններ չկան: Բայց դա չի բացառում համաբարբառներ չունեցող ինքնուրույն և թարգմանա-

կան հարուստ գրականության մեջ պահպանված նման օրինակների առկայությունը:

Ըստ խոսքիմասային պատկանելության դարձվածքներից միայն 1-ն է գոյականական՝ *սրտի մտօք* («...որք *սրտի մտաւք* ունկն դնիցին...», էջ 63), մյուսները բայական են:

Ըստ կառուցվածքի դարձվածքները երկանդամ և եռանդամ են: Եռանդամները 6-ն են, որոնք, ըստ բաղադրիչների խոսքիմասային պատկանելության, Գ+Գ+Բ, Բ+Ա+Գ, Բ+Գ+Ա կաղապարների իրացումներ են.

Ա. Գ+Գ+Բ

1. *գիրկ ընդ գիրկս խառն լինել* - «Այսպէս եւ մեք *գիրկ ընդ գիրկս խառն լիցուք* սիրոյն Աստուծոյ...», էջ 92,

2. *հոգ յանձին ունել* - «...այլոց ամենեցուն տամ զգուշութիւն, *հոգ յանձին ունել* եւ յԱստուծոյ աւգնութիւն հայցել...», էջ 57 (*բորն*՝ էջ 179),

3. *ձեռն ի գործ արկանել* - «...անյապաղ հնազանդութեամբ ըստ հրամանի քո *ձեռն ի գործ արկից...*», էջ 47 (*բորն*՝ էջ 186),

4. *ջան յանձին տանել* - «Զոր եւ մեք ըստ հրամանի քում... *ջան յանձին տարեալ* ընդ համառատութիւն զրուցատրութեանցն անցեալ...», էջ 48 (*բորն*՝ էջ 247),

5. *ջան յանձին ունել* - «Արդ՝ *ջան յանձին կալեալ* մտանել ի պատմագիր մատենիցս խորութիւն...», էջ 3 (*բորն*՝ էջ 247),

6. *փոյթ յանձին ունել* - «Սոքա հրամանաւ Վահան Արծրունւոյ *փոյթ յանձին կալեալ* խուզել քննել կարգել ի համառատ բանս...», էջ 48 (*բորն*՝ 273),

Բ. Բ+Ա+Գ

7. մաշել ի սուրբ սուտերի - «...առին զբաղաքն եւ *մաշեցին ի սուրբ սուտերի* զվիշապն...», էջ 118,

Գ. Բ+Գ+Ա

8. *փոխել առ թագաւորն երկնաւոր* - «...*փոխեցաւ առ թագաւորն երկնաւոր* եւ եթող բազում լալին...», էջ 84:

Երկանդամները հանդէս են գալիս հետևյալ մասնակաղապարներով.

ա. Գ+Բ - ընդամենը 42 օրինակ. *աղաչանս մատուցանեմ* («...*աղաչանս առաջի մատուցանեմ ընթերցողացդ ձեզ եւ խողաց բանի Պատմութեանս...*», էջ 54) *աղաթս առնել* («յորդորմամբ գրոցս վկայութեան *աղաթս առնել ի վերայ իմ աղաչեմ...*», էջ 29), *աղերս արկանեմ* («Արդ, *աղերս արկանեմ առաջի ձեր, որք ընթերնութ...*», էջ 86), *այց արար* (էջ 4), *դէպ լինել* (էջ 5), *զանց արարեալ* (էջ 54), *զղիմի հարկանել* (էջ 113), *զմտաւ ածել* (էջ 5), *ընդ հար-*

կիւ արկանել (էջ 125), ի բուռն առեալ (էջ 88), ի խնդիր ելեալ (էջ 10), ի խնդիր ելեալ (էջ 122), ի միտ առի (էջ 43, 128), ի ձեռն առեալ (էջ 46), մարտ եղեալ (էջ 105), միտ դնել (էջ 56), մոռացմունք եղեալ (էջ 51), յամօթ լինի (էջ 35), յոգւոց հանելով (էջ 7), յոտն կացեալ (էջ 42), յուշ արկանել (էջ 5), ուշ ունելով (էջ 117), ջան եղեալ (էջ 100), սկիզբն արարեալ (էջ 8), սկիզբն առնել (էջ 29), տապաստ անկեալ (էջ 92), տեղի տայ (էջ 73), ձեռն արկեալ (էջ 48), յանկ ելեալ (էջ 10), յանձն առեր (էջ 18, 20, 45), յանձն եղիցի (էջ 119), յաղօթս կամք (էջ 90):

բ. Բ+Գ – 11 օրինակ. անկեալ առ ոտսն («...անկեալ առ ոտսն Տեառն, լսելով զերանական ձայն...», էջ 105), ածել ի կատարումն («...Յադագս որոյ հեշտաբար ընկալեալ զքո խնդիրդ՝ աշխատասիրեցայց ածել ի կատարումն...», էջ 8), ածել զմտաւ (էջ 70), առան աւարի (էջ 19), ունել ի մտի (էջ 75), փոխեցաւ յաշխարհէս (էջ 62, տայցեմ պատասխանի (էջ 70), մատուցանել զաղաթս (էջ 57), հասանէ ի թիկունս (էջ 90), եղի ի մտի (էջ 20), վճարել ի մարդկանէ (էջ 87):

գ. Ա+Բ – 15 օրինակ. անմեղադիր լինել («...զորս աղաչեմ անմեղադիր լինել անհեղեղ գրոյս...», էջ 75), անփոյթ արասցէ («...եթէ որ արհամարհելով անփոյթ արասցէ...», էջ 37), ապախտ առնել (էջ 75), արժանի արասցիք (էջ 66, 71, 82, 120, 122, 167 և այլն), արժանի լիցուք (էջ 45, 62, 78), արտալաժ առնել (էջ 52), բարձր առնել (էջ 119), գիտակ եղեալ (էջ 118), հակառակ կալ (էջ 129), հասու լինել (էջ 5, 92, 107), ձեռնահաս լինել (էջ 131), ձեռքնկալու լիցին (էջ 43), նորաձեւս առնեն (էջ 111), ուրախ առնել (էջ 93, 119), ուրախ լեր (էջ 75):

դ. Բ+Ա – 3 օրինակ. առնել հաղորդ («...առնել զայս ամենայն կենաց իմոց հաղորդ...», էջ 94), արասցէ արժանի (էջ 61), լինելոյ ձեռնտու (էջ 20):

ե. Ա/Գ+Բ – 3 օրինակ. ծանալթ առնէ («...ծանալթ առնէ երեսաց Մրբոյ Երրորդութեան...», էջ 83), փախստական արարին (էջ 74), պարտ վարկանիմ (էջ 93):

զ. Ա/Մ+Բ – 2 օրինակ. անհետ առնելով («...անհետ առնելով զխոհերս պղծահամբաւս որոմնարկուս երեւութիցն...», էջ 67), անտես առնէք (էջ 10, 64):

է. ՆԽ+Բ – 10 օրինակ. առաջի արկանելով («...նորաստեղծ տարակուսան առաջի արկանել մեզ ոչ պարապէր», էջ 89), առաջի կալեալ («...զթագաւորական հրամանն առաջի կալեալ՝ կարծեմ արդարանալ», էջ 64), զհետ երթալոյ (էջ 56), ընդդէմ կալ (էջ 114, 115), յանդիման կացուցաք (էջ 48), յառաջ բերեալ (էջ 88), յառաջ խաղացուցանել (էջ 48), ի վերայ հասելոյ (էջ 52), ի բաց կալ (էջ 114), ի բաց... մերկանալ (էջ 53):

ը. Մ+Բ – 5 օրինակ. *ի վար արկեալ («...եւ ապա զմարգարէականն ի վար արկեալ գերգ», էջ 119), ի վայր բերել («Ոչ ի փորձ հրոյ ի վայր բերեալ ըստ պայմանի խոռոյ յաւուրն ընտրութեան», էջ 54), ընդ մէջ անցելոյ (էջ 5), ընդ վայր հարկանի (էջ 75), ընդ վայր հարից (էջ 118):*

թ. Բ+Մ – 1 օրինակ. *բառնալ... ի միջոյ («...եւ բառնալ գլիշատակս մեր ի միջոյ իւրեանց...», էջ 115):*

3 դարձվածք չեն պատկանում վերը թվարկած կաղապարներից որևէ մեկին, քանի որ նրանց ոչ բայական բաղադրիչը գրաբարյան բառարաններում⁹⁶ առանձին վկայված բառ չէ. դրանք են՝ *աշխատ լինել* (էջ 14), *խոստովան լինել* (էջ 90), *ծաղկաքաղ առնել* (էջ 59):

Քննությունը ցույց է տալիս, որ դարձվածքները կիրառված են ոչ այնքան ոճական նպատակով, որքան այս կամ այն միտքն արտահայտելու անհրաժեշտությամբ: Մա բացատրվում է թերևս այն հանգամանքով, որ. «հիշատակարանները սկզբնապես սեղմ և փոքրածավալ են եղել և հիմնականում դուրս չեն եկել համառոտ արձանագրությունների շրջանակներից: Աստիճանաբար, գրչական գործի վերելքին զուգընթաց, նրանք սկսում են ծավալվել՝ ընդգրկելով իրական կյանքի բազմազան կողմերը»⁹⁷: Այս առումով ուշագրավ կլինի դարձվածքների քննությունը արդեն հետագա դարերի հիշատակարաններում, համեմատությունը մեր քննած դարաշրջանի դարձվածքների հետ:

Այսպիսով, 5-11-րդ դարերի հիշատակարանների ժողովածուի նյութի քննությունն ամփոփելով՝ կարելի է ասել.

ա. ընդհանուր հաշվով կիրառված են 104 դարձվածքներ, որոնցից 15-ը գրանցված չեն գրաբարի դարձվածաբանական բառարանում, բայց ակնհայտորեն գրաբարյան դարձվածքների տարբերակներ են:

բ. Այդ դարձվածքներից 15-ը կարելի է համարել բառարաններում վկայված գրաբարյան դարձվածքների տարբերակներ:

գ. Դարձվածքներից միայն 1-ը գոյականական է, մյուսները՝ բայական:

գ. Ըստ բաղադրիչների քանակի 8-ը եռանդամ են, մյուսները՝ երկանդամ:

դ. Գերակշռում են Գ+Բ, Ա+Բ, Բ+Գ կաղապարների կազմությունները:

⁹⁶ Գ. Աւետիքեան, Խ. Մխրմիւղեան, Մ. Աւգերեան, *նշվ. բոլոր, Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Նորահայտ բառեր գրաբարում*, Ե., 2007, Լ. Հովհաննիսյան, *Գրաբարի բառարան. Նոր Հայկազյան բառարանում չվկայված բառեր*, Ե., 2010:

⁹⁷ Հ. Բախչինյան, *նշվ. աշխ.*, էջ 53:

Harutyunyan Knar - Phrases in the Colophons of the 5-11th Centuries. - In our report we examine Grabar (Old Armenian) phrases used in the handwritten colophones of the 5-13th centuries. We count 104 phrases, that have been classified according to their structure. We generalize that only 8 of them are composed from 3 components, the others from 2. We explain their morphological models. Also we found some phrases that hadn't been included in the dictionaries.

Арутюнян Кнар – Фразеологизмы в колофонах 5-11-ого веков. - В данной статье исследованы древнеармянские фразеологизмы, употребляемые в колофонах 5-11-ого веков. Даем их структуральный и морфологический анализ. Также рассматриваем несколько идиомов, которые до сих пор не были включены в словари.

**ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՒՐԳԵՆ ԽԱՆՁՅԱՆԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Նորաբանություններն ամեննին էլ նոր ժամանակների երևույթ չեն։ Իր «Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան» աշխատության մեջ նշելով, որ հնդեվրոպական լեզվի բառապաշարը տարբերակված է եղել ըստ գործառական-ոճական ոլորտների, և հիմնական գործառական ոլորտը եղել է առօրյա-խոսակցականը՝ Գ. Ջահուկյանը գրում է. «Սակայն, սրա հետ միասին, ինչպես ցույց են տալիս վերջերս կատարված հետազոտությունները, այդ լեզուն հանդես է եկել բանավոր խոսքի մեջ՝ սրան հատուկ պատկերավորությամբ, սիրված մակդիրներով, բանաստեղծական բնույթի (առանձնապես բարդ) բառերով, յուրահատուկ արտահայտություններով»⁹⁸։ Կասկածից դուրս է, որ այդ պատկերավոր խոսքում որոշակի տեղ են ունեցել նորաբանությունները։

Մեր լեզվի զարգացման գրային շրջանի ամենահին հուշարձաններում քիչ չեն հեղինակային նորակազմությունները։ Նոր բառեր կազմելու հայերենի գրեթե անսպառ հնարավորությունները առանձին կենսունակությամբ դրսևորվել են հայ հին ու նոր շրջանի գեղարվեստական գրականության մեջ։ Գրիգոր Նարեկացու ժամանակներից մինչև մեր օրերը գրողների կողմից բազմաթիվ նոր բառեր են կազմվել։ 20-րդ դարի 50-60-ական թվականներից սկսած՝ ռուս, ապա նաև հայ լեզվաբանության մեջ զգալի աշխատանք է կատարվել ինչպես նորաբանությունների փաստական նյութը երևան հանելու, այնպես էլ դրանք ուսումնասիրելու ուղղությամբ։ «Նորակազմությունների ուսումնասիրության հարցը առաջնակարգ նշանակություն ունի»⁹⁹, – գրում է Լ. Եզեկյանը։

Լեզվաբանական գրականության մեջ միասնական կարծիք չկա հեղինակային նորակազմությունների ըմբռնման հարցում¹⁰⁰։ Ըստ Օ. Ախմանովայի՝ հեղինակային նորակազմություններն այն բառերն են,

⁹⁸Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան*, Ե., ԳԱԱ հրատ., 1987, էջ 157։

⁹⁹Լ. Եզեկյան, *Դաֆֆու ստեղծագործությունների լեզուն և ոճը*, Երևան, ԵՊՀ հրատ., 1975, էջ 97։

¹⁰⁰Յ. Хантсра, *Окказиональные исследования*, М., Изд. МГУ, 1972, с. 166, Թ. Ղարաբայան, *Դիպլոմատիկայի և պոստեդիպոլ բառերը ժամանակակից հայերենի բառաստեղծման համակարգում*. – Լեզվի և ոճի հարցեր, N7, Ե., ԳԱԱ հրատ., 1983, էջ 213։

որոնք քաղաքացիական իրավունք են ստանում համաժողովրդական լեզվում¹⁰¹: Այլ ուսումնասիրողների կարծիքով՝ դրանք բառեր են, որոնք «դեռևս չեն կայունացել լեզվում»¹⁰²:

Յուրաքանչյուր գրողի ստեղծագործության մեջ ոճական կարևոր նշանակություն ունեն նորակազմությունները: Անկախ նրանից, թե դրանք ինչ ճանապարհով են առաջացել, վկայում են արվեստագետի ինքնատիպության, երևակայության, խոսքը տպավորիչ դարձնելու արվեստին: Այդ բառերի առաջացման հիմնական պատճառ կարելի է համարել ոճական շարժառիթը: Նորաբանությունները հանդես են գալիս հասարակական կյանքում կատարված փոփոխությունների հետևանքով, ունեն անվանողական դեր, իսկ հեղինակային նորակազմությունները ստեղծվում են լեզվի ընձեռած հնարավորություններով և ունեն ոճական դեր:

Ժամանակակից գրական հայերենում հեղինակային նորակազմությունները ստեղծվում են լեզվում առկա բառերի ու արմատների օգտագործումով: Գուրգեն Խանջյանը վարպետորեն օգտվել է հայոց լեզվի բառակազմական հնարավորություններից՝ ստեղծելով բարդ և ածանցավոր շատ բառեր, որոնք համահունչ են վիպական բառապաշարին և խոսքին: Նկատելի տեղ են զբաղեցնում համադրական բարդությունները, հատկապես համադրման հիմունքով կազմված այնպիսի կապակցությունները, որոնք հանդես են գալիս երկու, երբեմն ավելի հասկացություններ արտահայտելու համար:

Բառաբարդումը հայերենի բառակազմական համակարգի ձևավորման արդյունավետ ու գործունեղանակներից է: Ձևութաբանական մոտեցմամբ բառաբարդումը կարելի է բնորոշել որպես երկու կամ ավելի հիմնական ձևությունների միավորում արդեն շրջանառվող կամ նոր իմաստի մեջ: Երկու դեպքում էլ ստեղծվում են լեզվական միավորներ՝ բառեր, սակայն մի դեպքում այն նոր ձևի մեջ նոր հասկացություն չի արտահայտում, մյուս դեպքում երկուսն էլ առկա են: «Բառաբարդությունները ստեղծվում են ոչ միայն նոր հասկացություններ արտահայտելու պահանջով, այլև երկու կամ ավելի իմաստներ մեկ բառով արտահայտելու անհրաժեշտությամբ, որ հաղորդակցման առավել տնտեսված և արտահայտիչ միջոց է»¹⁰³:

¹⁰¹ Օ. Ахманова, *Словарь лингвистических терминов*, М., УРСС, 1969, с. 262.

¹⁰² А. Смирницкий, *Объективность существования языка*, М., Изд. МГУ, 1954, с. 17-18.

¹⁰³ *Ժամանակակից հայոց լեզու*, հ. 1, Ե., ԳԱԱ հրատ., 1979, էջ 251:

Արձակագրի ստեղծած նոր բառերը հիմնականում համապատասխանում են մեր լեզվի կենսունակ կաղապարներին և ունեն գեղարվեստական արժեք: Բանաստեղծական խոսքում ածական + գոյական, գոյական + ածական, գոյական + բայահիմք կաղապարներով կերտված բարդությունները առավելապես մակդիրային կիրառություն ունեցող ածականներ են:

Բարդությունների մեջ իշխողը երկարմատներն են, որոնք լինում են՝ գոյականի խոսքիմասային արժեքով բաղադրություններ և ածականի խոսքիմասային արժեքով բաղադրություններ և այլն: Սրանք կազմվում են Ա-հ-Ա կամ Ա-Ա կաղապարներով, իսկ բաղադրիչները, լինում են գոյական, բայց կարող են ունենալ նաև խոսքիմասային տարբեր արժեքներ:

Հեղինակային նորակազմությունների տիպերի մեջ լայնորեն կիրառվում են գոյականի ու ածականի խոսքիմասային արժեքով երկարմատ բարդությունները: Գոյական-գոյական՝ խոսքիմասային նույնական արժեքով բարդությունները (Գ. Ջահուկյանի բնորոշմամբ՝ համագործառական կամ համակաղապարային) բարդություններն ունեն խոսքիմասային նույն արժեքը, ինչ բարդության հիմքային, այսինքն՝ վերջին բաղադրիչը: Հարկ է նշել, որ գոյականի խոսքիմասային արժեքով համակաղապարային կազմություններն իրենց մասնակաղապարներով զգալիորեն գերակշռում են փոխկաղապարայիններին: Գոյականի արժեքով գոյական + գոյական մասնակաղապարով բարդություններն առավելապես կազմվում են հատկացուցիչ -հատկացյալ, երբեմն նաև որոշիչ-որոշյալ հարաբերությամբ: Այդ կազմությունները գերազանցապես երկբաղադրիչ են, եռաբաղադրիչ կազմությունները սակավադեպ են: Ածականի խոսքիմասային արժեքով երկարմատ բարդությունները կազմվում են խոսքիմասային տարբեր արժեք ունեցող բաղադրիչներից՝ գոյական-գոյական, գոյական-բայարմատ, գոյական-ածական, գոյական-մակբայ և այլն: Տարբեր խոսքի մասեր զուգորդվելով՝ կազմում են նոր բարդ բառ՝ գոյականի, ածականի խոսքիմասային արժեքով: Դիտարկենք նշված կաղապարներով կազմված հեղինակային նորակազմությունների օրինակներ.

ԹԵԼԱՓՈՒՆՁ (գոյական) – թել + փունջ (գոյական + գոյական կաղապար)՝ «...*Կեղտոտ մուտքերով գրպանները՝ հեռացվել - կախկիսվել, գույգ դեղին կոճակները լիտիկ որովայնը պրկած՝ ձիկ կոճկված էին, երրորդ կոճակի բացակայությունը շեշտում էր ցցված նոր **թելափունջը**, երկնագույն վերնաշապիկի կրծքամասում յուղաբծեր էին առանձնանում, սրան*

հակառակ՝ մուգ կանաչ փողկապը մաքուր էր, մետաղյա ամրակով վերնաշապիկին գամված ...» («Ենոքի աչքը», 6)¹⁰⁴:

ԼՈՒՄՆԱՇԵՂԲ (գոյական) – լույս + ին + ա + շեղբ (գոյական + ածանց + հոդակապ + գոյական)՝ «Մետրոյում թունելախորշով մոտեցող **լուսնաշեղբը** դեռ հեռվից նկատած, իբր խուճապահար, սկսում էր անհարկի հրվշտել մարդկանց, իսկ վագոնում բազմության մեջ այնպես էր հարմարվում, որ բռնակներից բռնվելու կարիք չլիներ և անդադար կեղծ հորանջում էր՝ ուղևորների դեմքին փչելով սխտորահոտը» («Նամակներ ընթացից», 8):

ԱՂԲԱՆՁՐԵՎ (գոյական) – աղբ + անձրև (գոյական + գոյական)՝ «Բարեբախտաբար, կոշտ առարկաներ չկային այդ **աղբանձրևի** մեջ» («Հիվանդանոց», 53):

ՀԻՄՆԱԹՈՒՄԲ (գոյական) – հիմ(ն) + ա + թումբ (գոյական + հոդակապ + գոյական)՝ «Նախկին գործարանի սրահներում հաստոցներ չկային, նրանց երբեմնի ներկայությունը հուշում էին թափուր մնացած բետոնե **հիմնաթմբերը**՝ ցցված երկաթաձողերով» («Ենոքի աչքը», 127-128):

ԱՄՊԱՇԵՐՏ (գոյական) – ամպ + ա + շերտ (գոյական + հոդակապ + գոյական)՝ «Ուզում էի ասել՝ երկնքից, բայց համատարած գորշ **ամպաշերտն** այնքան ցածր է կախված, որ երկնքի մասին հիշատակումն անհեթեթ թվաց» («Հիվանդանոց», 194):

ԼՈՐՁԱՍՈՒՅՁ, ԼՈՐՁԱՎՅԱՅ – (ածական)՝ լորձ + ա+ սույզ, լորձ + ա+ կյաց (գոյական + հոդակապ + բայարմատ), լորձ + արյուն (գոյական+ գոյական)՝ «Սակայն ինչեր են սպասում քեզ այնտեղ, ինչ լորձառատ գիշերներ, լորձամած առավոտներ, և դու՝ **լորձասույզ, լորձակյաց**, երջանիկ ու պարտացնող, ինչպես մի սունկ, որ հպարտ է իրենով, **լորձարյուն** խեղճիկ, որին կթվա, թե խեղճիկ չէ այլևս» («Նամակներ ընթացից», 267):

ԼԻԵՐԱՆ (մակբայական կիրառությամբ է հանդես գալիս) – լի + երախ (ածական + գոյական կադապար)՝ «...Ցեխով-արյունով սվաղված աչքերը շողշողալով թիրախ էին փնտրում, վերջապես շարժվեց, խաբս տվեց-շեղեց գամփռի ուշադրությունը, ինքը մյուս կողմից նետվեց ու **լիերախ** հափռեց նրա ականջը» («Ենոքի աչքը», 26):

Շեղինակային որոշ բառերի համար բնորոշ է նաև հետևյալ առանձնահատկությունը: Հայտնի է, որ իսկական բարդության բաղադրիչներից

¹⁰⁴**Գ. Խանջյան**, *Ենոքի աչքը*, Ե., 2012, *Հիվանդանոց*, Ե., «Անտաբես», 2012 և *Նամակներ ընթացից*, Ե., «Ապոլլոն», 2009: Հետագա շարադրանքում մեջբերումներից հետո նշվում է համապատասխան էջը:

առաջինն է լրացնում երկրորդի իմաստը, և, բնականաբար, լրացնող բաղադրիչը պետք է հանդես գա բարդության առաջին եզրում (անկախ նրանից, թե բարդությունը որոշիչ-որոշյալի, հատկացուցիչ-հատկացյալի, թե շարահյուսական այլ հարաբերություն է արտահայտում), սակայն մի շարք նորակազմ բարդություններում ստացվում է այնպես, որ ոչ թե որոշիչն է գտնվում բարդության առաջին եզրում, այլ որոշյալը, ինչպես՝

ԺԱՆԻՔԱԲԱՅ – «Գոռը մացառների մեջ փայտ կամ երկաթաձող փնտրեց՝ աչքի պոչով հետևելով **ժանիքաբաց երախների անցուղարձին, ամենից մոտիկ եկածը կախկուրծք էգ էր**» («Ենոքի աչքը», 126):

ԼՈՐՁԱՌԱՍ – «Սակայն ինչեր են սպառում քեզ այնտեղ, ինչ **լորձառաստ** գիշերներ, լորձամած առավոտներ, և դու՝ լորձասույզ, լորձակյաց, երջանիկ ու պարարտացնող, ինչպես մի սունկ, որ հպարտ է իրենով, լորձարյուն խեղճիկ, որին կթվա, թե խեղճիկ չէ այլևս» («Նամակներ ընթացից», 267):

Լայն կիրառություն ունեն նաև գոյական կամ ածական խոսքիմասային արժեք ունեցող այն բարդությունները, որոնց երկրորդ բաղադրիչը բայահիմք է: Ածականի խոսքիմասային արժեքով այս մասնակաղապարի նորակազմ ձևերում հաճախադեպ են երկբաղադրիչ հոդակապավոր խկական բարդությունները, որտեղ բայ լրացյալի դերով հիմնականում հանդես է գալիս բայարմատ կամ բայահիմք և բայիմաստից կախված՝ դրսևորում խնդրային (համարժեք բառակապակցության մեջ՝ առավելապես ենթակայական դերբայով) ու պարագայական հարաբերություններ, ինչպես օրինակ՝ **լորձածածկ =լորձով ծածկված, թթվավաճառ =թթու վաճառող, կշռույթավրեպ = կշռույթից վրիպող** և այլն: Դիտարկենք այլ օրինակներ.

ԼՈՐՁԱԾԱԾԿ, ԼՈՐՁԱԼՎԱ (ածական) – լորձ + ա + ծածկ, լորձ + ա + լվա (գոյական + հոդակապ + բայահիմք)՝ «*Լորձացող ծառեր, **լորձածածկ փողոցներ, լորձոտ ագռավներ, լորձալվա շուն, լորձամած ձի...***» («Հիվանդանոց», 41):

ԿՇՈՈՒՅԹԱՎՐԵՊ (ածական՝ մակբայական կիրառությամբ) –կշիռ + ույթ + ա + վրեպ (գոյական +աձանց +հոդակապ + բայահիմք)՝ «*Այդպես երկար պառկած մնաց ջրում, էլի կմնար, սակայն սիրտն սկսեց ուժգին բաբախել, առժամանակ էլ՝ **կշռույթավրեպ թպրտալ***» («Հիվանդանոց», 45):

ԹԹՎԱՎԱՃԱՌ (գոյական) – թթու +ա + վաճառ (գոյական + հոդակապ + բայարմատ)՝ «*Մալական **թթվավաճառների** հետ ռուսերեն խոսեց, վրացական հաց թխողի հետ՝ վրացերեն, ձկնավաճառի հետ՝ Քյավառի բարբառով, հոնի օղին համտեսեց՝ ասեց՝ շատ է թունդ, տնաշեն, թուլացրու*» («Ենոքի աչքը», 72):

ԶԳԱՅԱԶԳԱՅ (մակբայ) – զգա+(յ)+զգաց (բայահիմք + հոդակապ + բայահիմք)՝ «Նրա կոնքն այլևս **զգայազգաց** չէր շարժվում, այլ՝ հուժկու, թափով՝ ետ-առաջ, ձախ-աջ, ճշում, գոռում, նույնիսկ հայհոյում էր անհասկանալի՝ ասես ինչ-որ մեռած լեզվի հարություն տված» («Ենոքի աչքը», 38-39):

Անհատական նորակազմությունների ձևաբանական կողմը բավականին բազմազան է: Դրանք հանդես են գալիս տարբեր խոսքիմասային արժեքներով, սակայն այդ խոսքի մասերին պատկանող բառերը քանակական ու արտահայտչական առումով հավասարաչափ կիրառություն չունեն: Ինչպես գործածական հաճախականությամբ, այնպես էլ իրենց արտահայտչականությամբ գեղարվեստական խոսքում մեծ արժեք ունեն ածականները: Եվ դա ինքնըստինքյան հասկանալի է, եթե նկատի ունենանք, որ գեղարվեստական խոսքում ածականները, հատկապես որպես մակդիր գործածվելիս, անփոխարինելի միջոց են առարկաներն ու երևույթները ինքնատիպ կերպով բնորոշելու համար խոսքի գեղարվեստական արժեքը բարձրացնելու իմաստով:

Լեզվական նորաբանությունների կառուցվածքային տիպերի մեջ հանդիպում ենք նաև ածանցավոր կազմությունների, բայց ածանցումը՝ որպես բառակազմության եղանակ, բնորոշ չէ հեղինակային նորակազմություններին և այնքան գործուն դեր չունի բառակազմության մեջ, որքան բարդությունը: Անկախ վիճակագրական այս տվյալներից՝ ասենք, որ ածանցավոր բառերի մեջ կան և՛ նախաձանցավոր, և՛ վերջաձանցավոր կազմություններ: Գործածական հաճախականությամբ կենսունակություն են դրսևորում -անք, -ում, իկ, -յա, ան-, գեր- ածանցներով կազմված նորաբանությունները: Ածանցման հիմնակադապարն իրենից ներկայացնում է մեկ հիմնական և մեկ երկրորդական ձևային՝ ածանցի բաղադրություն, իսկ ըստ հիմնական ձևային նկատմամբ գրաված դիրքի՝ ածանցման կաղապարները բաժանվում են նախաձանցավորների և վերջաձանցավորների:

Ինչպես գրաբարում, այնպես էլ ժամանակակից հայերենում ածանցման վերջաձանցավոր կաղապարները զգալիորեն գերակշռում են նախաձանցավորներին, սակայն դա չի նշանակում, որ նախաձանցավոր կաղապարները հայերենի զարգացման որոշակի փուլում բառակազմական ակտիվություն չեն ցուցաբերել¹⁰⁵:

¹⁰⁵Գ. Զահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, Ե., ԳԱԱ հրատ., 1974, էջ 152:

Ակնհայտ է, որ գեղարվեստական խոսքում գերակշռություն ունեն ածականակերտ ածանցները: Դրանցով կազմված նորանոր բառերով գրողները թարմացնում ու ուժեղացնում են խոսքի արտահայտչականությունը, պատկերավորությունն այնպիսի միջոցներով, ինչպիսին մակդիրն է: Ինչ վերաբերում է գոյականակերտ ածանցներին, ապա պետք է նկատել, որ դրանցով հիմնականում ստեղծվում են գոյականներ, որոնց փոխարեն խոսքում պիտի գործածվեր բայը: Դիտարկենք ածանցավոր նորակազմությունների օրինակներ.

«Իմ քեռին, որ գերառաքինի էր, երբ լրջորեն հալից ընկավ, իրեն հարգել ստիպեց» («Ենոքի աչքը», 152):

«Առաստաղի տակով էլեկտրական լարերի հաստ փնջեր էին ձգվում, պատերի տակով անցնում էին տարաչափ խողովակների անցքերը» («Հիվանդանոց», 58):

«Ենոքի մենայա հայացքը սևեռվել-մնացել էր թեյի բաժակին, կեսն էր խմել, մյուս կեսը ժամանակ առ ժամանակ գդալով խառնում էր, բայց վերստին մտքերի մեջ ընկնում...» («Ենոքի աչքը», 99):

«Վարպետորեն էր նկարված նաև երկինքը՝ երկնագույնի մեղմանցում երանգներ, մի քանի նուրբ փետրավոր ամպեր, որոնց եզրերը վարդագույնով էր շոյում նկարի վրա բացակայող արեգակի մայրամուտային մեղմ լույսը» («Հիվանդանոց», 72):

Վերջին տասնամյակներում բառակազմության մեջ զգալի տարածում է գտել հետևյալ երևույթը. երկու միևնույն ածանցն ունեցող բառեր, որոնք միևնույն լրացյալն ունեն, միավորվում են գծիկով (կամ առանց գծիկի), և նրանցից առաջինը կորցնում է իր ածանցը, իսկ երկրորդի ածանցը տարածվում է երկուսի վրա: Այս հարցին առավել հանգամանորեն անդրադարձել է Է. Աղայանը: Նա կառուցվածքային այս տիպի վերլուծական բաղադրություններն անվանել է հատվածական բաղադրություններ, որոնք «ստացվում են նույնանուն կամ համանիշ ածանցներով կազմված ածականների համադասական կամ ստորադասական կապակցություններից՝ առաջին անդամի ածանցի կրճատումով և շաղկապի վերացումով, ինչպես՝ ռազմական և քաղաքական կամ ռազմական-քաղաքական-ռազմաքաղաքական...»¹⁰⁶, ինչպես օրինակ՝ «Սևաթույր խոպոպներով առանձնանում էր ընդհանուր կոստյումափողկապային ոճից» («Ենոքի աչքը» 123): Այսպես՝

¹⁰⁶ Է. Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, ԵՊՀ հրատ., էջ 241:

հերոսի ոչ դասական, ոչ կոստումային հագուկապը նկարագրելու համար Խանջյանը կազմել է **կոստումափողկապային** բառը:

Ինչպես Է. Աղայանն է նշում, ժամանակակից հայերենի բառակազմական օրինաչափությունները հնարավորություն են տալիս մինևույն բաղադրիչներով բառեր կազմել նաև բաղադրիչների փոխատվությամբ¹⁰⁷:

Ցեխակոլոլ, բարձունք և այլ բառերի համաբանությամբ գրողը կազմում է **թքակոլոլ, ցածրունք** բառերը, ինչպես օրինակ՝

«**Թքակոլոլ**, ցեխոտ, արնոտ՝ նա էլի անվրդով տարուբերում էր իր առնետային պոչը» («Ենոքի աչքը», 27):

«Սակայն ստույգ, մարգագետինն չնայես գեղեցիկ -տգեղ, չար -բարի, տխուր -ուրախ հասկացությունների **ցածրունքից**, կպարսվես, որովհետև մարգագետինը քո իմաստություններից անդին է սփռված («Նամակներ ընթացից», 254):

Ժամանակակից հայերենում առկա **տնաշարք** բառի փոխարեն Գ. Խանջյանը գործածում է **տնաշար** բառը, ինչպես օրինակ՝

«Գերեզմանատան կարմրավուն պարիսպն ընդառաջ եկավ՝ փոխարինելով ձախակողմյան տնաշարին» («Ենոքի աչքը», 220):

Իսկ **եռամատ** բառը, որ ժամանակակից հայերենում բնորոշվում է «երեք մատ ունեցող, երեքմատնանի» կամ «երեք մատների օգնությամբ կատարվող» իմաստներով¹⁰⁸, գործածվում է այլ՝ «երրորդ մատ» նշանակությամբ, ինչպես օրինակ՝

«Վար պարզեց եռամատը՝ գոռալով. «Ա՜ռոր քեզ» («Ենոքի աչքը», 15):

Նոր բառերի կազմում անհամեմատ փոքր թիվ են կազմում մակբայները, օրինակ՝ «**Լոռիում հին տուն է գնել, քանդել՝ տեղում նորը կառուցել, տիրավարի է գնում-գալիս էս տարածքներում...**» («Ենոքի աչքը», 10): Փոխարենը մեծ թիվ են կազմում ածականական այն նորակազմությունները, որոնք հանդես են գալիս մակբայական կիրառությամբ, ինչպես օրինակ՝ «**Հեռավոր պատին դռնաչափ վարագուրված տարածք կար**» («Հիվանդանոց», 56):

Հեղինակային նորակազմությունների համակարգում իրենց ոճական արժեքով և կիրառական հաճախականությամբ որոշակիորեն տարբերակվում են, այսպես կոչված, դիպվածական բառերը: Դրանք հեղինակային

¹⁰⁷ Է. Աղայան, *Հնդհանուր և հայկական բառագիտություն*, էջ 147-148:

¹⁰⁸ Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, հ. 1, Ե., 1976, «Հայաստան» հրատ., էջ 329:

այն նորակազմություններն են, որոնք գործածվում են բանավոր - խոսակցական լեզվում, հրապարակախոսության մեջ, գեղարվեստական ոճում և հատկապես մամուլում, խոսքային տվյալ իրավիճակում նյութի թելադրանքով կամ հեղինակի ոճական որոշակի նպատակադրումով խոսքն ավելի համոզիչ, պատկերավոր դարձնելու համար: Ըստ Թ. Ղարազուլյանի՝ դիպվածային բառերը, «պատկանելով լեզվի կիրարկությանը, այսինքն՝ միայն խոսքին, հանդես են գալիս որպես խոսքի բառային միավորներ, բայց ոչ լեզվի և պայմանավորված են խոսքային տվյալ իրադրությամբ»¹⁰⁹: Ըստ որում, այս կարգի նորաբանությունները կարող են միայն մեկանգամյա գործածություն ունենալ խոսքային տվյալ միջավայրում, իսկ հետագայում ընդհանրապես դուրս մնալ բառապաշարի ոլորտից: Հենց այս առումով էլ սրանք պա-տեհային, դիպվածային (օկազիոնալ) կազմություններ են: Դիտարկենք օրինակներ.

«Էս կնճիռները հըլա, հըլա էս սմբած մաշկը, էս կախկախ միսը... ոնց որ իմը չըլնի, էս աչքիս ճպուռը, էս խալուզորտնուկը» («Ենոքի աչքը», 79):

«Մեղք են, տո, դիպի մեղք են, իմ արև, դաժե՛ Կակուռին, որ քույրի ամենակրախաբոր մարդն էր» («Ենոքի աչքը», 224):

«Ցածրահասակ, կախհետույք, ծուռ ոտքերով հոգնած կին է (*«Հիվանդանոց», 92*):

«Պրոֆեսորը բարեկամաբար թփթփացրեց նրա ուսը, և Գրիգորը նորից տեսավ այդ տարօրինակ, քաղցրակծվածոր, կպչուն հայացքը» (*«Հիվանդանոց», 31*):

«Միայն թե չհեռանաս, չլքես ինձ, այլապես կդատարկվեմ՝ նկուղում մոռացված թեփաթափ խամաճիկի պես» (*«Նամակներ ընթացից», 220*):

«Այս տիպի բառերի ստեղծման առիթային, վայրկյանի մղումով կամ էքսպրոմտային բնույթը, պայմանավորված կոնկրետ համատեքստային իրադրության պահանջով, իր հետ ներմուծում է ինչ-որ չափով հնարավոր, «թխած» լինելու արտասովորության որակ, որից էլ բխում են նմանօրինակ բառերի ոճական արդյունավետությունն ու ընդգծված անհատական դրոշմը¹¹⁰: Խոսքային գործածությամբ երևան եկած նորակազմությունները՝

¹⁰⁹ Թ. Ղարազուլյան, *Դիպվածային և պոտենցիալ բառերը ժամանակակից հայերենի բառաստեղծական համակարգում*. – Լեզվի և ոճի հարցեր, N7, Երևան, 1983, էջ 202:

¹¹⁰ Ս. Էլոյան, *Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն*, Ե., 1989, ԳԱԱ հրատ., էջ 198:

որպես ոճական երևույթ, չեն հատկանշվում լեզվական իրողության վերածվելու որոշակի անհրաժեշտությամբ:

Բառակազմական նորմայից կատարվող շեղումները կարող են դրսևորվել նաև արմատի բառացումով կամ կրճատ ձևով գործածությամբ: Օրինակ՝ վախենալ բառի փոխարեն Խանջյանի ստեղծագործություններում հանդիպում են վախել դիպվածային բառի կիրառությունները, օրինակ՝

«Կխփենք, չվախես, – պատասխանեց կրտսեր սպան. աչքերի սառը փայլը հուշում էր, որ կխփի, այն էլ՝ մեծագույն հաճությամբ» («Ենթի աչքը», 13):

«Չվախես, հայրդ կորչող չի, հերթական Նատաշի ծոցում է, իսկ երբ նա այնտեղ է՝ ամեն բան մոռանում է... Բայց չմեղադրենք, նա էլ այդ տեսակի մարդ է» («Ենթի աչքը», 74-75):

Այսպիսով՝ Գուրգեն Խանջյանի կազմած նորաբանությունները հիմնականում կերտվել են մեր լեզվի կենսունակ կադապարներին համապատասխան, հանդիպում են նաև բառակազմական նորմից շեղումներ, որոնք նպատակադիր բնույթ ունեն: Գրողին հետաքրքրող որոշ դեպքերում թերևս ոչ այնքան ստեղծվող բառի ճշտությունն է, այլ համապատասխան հասկացությունը թարմ, ինքնատիպ կողմով դրսևորելը: Գ. Խանջյանի կերտած բառերը հիմնականում համահունչ են իր ստեղծագործությունների լեզվին, կարևոր դեր են կատարում նաև լեզվական միջավայրի ապահովման ու կերպարների խոսքի ոճավորման առումով:

Оганнисян Мери– Неологизмы в прозе Гургена Ханджяна. – Статья посвящена исследованию неологизмов Г. Ханджяна, которые представляют собой примечательную особенность его прозы. Придавая произведениям неповторимый колорит, они чрезвычайно важны для углубленного понимания его художественной манеры. Словообразовательные модели неологизмов Г. Ханджяна весьма самобытны. Самобытностью отмечены, в частности, его существительные новообразования, а также необычное употребление некоторых суффиксов. Стилистическую значимость неологизмов для творчества писателя, а также их роль в его искусстве невозможно переоценить.

Hovhannisyen Meri– Neologisms in Gurgen Khanjyan’s works. – The article is devoted to the research of G. Khanjyan’s neologisms, which represent a remarkable peculiarity in his prose work. Giving his prose a unique colouring, they are quite

important for profound understanding of his artistic manner. Word-forming models of G. Khanjyan's neologisms and particularly important for the formation of new nouns: the usual use of some suffixes are also rather original. It is difficult to overestimate the stylistic significance of neologisms and their role in his art.

ԶԼՄ-ի ԼԵԶՈՒՆ ԱՆԱՂԱՐՏ ՊԱՇԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿ

Լեզվական սխալ գործածությունների մասին շատ է խոսվում: Վերջիններիս տարածմանը նպաստում են հատկապես զանգվածային լրատվության միջոցները: Լրատվության ոլորտի լեզվական սխալները, որպես կանոն, առօրյա-խոսակցական լեզվի սխալ կիրառություններն են: Երբեմն պատահում է աս, երբ ԶԼՄ-ի միջոցով տարածում գտած լեզվական սխալ կիրառությունները որպես լեզվական ճիշտ կիրառություններ անցնում են առօրյա-խոսակցական լեզու: Սա լինում է հատկապես այն դեպքում, երբ լեզվական սխալ կառույցները գործածում են հանրային ճանաչում և ազդեցություն ունեցող անձինք: Նրանց կողմից սխալ կիրառությունները, որպես կանոն, ավելի արագ են տարածվում լեզվում: Օրինակ, հայտնի է, որ *բացի* կապի հետ գործածվող բառը, թե՛ նախադաս, թե՛ հետադաս դիրքում, դրվում է բացառական հոլովով՝ *Սուրենից բացի, բացի Սուրենից, գրքից բացի, բացի գրքից: Բացի* կապի հետ ուղղական հոլովով դրված բառային սխալ կիրառություններն այժմ մեծ տարածում են գտել՝ *բացի Սուրենը, բացի գիրքը, բացի որոշումը, բացի նա*: Լեզվական սխալ կիրառությունների տարածմանը նպաստում են նաև սոցիալական ցանցերի գրառումները:

ԶԼՄ-ի լեզվում մեծ տարածում գտած լեզվական սխալ կիրառություններ են նաև օտարաբանությունները: Լ. Եզեկյանը «Հայոց լեզվի ոճագիտություն» գրքում, անդրադառնալով օտարաբանություններին, ներկայացնում է նաև ռուսաբանությունները¹¹¹: Հիշեցնենք, որ գիրքը լույս է տեսել 2007 թվականին՝ ավելի քան ութ տարի առաջ, մինչդեռ հեղինակի մատնանշած լեզվական սխալ կիրառություններն այսօր էլ ունեն գործածության լայն շրջանակ: Տարածված ռուսաբանություններ են *բանը կայանում է նրանում, բանը նրանում է, կովել թշնամու հետ (с соперником), գրլխարկ հագնել, ակնոցներ հագնել* արտահայտությունները, ինչպես նաև ենթակա ունեցող նախադասության մեջ կրկնակի ենթակայի՝ *эмо* բառի անհարկի կիրառությունը՝ *любовь это жизнь, սերը դա կյանք է...* Լեզվական այս և այլ սխալների մասին լեզվաբանները հաճախ են բարձրաձայնում, բայց, ինչպես ասում են, ձայն բարբառոյ յանապատի:

¹¹¹Լ. Եզեկյան, Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2007, էջ 149-155:

Հոդվածի նպատակը, սակայն, լեզվական սխալ կիրառությունները մատնանշելը չէ, քանի որ դրանց մասին բազմիցս բարձրաձայնվել և բարձրաձայնվում է, այլ լեզվական սխալ կիրառությունների դեմն առնելու միջոց առաջարկելը:

Ասում են՝ հիվանդությունը բուժելու համար պետք է այդ հիվանդության պատճառը գտնել: Լեզվաբանները լեզվական սխալների տարածման խնդիրը փորձում են լուծել վերջից, այնտեղից, որտեղից բուժումն իրատեսական չէ: Օրինակ, լեզվի ինստիտուտը 2014 թվականին լեզվական սխալ կիրառությունների ցանկ էր կազմել և ուղարկել խմբագրություններ: Ներսից տեղյակ լինելով գործընթացի վերջնարդյունքին՝ տեղեկացնենք, որ ԶԼՄ-ի մեծ մասը դրանք ի գիտություն չէր ընդունել, քանի որ այսօր խմբագիրների զգալի մասը մասնագիտությամբ լեզվաբան չէ, հետևաբար նրանք լեզվաբանի պես սրտացավ չեն, խորը չեն գիտակցում լեզվի անադարտության պահպանման խնդիրը: Խմբագիրը կարող է լինել մասնագիտությամբ տնտեսագետ, հաշվապահ, PR-ի, գերմաներենի մասնագետ: Մինչդեռ խմբագիրը գործ ունի տեքստի հետ, հետևաբար, նախընտրելի է, որ լեզվաբան լինի: Լեզվաբան խմբագիրները սովորաբար ավագ սերնդի ներկայացուցիչներն են, նրանք, ովքեր խորհրդային տարիներին կամ անկախության առաջին տարիներին, երբ չկար ժուռնալիստիկայի ֆակուլտետը, ավարտել են հայ բանասիրության ֆակուլտետը, երկուսը մեկում են: Այդ լրատվամիջոցների լրագրողների բախտը բերել է: Եթե այն ժամանակ, ավագ խմբագիրների հավաստմամբ, կարևոր էր գրագիտությունը, լեզվի իմացությունը և մինչև խմբագրի՝ հանրային լուրջ պաշտոնը զբաղեցնելը մասնագետներն այսպես ասած՝ «մադով էին անցնում», ապա հիմա շատ բան է փոխվել: Նախ ԶԼՄ-ի թիվն է շատացել, խմբագրի պահանջարկն է մեծացել, այսինքն՝ հաճախ լավագույն մասնագետների պակասը սխալ ընտրության է հանգեցնում: Այս ամենին զուգահեռ նաև ժուռնալիստիկայի պահանջներն են փոխվել. այժմ կարևոր է խմբագրի պրակտիկությունը, շուտ կողմնորոշվելու ունակությունը, և ամեննին էլ մտահոգիչ չէ, որ խմբագիրը չգիտի, որ, օրինակ, *բանը նրանում է, բանը կայանում է նրանում* կամ *ակնոցներ հագա* արտահայտությունները ռուսաբանություն են, հայերենում՝ սխալ կիրառություններ: Խմբագրի համար կարևորն այն է, որ լուրն արագ հայտնվի եթերում, հասկապես համացանցում՝ հաճախ անգամ առանց խմբագրման:

Սա չի նշանակում, որ լեզվաբան խմբագրի՝ լրագրող լինելը պարտադիր չէ, հակառակը, փորձը ցույց է տալիս, որ եթե լեզվաբանը, առանց

լրատվական ոլորտում աշխատելու, դառնա խմբագիր, լավ խմբագիր չի լինի:

Լեզվական սխալ կիրառությունների տարածման խնդիրը միայն խմբագրի վրա բարդելը, անշուշտ, օբյեկտիվ չէ: Լրագրողը ևս պետք է գրագետ լինի: Ժուռնալիստիկայի ֆակուլտետում լեզուն ուսումնասիրում են այնպես, ինչպես տնտեսագետները, երկրաբանները, ֆիզիկոսները, այսինքն՝ ընդամենը երկու տարի: Դպրոցում ստացած գիտելիքների պայմանում հայոց լեզվի ուսուցման համալսարանական կրթության երկու տարին, համաձայնե՛ք, քիչ բան կարող է տալ ուսանողին: Ստացվում է՝ ժուռնալիստիկայի ֆակուլտետի շրջանավարտ է դառնում լրատվական դաշտի մասին տեսական գիտելիք ունեցող, բայց լեզվական առումով կաղ լրագրողը: Բախտը կբերի, եթե մասնագիտական տեսանկյունից բարեխիղճ խմբագրի հանդիպի:

Լեզուն հնարավորինս անաղարտ պահելու համար խնդրի արմատական լուծում է պետք: Լեզվի ինստիտուտի նախաձեռնությունն, իհարկե, առաջին քայլն էր, սակայն դեռևս ոչ արդյունավետ, քանի որ եթե լրատվամիջոցը ստանում է սխալ կիրառությունների ցանկը, բայց դրանք չի ներկայացնում թիմում աշխատող լրագրողներին, արդյունք չի լինի: Լրագրողը տեքստը կգրի, խմբագիրն էլ լուրը արագ տեղ հասցնելու միտումով կարող է և աչքաթող անել լրագրողի սխալը, սա լավագույն դեպքում: Վատագույն դեպքում, օրինակ, հաշվապահ կամ տնտեսագետ խմբագիրը չի էլ իմանա, որ տեքստը թերի է խմբագրել:

Խնդիրը լուծելու համար ժամանակ է պետք, բայց ոչ մեկ ամիս, ոչ էլ մեկ տարի: Մեր կարծիքով՝ լեզվի ինստիտուտը պետք է հանդես գա ծրագրային փոփոխություն անելու առաջարկով, այն է՝ դիմի պատկան մարմիններին՝ ժուռնալիստիկայի ֆակուլտետում հայոց լեզվին և հատկապես գրաբարին հատկացված դասաժամերը համապատասխանաբար ոչ թե երկու և մեկ, այլ 4 տարի դարձնելու պահանջով, ոչ թե ստուգաթիվ, այլ քննությամբ, ավելին՝ ավարտական քննությամբ: Լրագրողները լեզուն պետք է ուսումնասիրեն լեզվաբանի խորությամբ: Եթե ժուռնալիստիկայի ֆակուլտետի շրջանավարտը լրատվական դաշտ մտնի հայոց լեզվի խոր իմացությամբ, ֆակուլտետն ավարտած առնվազն մեկ սերունդ հետո խնդիրը մասամբ շտկելու հնարավորություն կունենանք: Մրան զուգահեռ կա ևս մեկ քայլ. օրենսդրական փոփոխությունից հետո լեզվի տեսչությունը պետք է լրատվամիջոցների լեզուն հսկի, օրինակ, ամսվա կտրվածքով տուգանքի չափ սահմանի և ներկայացնի ԶԼՄ-ին լեզվական սխալ կիրառությունների

համար: Եթե գործը հասնի լրատվամիջոցի գրպանին, լեզվի անադարտության պահպանման խնդիրն օրակարգային կդառնա անգամ տնտեսագետ կամ հաշվապահ խմբագիր ունեցող լրատվամիջոցի համար:

Ինչ վերաբերում է լեզուն կատարելապես անադարտ պահելուն, նման փորձը, անշուշտ, անիմաստ է: Լեզուն կենդանի օրգանիզմ է և լիակատար հսկողության ենթարկելն անհնար է: Հնարավոր է միայն առավելագույնս զերծ մնալ լեզվական սխալներից:

Мурадян Лусине- Предложение о сохранения языка СМИ без лингвистических ошибок.- Лингвистические ошибки распространяются через средствами массовой информации, а в СМИ часто работают журналисты и редакторы, которые являются бухгалтерами, экономистами, специалистами немецкого языка, но не лингвистами. Это становится причиной, что вместо исправления лингвистические ошибки распространяются средствами массовой информации. В статье мы предлагаем делать изменение в программе факультета Журналистики. Журналист должен изучать язык как лингвист.

Muradyan Lusine- A suggest about keeping incorrect the language of mass media.- Incorrect linguistic structures are spreaded by mass media, and in mass media often works journalists and editors, who are accountant, economist, specialist of German, but not an editor. That's why instead of correcting the incorrect linguistic structures are spreaded by mass media. In the article we suggest to do program changes in the faculty of Journalism. The journalist have to study the language as a linguist.

ԱՆՎԱՆԱԿԱԶՄ ԲԱՑԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Գրերի գյուտից շատ առաջ հին հայերենի բայական համակարգը արդեն ձևավորված էր, և այն ելակետային ձևում ուներ –/ ածանց-վերջավորությունը՝ նախորդված **է, ի, ա, ու** թեմատիկ ձայնավորներով: Գոյություն ունեցող ամենավաղ տվյալներով հայերենում բայ խոսքի մասը ունեցել է բաղադրական կազմություն, այսինքն՝ բային հատուկ վերջավորությունները կցվել են այս կամ այն հիմքին՝ տալով բայական բոլոր հատկությունները: Բայական հիմքերը կարող են լինել և՛ բուն բայարմատներ, և՛ այլ խոսքիմասային արժեք ունեցող արմատներ: Բայակազմության մեջ հաճախ վիճելի է բայահիմքի ծագումնաբանորեն բայարմատ կամ անվանական արմատ լինելը: Հայ լեզվաբանները, անդրադառնալով այս խնդրին, առաջադրել են բայարմատը անվանական արմատից տարբերելու մի շարք միջոցներ¹¹²: Սույն ուսումնասիրության մեջ անդրադարձել ենք անկախ գործածությամբ վկայված անվանական հիմքերով բայերին: Մեջբերված բայական օրինակների նախատիպ հիմքերը գրաբարի բառարաններում հանդիպում են տարբեր խոսքիմասային արժեքներով (գերազանցապես գոյական, ածական)¹¹³: «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանը դրանց անկախ կիրառությունների համար գրեթե միշտ բերում է մի քանի օրինակներ, որոնցից երևում է, որ դրանք իսկապես եղել են ինքնուրույն բառային միավորներ, ինչպես՝ *ամբաստան (ած.), ապուր(գ.), բաժ (գ.), բասիր(ած.), բուղիս (գ.), գել (ած.), դէտ (գ./ած.), զեն (գ.), յաղթ (ած.), յապաղ (ած.), ներ (գ.), հաճ (ած./գ.), հալ(գ.), մեղադիր(ա.), ժիտ(ա.), սայթաք (ած.), վիճաբան (ած.)* և այլն¹¹⁴: Հայտնի իրողություն է, որ լեզվի բառային կազմը մշտապես փոփոխվում է կա՛մ փոխառությունների միջոցով, կա՛մ ներքին միջոցների գործադրմամբ: Իսկ լեզուն սկզբնապես փոխառում է հասկացության անվանումը,

¹¹²Տե՛ս **Ա. Աբրահամյան**, *Բայը ժամանակակից հայերենում*, գիրք 1, Երևան, 1962թ., էջ 76-116: **Լ. Հովսեփյան**, *Գրաբարի բառակազմությունը*, Եր., 1987Ֆ., էջ 299:

¹¹³ *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, 1836: *Առձեռն բառարան հայկազեան լեզուի*, 1865: **Ս. Ղազարյան**, *Գրաբարի բառարան*, Եր., 2000: **Ս. Ղազարյան**, *Գրաբարի դարձուածաբանական բառարան*, Եր., 2012:

¹¹⁴ Քննության մեջ միտում ենք ունեցել հնարավորինս մեջբերել գիտական գրականության մեջ չվկայված օրինակներ:

ապա անհրաժեշտության դեպքում համապատասխան մասնիկավորմամբ բայացնում է այդ հասկացությունը:

Հին հայերենում բայական 4 ածանց-վերջավորությունները նախատիպին կարող էին միացած լինել բառակազմական-քերականական ածանցներով (սոսկածանցներով)՝ *ան, են, ն, չ, նչ, անչ*¹¹⁵, և առանց դրանց: Հ. Աճառյանը նշում է, որ սկզբնապես այդ բայածանցները (բաղադրական-քերականական) միջամասնիկներ են եղել, ապա վերածվելով վերջամասնիկների՝ իմաստային մթագնման են ենթարկվել¹¹⁶: Բնականաբար սոսկածանցների իմաստագրկությունը անկարելի է դարձրել դրանց հետագա կիրառությունը, և այդ բայածանցները միայն բնիկ հայերեն բայերին են պատկանում¹¹⁷: Վերը շարադրվածը վկայում է, որ հնդեվրոպական հիմք լեզվից հայերենին անցում կատարելիս մի շարք բայարմատներ անպայմանորեն բաղադրվել են հենց այս բառակազմական-քերականական ածանցներով (սոսկածանցներով)¹¹⁸, և դրանցով բայակազմությունը դասական շրջանի հայերենում գործուն չէր: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ անուն արմատներից ձևավորված բայերը բայակազմական տեսակետից պարզ են¹¹⁹: Բացառություն է սակայն, **սերող հիմք+ան+ալ** կաղապարը, որ հին հայերենում ուներ բայակազմական կարևոր գործառույթ հատկապես անվանակազմ հիմքերից: Քանի որ ուսումնասիրության նպատակն է քննել անվանակազմ բայերը, նշենք, որ գրաբարում անուն խոսքի մասերից որպես բայական հիմքեր գերազանցապես հանդես են եկել գոյականները և ածականները, իսկ թվականները և դերանունները որպես նախատիպ հիմքեր ունեին սահմանափակ կիրառություն, ինչպես՝ *այլանալ, այլայլիլ, այլայլանալ, բոլորել, ինքնանալ, երկուանալ, երկրորդել, երրորդել, միանալ* և այլն:

Համաձայն Հ. Աճառյանի՝ բայական լծորդությունների և բայական ածանցների ծագման քննության՝ երկրորդային կամ անվանական կազմություն կարող են ունենալ՝

¹¹⁵ Կերպածանցներով և պատճառական ածանցներով ձևավորված կաղապարներին չենք անդադարձել, քանի որ այդ ածանցները միանում են լեզվում գոյություն ունեցող բայերին՝ հաղորդելով համապատասխան քերականական իմաստներ:

¹¹⁶ Տե՛ս **Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի**, հ. IV, գիրք Ա, էջ 347:

¹¹⁷ Տե՛ս **Վ. Առաքելյան, Պատմաբանասիրական հանդես**, Սեոի քերականական կարգը և բայածանցները գրաբարում, Եր., 1980, հ. 2, էջ 82:

¹¹⁸ Առանձին օրինակներում այդ ածանցները նույնիսկ աստիճանաբար ձուլվել են արմատին և վերածվել մի ամբողջության կամ դուրս ընկել, ինչպես՝ *կանգնեմ, շիկնեմ, սերմանեմ, ներկանեմ/ներկեմ, արծարծանեմ/արծարեմ*:

¹¹⁹ Տե՛ս **Վ. Առաքելյան, նշված աշխ.**, էջ 82:

է խոնարհման պարզ,
ի խոնարհման պարզ ¹²⁰,
ա խոնարհման պարզ, **ան +ալ** կաղապարով,
ու խոնարհման պարզ բայերը:

Բայերի անվանական հիմքերը կառուցվածքային տեսակետից սահմանափակումներ չունեն¹²¹: Կազմությամբ պարզ, ածանցավոր, բարդ անվանական հիմքերը գրաբարում գերազանցապես բայանում էին **–ել (ել)** մասնիկով, ինչպես՝ *ալէլուել, անմիաբանել, ապրել, ազահել, ազելորել, ախտակրել, ականջել, աղանդել, աղախնել, ամբոխել, այլագունել, անառակել, անդել, անթել, անծածկել, անկարգել, անհաւատել, ամուսնաւորել, աւագակել, աքացել, բազել, բաժակել, բանասարկել, բարերարել, բղխել, գլխարկել, գուժել, դրուագել, ժուժկալել, ժտել, խաւարել, ծագել, ծախել, ծափել, կանխել, կաճառել, կերակրել, հաճել, հակառակաձայնել, հիւսնել, ղողանջել, զանգակել, մեղադրել, մոգել, յապաղել, յարգել, յաւելադրել, նաւապետել, նաւաստել, նենգաւորել, շահասիրել, շաղապատել, պատկանաւորել, տարամերժել, վերարկուել, վթարել, վիճաբանել, վիճակել, վիպագրել, տաժանել, ցանցել, սայթաքել, սաղմոսել, սեղանաւորել, սերեկել, տնօրինել, ցողել, փառասիրել* և այլն:

Հին հայերենում **է** լծորդության բայերը մեկուկես անգամ ավելի են, քան մյուս լծորդությունների բայերը միասին վերցրած¹²²:

Վերը նշված բայերի մի մասը վկայված չէ ժամանակակից հայերենի բառարաններում, կամ ունեն *հնց*. նշում, ինչպես՝ *ազելորել, ախտակրել, աղախնել, աղանդել, անհաւատել, ամուսնաւորել, նաւապետել, նաւաստել, պատկանաւորել, տակառապետել, տաղաւորել, փառասիրել* և այլն:

Ինչպես նկատելի է, **անվանական հիմք+ել** կաղապարը գրաբարում շատ գործուն է եղել: Այս կաղապարով ձևավորվում էին գերազանցապես ներգործական սեռի բայեր, ինչպես՝ *ազելորել, ախտակրել, աղանդել, ամբոխել, անդել, անթել, անծածկել, անկարգել, անհաւատել, ամուսնաւորել, աւագակել, աքացել, բազել, բաժակել, ժտել, հաճել, հակառակաձայնել, հի-*

¹²⁰ Հ. Աճառյանը նշում է, որ **է** խոնարհման պարզ բայերից (առանց ռնգայինի) երեքն են, որ առաջացել են հնիւ. լեզվից՝ բերեմ, ածեմ, հանեմ (ճանաչվում են նախնական աորիստով՝ առանց ց-ի՝ **բերի, ածի, հանի**), ի խոնարհման պարզ բայերից միայն նստիլ բայն է առաջացել հնիւ. լեզվից: Տե՛ս **Հ. Աճառյան**, նշված աշխ., էջ 346-349:

¹²¹ Տե՛ս **Լ. Հովսեփյան**, նշված աշխ., էջ 324-332:

¹²² Տե՛ս **Վ. Առաքելյան**, նշված աշխ., էջ 73:

ւսնել, յարգել, նաւաստել, պատկանաւորել, տարամերժել, տարափել, վթարել, վիպագրել, տաժանել և այլն:

Մակայն հանդիպում են նաև չեզոք սեռի բայեր, ինչպես՝ *ամպել, անառակել, աղանդել, գաղթել, դանդաղել, կաճառել, տարափել, վիճաբանել* և այլն, և երկսեռ բայեր, ինչպես՝ *ագահել, բարեխօսել, գուժել, խարդախել, մեղադրել, մոգել, նաւաստել, տիրել, վիժել, ցողել* և այլն: Ընդ որում, բայի սեռը պայմանավորված չէ բայահիմքի խոսքիմասային պատկանելությամբ: **Ել** մասնիկով ձևավորված բայերը հին հայերենում զգալի մեծամասնություն են կազմում, քանի որ այս մասնիկը իմաստային լայն հնարավորություններ է տալիս, ինչպես՝ ա) նպատակամիտվող ակտիվ գործողության գաղափար, ինչպես՝ *անդել, շղթայել, չափել* և այլն, բ) մի բանով օժտելու գաղափար, ինչպես՝ *մումնել, ցողել* և այլն, գ) այնպիսի գործողության գաղափար, որ հատուկ է որևէ զբաղմունքի, արհեստի, պաշտոնի, ինչպես՝ *աղախնել, նաւաստել և այլն*, դ) մի բանով զբաղվելու գաղափար, ինչպես՝ *աղանդել, կարգել և այլն*, ե) մի վիճակի մեջ գտնվելու գաղափար, ինչպես՝ *ախտակրել, ծաղկել* և այլն¹²³:

Խոսելով **խ** լծորդության ծագման մասին՝ Հ. Աճառյանը նկատում է. «-Հայերենի **խ** բունը **է** բնի երկրորդական ձևն է և այս **խ** ձայնն էլ երևում է միայն ներկայի և հրամայականի մեջ, իսկ անորոշը, անկատարը և ստորոգականը ունեն –ե–»¹²⁴: Բացի այդ, հայտնի է, որ **խ** լծորդությամբ կազմվում են **է** լծորդության ներգործական սեռի բայերի չեզոք տարբերակները¹²⁵: **Անվա-նական հիմք + իլ կաղապարը** իր գործունությամբ զգալիորեն զիջել է **անվա-նական հիմք + ել** կաղապարին: Ընդ որում այս կաղապարով ձևավորված բայերը չեզոք սեռի են և հիմնականում արտահայտում են նախատիպի արտահայտած հասկացության վիճակին անցնելու գաղափար, ինչպես՝ *անագանիլ, անդամալուծիլ, աղամոռիլ, աղանդաւորիլ, բազմագանիլ, ժլատիլ, ժխորիլ, ժպտիլ, իմաստնաւորիլ, լեզուագարիլ, լուսնոտիլ, խայծոտիլ, ծանրամտիլ, կաթոզնիլ, կամաւորիլ, համակամիլ, մոլորիլ, յղանալ, շահատակիլ, շահաւետիլ, վիճակաւորիլ* և այլն:

¹²³ Տե՛ս **Ս. Գալստյան**, *Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում*, Եր. 1978, էջ 246-248:

Ս. Աբրահամյան, *Բայը ժամանակակից հայերենում*, Եր., 1962, էջ 63-66:

¹²⁴ Տե՛ս **Հ. Աճառյան**, նշված աշխ., էջ 350:

¹²⁵ Վերը նշված **է** լծորդության ներգործական սեռի բոլոր բայերը ունեն **խ**-ով վկայված չեզոք տարբերակները:

Գրաբարում **ա** լծորդության բայերը մոտ երեք հարյուր միավոր են կազմել, որոնցից կազմությամբ պարզ են մոտ 70-ը¹²⁶, սակայն **անվանական հիմք+ալ** կաղապարով կազմությունները մեծաթիվ չեն, ինչպես՝ *դողալ, ըղձալ, խնդալ, խոկալ, կսկծալ, հաւատալ, հոգալ, յուսալ, հոգալ, ողբալ, որսալ, փոթալ* և այլն: Դրանց մի մասը ունի նույնիմաստ ածանցավոր գուգաձև տարբերակ, ինչպես՝ *անձկալ//անձկանալ, ըղձալ//ըղձանալ, ծուլալ//ծուլանալ, կաղալ//կաղանալ, խրոխտալ//խրոխտանալ, տաղտկալ//տաղտկանալ, տենչալ//տենչանալ* և այլն¹²⁷: Ընդ որում այս բայերը մեծ մասամբ արտահայտում են վիճակ կամ մի վիճակի մեջ մտնելը¹²⁸: Թեև **անվանական հիմք+ան+ալ** կաղապարով բայակազմական ակտիվությամբ զիջել է **անվանական հիմք+ել կաղապարին**, սակայն հանդիպում են նշված կաղապարներով ձևավորված նույնահիմք բայերի գուգահեռ կիրառություններ, որոնք գրաբարում սակավ բացառություններով արտահայտում են միևնույն իմաստը: Այն, որ այս բայագույգերը հայերենի հետագա զարգացման ընթացքում գոյատևել են առանձին նշանակություններով, հուշում է գրաբարում **անվանական հիմք ան+ալ** կաղապարի գործուն դառնալու միտում ունենալու մասին, ինչպես՝ *այլայլել//այլայլանալ, ամպել//ամպանալ, ծանրել//ծանրանալ, ծարաւել//ծարաւանալ, նեղել//նեղանալ, սեղմել//սեղմանալ* և այլն:

Անվանական հիմք+ան+ալ կաղապարով ձևավորված բայերը քիչ բացառություններով չեզոք սեռի են և արտահայտում են նախատիպի ցույց տված հատկանիշով օժտվելու, վերածվելու, փոխարկվելու բառակազմական նշանակությունն¹²⁹, ինչպես՝ *ախտանալ, անուշահոտանալ, անընչանալ, անծանօթանալ, անարգանալ, անասնանալ, անլուանալ, բարենալ, զանազանանալ, խենեշանալ, իմաստասիրանալ, իրաւանալ, մշտնջենաւորանալ, յամրանալ, շառագունանալ, ոշտանալ, սալանալ, վիմանալ, տաճարանալ, տապանալ, ողջախոհանալ, քաջառողջանալ* և այլն:

Այս կաղապարով ձևավորված մի շարք բայեր, սակայն, հիմնականում լինելով չեզոք սեռի, չունեն վերածության գաղափարի նշույլ, ինչպես՝ *աթոռանալ, ահանալ, գողանալ, երեկանալ, շաբաթանալ, սեղանանալ* և այլն:

Ինչպես հայտնի է, **ու** լծորդության բայերը արդեն գրաբարում զգալիորեն սակավաթիվ էին և գերազանցապես վկայված են նաև այլ խոնար-

¹²⁶ Տե՛ս Վ. Առաքելյան, նշվ. աշխ, էջ 76-77:

¹²⁷ Այս գուգաձև բայական օրինակները գրաբարում գերազանցապես ունենին նույն իմաստը:

¹²⁸ Տե՛ս Հ. Աճառյան, նշված աշխատություն, էջ 352:

¹²⁹ Տե՛ս Ս. Գալստյան, նշված աշխատ., էջ 245:

հումներով, ինչպես՝ *գերծուլ/գերծանել, գենուլ/գենել, լիզուլ/լիզել, կարկառուլ/կարկառել, հիւսուլ/հիւսել, ցելուլ/ցելել* և այլն: Քննությունը ցույց տվեց, որ կազմությամբ պարզ բայերի նախատիպ հիմքերը հիմնականում առանձին կիրառությունն չունեն. միայն մի քանիսը ունեն անվանական հիմքեր, ինչպես՝ *արգելուլ, գելուլ, գերծուլ, գենուլ, կարկառուլ, հիւսուլ* և այլն:

Հին հայերենում անվանական հիմքերը կարող էին բայակազմությանը մասնակցել նաև թեքված ձևերով (սեռական-տրական և գործիական հոլովներով), ինչպես՝ *ականել, առնանալ, բարնել, գարնանանալ, եզերանալ, եզերել, խելօքանալ, սերմանել, անուանել* և այլն:

Անուն խոսքի մասերից կազմված բայերը ժամանակակից հայերենում իրանում են հարադրական և համադրական եղանակներով: Թեև բառակազմական տեխնիկայի տեսակետից հարադրությունները հասարակ են, սակայն աչքի են ընկնում համապատասխան իմաստների արտահայտման ու գործադրման հատուկ կարևորությամբ, ոճական յուրահատկությունների դրսևորմամբ: Անվանական հարադիրները կարող են լինել ինչպես պարզ, այնպես էլ բաղադրյալ, հանդես գալ ուղիղ և թեք հոլովաձևերով, իսկ որպես բայական մաս հանդես են գալիս գերազանցապես *ածել, առնել, առնուլ, անկանել, արկանել, դնել, տալ, լինիլ, հարկանիլ* և այլ բայեր, ինչպես՝ *անդամակոտոր առնել, աղեխարշ լինիլ, աղիսի առնուլ, աղօթս առնել, աղօթս առնուլ, ամբոխ առնել, ամօթ առնել, ակն ածել, ակն արկանել, ակն ունել, անձին առնել, անձամբ առնուլ, անձամբ արկանել, յանձէ անկանիլ, յանձն առնել(առնուլ), բազ արկանել (անկանիլ), բազմամբոխ լինիլ, բանատու լինիմ, գահավէժ առնել, գահավէժ լինել, գիտուն առնել, դարանակալ լինիլ, դիմակ գոլ, դուլ առնուլ, երդմնահար լինիլ, թափուր առնել, թափուր լինել, թշնամանս դնել, յապուշ կրթել, յեռանդն ածել, զանց առնել, զահի հարկանիլ, երկիր պազանել, թոյլ առնել, թոյլ լինել, ժամադիր առնել, ժամադիր լինել, խիլ արկանել, ի բաց ելանել, լոյս առնուլ, խաղ առնել, խաղ լինել, խրախ առնել, խրախ լինել, ծաղր առնել, ճանապարհ առնել, ճանապարհ ունել, մեղ դնել, մեղադիր լինիլ, միտ դնել, ի միտ առնուլ, ընդ միտ առնուիլ, ընդ միտ ածել, ճառ արկանել, ճեմ առնուլ, ողորմութիւն առնել, չարախօս կալ, պատասխանի տալ, պէտ առնել, պաշտօն մատուցանել, պատարագ լինել, ռազմ գործել, սիրտ դնել, սուգ ունել, սպաս ունել, ստէպ կալ, ցուցական առնել, փոյթ առնել, փոյթ լինել, փոյթ ունել, քաջալերս տալ, քող արկանել, քուն արկանել, փախստական վարել, օրէնս դնել* և այլն: Բերված օրինակներում նկատելի են *առնել* և *լինել* բայերի հետ անվանական նույն հարադիրով կազմություններ, ինչպես՝ *խրախ առնել, խրախ լինել, փոյթ*

առնել, փոյթ լինել և այլն: *Առնել* բայով հարադրվածները գերազանցապես արտահայտում են ներգործական սեռի իմաստ, ինչպես՝ *թափուր առնել-«թափուր դարձնել», ժամադիր առնել-«ժամադրել»,* իսկ *լինել* բայով հարադրվածները՝ չեզոք սեռի իմաստ, *ինչպես՝ թափուր լինել -«դատարկվել, ամայանալ», ժամադիր լինել-«ժամադրվել»* և այլն:

Վերլուծական կամ հարադրական կազմություններում անվանական հիմքերը, ինչպես նշել ենք, կարող են նաև թեքված լինել, ինչպես՝ *աղիւի առնուլ, աղօթս առնել, աղօթս առնուլ, անձին առնել, անձամբ առնուլ, անձամբ արկանել, յանձէ անկանիլ, յանձն առնել(առնուլ), յաղօթս մտանել , ընթրիս առնել, շնորհաւ տալ* և այլն:

Հին հայերենում հաճախ բայանվանական հարադիրները աչքի են ընկնում իրենց դարձվածային արժեքով, այսինքն՝ փոխաբերական իմաստի արտահայտմամբ, որով հարստացնում և ավելի պատկերավոր են դարձնում խոսքն առհասարակ, ինչպես՝ *ակն ունել-«հույս ունենալ», աղ առնուլ-«սեղան նստել», խանդ առնել-«հանդիմանել», խեթի գնալ-«վատ կյանք վարել», միտ առնել -«ուշադիր լինել», պարապ բերել-« զբաղվել», ցուցական առնել-«ապացուցել»* և այլն:

Մեծ թիվ են կազմում այն հարադիր բայերը, որոնք ունեն համապատասխան համադրական ձևերը, ինչպես՝ *ակն արկանել-ակնարկեմ, ակն ածել-ակնածել, երկիր պագանել-երկրպագել, զարդափայլ առնել-զարդափայլել, ընթրիս առնել-ընթրել, խնդիր առնել-խնդրել, մեղադիր լինիլ-մեղադրիլ, յաղօթս մտանել- աղօթել, չարախօս լինել-չարախօսել* և այլն:

Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ անվանական հիմքերից բայակազմությունը հին հայերենում կամ գրաբարում սովորական երևույթ է եղել: Հատկապես գործուն է եղել **անվանական հիմք + ել** կաղապարը, իսկ **անվանական հիմք + ան+ալ** կաղապարը արդեն հին հայերենում դրսևորում է ակտիվ դառնալու միտում, ինչը երևում է գուգաձև օրինակներից, ինչպես՝ *ամպել//ամպանալ, անձկալ//անձկանալ, ըղձալ//ըղձանալ, ծանրել//ծանրանալ, ծարաւել//ծարաւանալ, նեղել//նեղանալ* և այլն: Գրաբարի բայակազմությանը բնորոշ է նաև այն, որ գոյական և ածական խոսքիմասային արժեք ունեցող բառերի զգալի մասը ունի համապատասխան բայական մասնիկավորմամբ համադրական կամ վերլուծական տիպի բայեր:

Саргсян Луиза - Образование глаголов от именных основ в древнеармянском языке.- Можем сделать вывод, что образование глаголов от именных основ носило обычный характер в древнеармянском языке. Наиболее действующей была модель именная основа+ել(ел), а модель именная основа+ան(ан)+ալ(al) уже в древнеармянском языке стремилась стать активной, что видно из таких симметричных примеров, как ամպել//ամպանալ, անձկալ//անձկանալ, ըղձալ//ըղձանալ, ծանրել//ծանրանալ, ծարաւել// ծարաւանալ, նեղել//նեղանալ и т.е. Образованию глаголов грабара характерно также то, что значительная часть слов, обладающая ценностью частей речи существительного и прилагательного, имеет синтетические или аналитические виды глаголов с соответствующей глагольной частицей.

Sargsyan Luiza- The verbs from the nominal basis in the old Armenian language.- By summarizing we can conclude that it was common in the old Armenian language (Grabar) to form a verb from the nominal basis of the verb. The basic structure was " nominal base+ ել(el) suffix", and another structure " nominal base+ **ան(an)+ալ(al)** suffix" already had the tendency to be actively used which is clearly seen in these examples: *ամպել//ամպանալ, անձկալ//անձկանալ, ըղձալ//ըղձանալ, ծանրել//ծանրանալ, ծարաւել// ծարաւանալ, նեղել// նեղանալ*, etc. Another characteristic feature of Grabar is to form comparative and analytical verbs from the nouns and adjectives by adding the corresponding particles.

**ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻՑ ՓՈԽԱՌՎԱԾ
ՏԵՐՄԻՆՆԵՐԸ Գ. ԶԱՀՈՒԿՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Գիտության ցանկացած բնագավառի տերմինաբանություն չի կարող միատարր և անփոփոխ լինել: Ժամանակի ընթացքում լեզվական և արտալեզվական որոշակի գործոնների ազդեցությամբ տերմինային ենթահամակարգերում կարող են փոփոխություններ լինել:

Բողոուն դե Կուրտենեն կարծում էր, որ լեզվաբանության հետազոտական մեթոդները պետք է ավելի ու ավելի մոտենան ճշգրիտ գիտությունների մեթոդներին¹³⁰. այդպես էլ ժամանակին վարվեց Ջահուկյանը, իսկ դա, բնականաբար, չէր կարող չարտահայտվել տերմինաբանության մեջ. պատահական չէ, որ հեղինակը որոշ տերմիններ փոխառել է ճշգրիտ գիտություններից: Դրանք սովորաբար փոխառված են մաթեմատիկայից, տրամաբանությունից, փիլիսոփայությունից, ինֆորմատիկայից և այլ բնագավառներից, ինչպես օրինակ՝ *կարգ - категория, րելյացիա - реляция, терм, сигнификатор, транспозитор, транспозиция* ևն: Տերմինների փոխներթափանցումը, ըստ էության, դրական տեղաշարժ է: Ինչպես գիտենք, լեզվի զարգացման ճանապարհներից մեկը հենց փոխառություններն են: Բնականաբար, այս տերմինները նոր իմաստավորում են ստանում Ջահուկյանի տեսության մեջ: Թեև որոշ հետազոտողներ մաթեմատիկական տերմինների ներթափանցումը լեզվաբանության բնագավառ խիստ բացասական են համարում՝ կարծելով, որ դրանք չեն նպաստում լեզվաբանության զարգացմանը և այս ոլորտում չեն կարող յուրացվել¹³¹, բայց Ջահուկյանի աշխատություններում դրանց առկայությունը ըստ պատշաճի հիմնավորված և արդարացված է: Օրինակ՝ Ջահուկյանը, անդրադառնալով երկրորդական ձևայինների երկու տիպերին՝ բառակազմական և բառաքերականական, առաջինը կոչում է *транспозитор*, երկրորդը՝ *сигнификатор* տերմինով: Նշենք, որ *сигнификатор* տերմինը լատիներենից թարգմանաբար նշա-

¹³⁰ Տե՛ս **В. С. Минавичев**, *Фонетическая терминология в трудах И. А. Бодуэна де Куртенэ*, «Лингвистическая терминология и прикладная топонимастика», Москва, «Наука», 1964, էջ 7-30:

¹³¹ Տե՛ս **О. С. Ахманова**, *Словарь лингвистических терминов*, М., 1960, էջ 8:

նակում է «ցուցումներ տվող» և աստղագիտության բնագավառի տերմին է, որ կիրառվում է մոլորակի բնորոշման դեպքում: Ինչ վերաբերում է транспозитор տերմինին, ապա այն այդ ձևով լեզվաբանական գրականության մեջ առաջին անգամ է հանդիպում: Գիտության մեջ տարածված է մաթեմատիկական *транспозиция* տերմինը, որ կիրառվում է թե՛ լեզվաբանական, թե՛ երաժշտական գրականության մեջ: Լեզվաբանական գրականության մեջ այն կիրառվում է հետևյալ իմաստով՝ *լեզվական մի ձևի կիրառությունն մյուսի փոխարեն*: Ջահուկյանը, փաստորեն նեղացնելով այդ իմաստը, բառակազմական այն ձևույթը, որի շնորհիվ մի խոսքի մասից մեկ այլ խոսքի մաս է կազմվում, կոչել է *транспозитор*, իսկ *транспозиция* տերմինով բնորոշում է կադապարի բաղադրիչների ներքին փոփոխությունը: Իսկ նույն մակարդակի երկու կադապարների մասնակի կամ ամբողջական միավորումը մեկ կադապարի մեջ կոչում է *унификация* տերմինով, որը թեև լեզվաբանական գրականության մեջ գործածվող տերմին է, բայց ավելի լայն իմաստով, այն է՝ *որևէ առարկայի, երևույթի մեկ միասնական ձևով արտահայտումը*: Այս երկու տերմիններից էլ Ջահուկյանը համապատասխանաբար առանձնացնում է կադապարների երկու տիպ՝ նոր տերմիններով՝ *транспонированная модель, унифицированная модель*:

Терм-ը մաթեմատիկական-տրամաբանական ոլորտի տերմին է, որ կիրառվում է *որևէ օբյեկտի կամ երևույթի արտահայտում* իմաստով: Ջահուկյանի տեսության մեջ այն ևս կիրառվում է այլ կերպ, քան ընդունված է ժամանակակից գիտության մեջ: Ջահուկյանի բնորոշմամբ՝ այն համընդհանուր լեզվաբանական կադապարի առավել սահմանափակ հասկացությունների ամբողջությունն է, որ կարգերի՝ առավել ընդհանուր հասկացությունների հետ հնարավորություն է տալիս տարբերակել օբյեկտներն իրարից և որոշել դրանց փոխհարաբերության տիպը:

Ջահուկյանի աշխատություններում կիրառվում են նաև հետևյալ նորաստեղծ տերմինները՝ **релятор** (ռելյատոր), **релят** (ռելյատներ), **реляция** (ռելյացիա), **марк** (մարկ), **маркат** (մարկատ), **маркация** (մարկացիա), **субмарк** (սուբմարկ), **субрелятор** (սուբռելյատոր): Գիտական գրականության մեջ *релятор* տերմինը կիրառվում է հետևյալ նշանակությամբ՝ բառ կամ նշան, որ կիրառվում է բազմիմաստ տերմինի իմաստների տարբերակման համար¹³²: Սակայն, կարծում ենք, որ Ջահուկյանը այս

¹³² <http://dic.academic.ru/>, *Словарь-справочник терминов нормативно технической документации*.

տերմինները կերտելիս առաջնորդվել է մեկ այլ սկզբունքով: Այսպես, անգլերեն *mark* բառն ունի *նշան, տարբերանշան* իմաստը, իսկ *relation* բառը՝ *հարաբերություն*: Կարծում ենք՝ հենց այս բառերն են եղել Ջահուկյանի տերմինների հիմքում, որոնցով էլ վերջածանցման և նախածանցման շնորհիվ հեղինակը կազմել է տերմինների վերոնշյալ փունջը: Ինչ վերաբերում է դրանց հասկացական բնորոշմանը, ապա *հարաբերությունը* կոչում է **релятор** (ռելյատոր), *հարաբերակցվող օբյեկտները*՝ **релят** (ռելյատներ), իսկ *ռելյատորը* և *ռելյատները* միասին՝ **реляция** (ռելյացիա): Նույն ձևով *հատկանիշը* կոչում է **марк** (մարկ), *հատկանիշով բնորոշվող միավորը*՝ **маркат** (մարկատ), *մարկն* ու *մարկատը* միասին՝ **маркация** (մարկացիա), իսկ *ռելյատորների ռելյատորը*՝ **субрелятор** (սուբռելյատոր), *մարկի մարկը*՝ **субмарк** (սուբմարկ):

Կարգերի եզրերի երկու տիպի փոփոխություններն էլ ներկայացնում է համապատասխան տերմիններով՝ **маркационное изменение термов, реляционное изменение термов**:

Կարգ կամ ռուս. **категория** հասկացությունը շատ ոլորտների է բնորոշ, հաճախ կիրառվում է *դաս* տերմինի փոխարեն, Ջահուկյանի բնորոշմամբ այն հասկացական դաս է, որ ունի բովանդակության և արտահայտության պլան՝ իրենց փոխհարաբերության առանձնահատկություններով, և որը բաղկացած է երկու հակադիր միավորներից՝ եզրերից (терм): Այն ՀԼԿ-ի առավել ընդհանուր հասկացությունների ամբողջությունն է:

ՀԼԿ-ն ներկայացնելով որպես **կարգերի (категория)** և **եզրերի (терм)** ամբողջություն՝ Ջահուկյանն առանձնացնում է կարգերի և եզրերի խմբեր, ինչպես նաև այդ կարգերի բնորոշող հատկանիշները՝ համապատասխան տերմինաբանությամբ:

Սկզբնական շրջանում Ջահուկյանը թեև հարստացնում է ՀԼԿ-ի տերմինաբանությունը, բայց այդ շրջանի աշխատություններում տերմինաբանությունը փոքր-ինչ անորոշ և տարերային է: Հետագայում հեղինակն իր առաջ խնդիր է դնում նաև որոշ ճշգրտումներ և ընդհանրացումներ կատարել: Հետևաբար՝ իր հետագա աշխատություններում, հատկապես վերջինում («*Լեզվի համընդհանուր տեսություն*»), բավական ճշգրտված և խնամքով տարրորոշված տերմինների ավելի կոռ համակարգ է ներկայացվում: Կարգերը բնորոշելու համար ներմուծում է նոր տերմիններ՝ **գոյորոշող** կամ **ատրիբուտիվ** (атрибутивные категории), **առգոյորոշող** կամ **ատատրիբուտիվ** (субстантивные категории):

Սուբստանտիվ տերմինը առաջացել է լատիներեն *substantivus* բառից՝ *ինքնուրույն* իմաստով: Լեզվաբանական գրականության մեջ կիրառվում է գոյականի քերականական կարգի պատկանելության իմաստով¹³³: Աստվածաբանական տերմինաբանության մեջ այս տերմինը ևս կիրառվում է, ունի հետևյալ իմաստը՝ աստծու կերպարը ներքուստ բնորոշ է մարդկանց՝ որպես նրանց էությանը հատուկ հատկանիշ¹³⁴: Ջահուկյանի տերմինաբանության մեջ սուբստանտիվ կամ առգոյորոշող տերմինով արտահայտվում են առարկաների հարաբերությունները բնորոշող կարգերը: Ինչ վերաբերում է **ատրիբուտիվ կարգին**, ապա հոգեբանական գրականության մեջ այն կիրառվում է հետևյալ իմաստով՝ առարկաների որոշակի հատկանիշների առկայության ժխտում կամ հաստատում¹³⁵: Հեղինակն այս տերմինով անվանում է նյութական առարկաները բնորոշող կարգերը:

Հետագայում կատարվել են նաև կարգերի դրսևորումների և անվանումների, եզրերի և հատկանիշների խմբավորման և դրանց անվանումների ճշգրտումներ: Հեղինակը մանրամասն քննում է բոլոր հնարավոր դեպքերը, առանձնացնում հատկանիշները և դրանցից յուրաքանչյուրի համար համապատասխան տերմին ընտրում: Բոլոր կարգերի և եզրերի համար առաջարկվել են համապատասխան անվանումներ: Ինչպես բազմիցս նշել է Ջահուկյանը, միասնական տերմինային համակարգի մշակումը բավական դժվարություններ է ստեղծել: Ե՛վ հայերենում, և՛ ռուսերենում քերականական կարգերի անվանումները սովորաբար ածականներ են, որոնք կապակցվում են տվյալ կարգի անվանումի հետ: Ջահուկյանը, նկատի ունենալով դա, համանման ձևով կազմել է նաև **եզրերի** ածականական անվանումները՝ դրանք ներկայացնող օբյեկտներին տալով տրամաբանական բնորոշումներ: Այսպես, առանձնացվում է վեց եզր (տերմ)՝ **հիմնական** (основной),

¹³³ <http://dic.academic.ru/dic.nsf/ushakov/1046482>, **Д.Н. Ушаков**, *Толковый словарь Ушакова, 1935-1940*.

¹³⁴ <http://teology.academic.ru/8207/%D0%9E%D0%B1%D1%80%D0%B0%D0%B7%D0%91%D0%BE%D0%B3%D0%B0%2C%D1%81%D1%82%D1%80%D1%83%D0%BA%D1%82%D1%83%D1%80%D0%BD%D0%B0%D1%8F%D0%B8%D0%BB%D0%B8%D1%81%D1%83%D0%B1%D1%81%D1%82%D0%B0%D0%BD%D1%82%D0%B8%D0%B2%D0%BD%D0%B0%D1%8F%D1%82%D0%BE%D1%87%D0%BA%D0%B0%D0%B7%D1%80%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F>, **Мак-Ким Дональд К.**, *Вестминстерский словарь теологических терминов*, М, "Республика", 2004.

¹³⁵ <http://psychology.academic.ru/6362/%D0%90%D0%A2%D0%A0%D0%98%D0%91%D0%A3%D0%A2%D0%98%D0%92%D0%9D%D0%AB%D0%99>, *Большой психологический словарь*. — М.: Прайм-ЕВРОЗНАК. Под ред. Б.Г. Мещерякова, акад. В.П. Зинченко. 2003.

հակադիր (противоположный), **միջին** (средний), **համատեղական** (совместительный), **անդրադարձ** (рефлексивный /возвратный), **չեզոք** (нейтральный /абсолютный): Նշված տրամաբանական բնորոշումները տերմինային իմաստով կիրառվում են գիտության տարբեր բնագավառներում, Ջահուկյանը դրանք տերմինային նոր իմաստներով է կիրառել, որի շնորհիվ հարստացրել է ՀԼԿ-ի իր տերմինահամակարգը:

Նույն սկզբունքով ֆիզիկական օբյեկտները բնորոշող կարգերի համար առանձնացվում է չորս **հատկանիշ**՝ համապատասխան տերմիններով՝ **սպարունակայնություն** (вещественность// пространственность), **բաղկացականություն** (интериорность// содержательность), **հաշվականություն** (качественность// количественность), **վիճակայնություն** (субстантивность): Հոգևոր երևույթները բնորոշելու համար Ջահուկյանը ներմուծում է հինգերորդ հատկանիշը: Հեղինակի սկզբնական աշխատություններում այս հատկանիշը կոչվում էր **նշանայնություն**, սակայն «*Լեզվի համընդհանուր տեսություն*» աշխատության մեջ նախընտրում է **հոգևոր** (духовность), երբեմն նույնիսկ **նշանային-հոգևոր** տերմինը (знаково-духовность): Այսինքն՝ **նշան** ասելով հասկանում է ոչ միայն օբյեկտի ներքին, այլև արտաքին՝ ֆիզիկական կողմը, ոչ միայն օբյեկտի բնորոշումը, այլև դրա ընկալումը: **Հոգևոր** տերմինը լայն նշանակություն ունի. դրա մեջ ներառվում են և՛ այն ամենը, ինչ բնորոշում է օրգանական կյանքի ֆիզիկական կողմը, և՛ զգայական բոլոր դեպքերը, երբ պատճառահետևանքային կապ է ստեղծվում օրգանիզմի և արտաքին միջավայրի միջև:

ՀԼԿ-ի գոյորոշ կարգերը բնորոշելու համար առանձնացնում է հետևյալ տերմինները՝ **կազմ** (состав), **թիվ** (число), **կախում** (зависимость), **դաս** (порядок), **ձև** (форма), **չափ** (мера), **ուղղություն** (направление), **տեղ**՝ **դիրք** (позиция/место), առգոյորոշ կարգերը՝ **ընթացածն** (качество), **հաճախայնություն** (кратность), **պատճառայնություն** (причинность), **կերպ** (аспект), **տեղություն** (течение), **համեմատություն** (сравнение), **փոփոխություն** (изменение), **ժամանակ** (время), նշանային կարգերը՝ **ընկալում** (восприятие/познание), **մոդալություն** (модальность), **գիտակցում** (сознание), **մտածողություն** (мышление), **արտահայտություն** (материальная выраженность), **հաղորդակցում** կամ **խոսք** (коммуникация): Պետք է նշել, որ այս տերմինները՝ որպես այսպիսին, լեզվաբանական գրականության մեջ կիրառվում են առաջին անգամ: Սակայն գիտական գրականության

մեջ այս տերմինները լայն կիրառություն ունեն, հատկապես տրամաբանության և փիլիսոփայության ոլորտներում¹³⁶:

Պետք է նշել սակայն, որ փոխառությունները հայ լեզվաբանական տերմինաբանության մեջ սովորաբար երկար կյանք չեն ունեցել. դրանք հիմնականում հայերեն համարժեքներով են փոխարինվել: Այս ասպարեզում ևս մեծ ներդրում է ունեցել Ջահուկյանը: Հեղինակն իր աշխատություններում առաջարկել է օտար տերմինների հայերեն համարժեքներ, որոնց մեծ մասը բավական հաջող են և լիարժեք կիրառություն ունեն արդի լեզվաբանական գրականության մեջ: Ընդ որում՝ հաճախ հեղինակը հավասարապես գործածում է թե՛ օտար տերմինը, թե՛ հայերեն համարժեքը: Այսպես, հավասարաչափ կիրառվում են *ատրիբուտիվ* և *գոյորոշող* տերմինները, *սուբստանցիոնալ* և *հարաբերակցական*, *մոնիզմ* և *միասնություն*, *ինտեգրալություն* և *ամբողջականություն*, *ռեմա* և *վերաբերյալ*, *թեմա* և *ենթահիմք* և այլն:

Ամփոփելով պետք է նշել, որ լեզվաբանական այս նորաստեղծ տերմինների համակողմանի քննությունը կարող է նպաստել ոչ միայն Ջահուկյանի լեզվաբանական ըմբռումները ճիշտ ընկալելուն (գերազանցապես դրան է նպատակաուղղված), այլև լեզվաբանական միասնական տերմինների հաստատմանը:

Саргсян Мери- Термины заимствованные из других областей науки в работах Г. Джаукяна.- В терминологии Г. Джаукяна могут быть выделены такие термины, которые заимствованы из других областей науки с конкретным значением или общими научными смыслами. Они, как правило, заимствованы из математики, логики, философии, информатики и других областей. В данной статье представлен всесторонний обзор терминов, который может способствовать не только правильному восприятию лингвистических понятий Г. Джаукяна, но и созданию общих лингвистических терминов.

Sargsyan Meri- Terms borrowed from other fields of science in the works of G. Jahukyan.- In G. Jahoukyan's terminology can be allocated such terms, which are borrowed from other fields of science with concrete value or the general scientific meanings. They are, as a rule, borrowed from mathematics, logic, philosophy, in-

¹³⁶http://dic.academic.ru/contents.nsf/enc_philosophy/, *Философский энциклопедический словарь*. М.: Советская энциклопедия. Гл. редакция: Л. Ильячёв, П. Федосеев, С. Ковалёв, В. Панов. 1983.

formatics and other fields. This article presents a comprehensive review of terms which can promote not only the correct perception of G. Jahoukyan's linguistic concepts, but also establishment of a common linguistic terms.

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ
ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ**

Վերլուծական բայ ասելով հասկանում ենք հայերենի հարադրավոր բայերը և անգլերենի դարձվածային բայերն ու դարձվածքների մի խումբ, որոնք թեն դարձվածաբանական միավորներ են, սակայն դիտարկում ենք բառակազմական մակարդակում:

Հայերենում հարադրավոր, իսկ անգլերենում դարձվածային (phrasal verb) բայեր են համարվում բայից և հարադրից կազմված կապակցությունները, որոնք ունեն մեկ բառային և բայական արժեք և մեկ ընդհանուր իմաստ, ինչպես՝ գլուխ գովել, ներս մտնել, սիրտ անել, ցած դնել, bring up «կերակրել, դաստիարակել», come in «իշխանության գալ, մոդայիկ դառնալ, միանալ», go along «զարգանալ, ընթանալ», talk about «բամբասել, չարախոսել»: Հայ քերականները հարադրավոր բայեր համարում են նաև նմանատիպ կառուցվածք ունեցող դարձվածքները և խիստ սահմաններ չեն դնում դրանց և դարձվածաբանական իմաստից զուրկ հարադրավոր բայերի միջև:

Զուգադրվող լեզուներում հարադիրը կարող է պատկանել մի շարք խոսքի մասերի: Անգլերենի քերականական ավանդույթում դարձվածային բայերում հարադիրը կամ նախդիր է, կամ մակբայ: Դարձվածային բայերը հստակ սահմանազատված են նման կառուցվածք ունեցող դարձվածքներից: Դրանցում հարադիր կարող են լինել միայն տեղի և ուղղության նշանակություն ունեցող մակբայները, ինչպես՝ across «լայնակի», against «դեմ», along «երկարությամբ», among «մեջ, միջև», around «շուրջը, բոլորը», back «հետ», down «ներքև», inside «ներսը, ներսում», into «ներս, մեջ», outside «դուրսը, դրսում», past «մոտով, կողքով», through «միջով», to «դեպի» և նախդիրները, ինչպես՝ above «վերևում», after «հետևից, հետևում», behind «հետևը», below «ցած», beside «կողքին, մոտ», between «միջև», by «մոտ, կից», down «ներքև», from «-ից վերջավորության իմաստ», near «մոտ, կողքին», onto «վրա», towards «դեպի, ուղղությամբ», under «տակ», up «վեր, վերև»):

Առաջին հայացքից թվում է, թե անգլերենում վերլուծական կառուցվածքի բայեր կազմվում են միմիայն մակբայներով ու նախդիրներով:

Սակայն դա ամեննին այդպես չէ: Անգլերենում կան բազմաթիվ բայական հարադրություններ, որոնք կազմված են բայից և գոյականից, ինչպես՝ *make haste* «շտապել», *take care* «հոգ տանել», բայից և ածականից, ինչպես՝ *go dry* «կաթից կտրել», *make sure* «համոզվել», բայից և դերանունից, ինչպես՝ *be onself* «բնական լինել», *foot it* «պարել», սակայն վերջիններս համարվում են դարձվածաբանական միավորներ, խստորեն զատվում են դարձվածային բայերից և մուծվում են անգլերենի դարձվածաբանական բառարաններ:

Վերլուծական բայերը բաղադրիչների շարադասությամբ տարբերվում են զուգադրվող լեզուներում: Հայերենում հարադիրը դրվում է բայական բաղադրիչից առաջ, ինչպես՝ գործ բռնել, կյանք մտնել, իսկ անգլերենում՝ բայական բաղադրիչից հետո, ինչպես՝ *fear for* «անհանգստանալ», *fence in* «բռնանալ մեկի ազատությանը»:

Վերլուծական բայեր կազմվում են սահմանափակ թվով ու բնույթով բայերից և դրանց հետ հարադրվող տարբեր խոսքի մասերի պատկանող բառերից:

Հայերենում բայական հարադրություններ կերտելու մեջ գերիշխող են անել, առնել, բերել, գալ, գցել, դառնալ, դնել, ընկնել, լինել, տալ բայերը: Անգլերենում, որպես բայական բաղադրիչ առավել հաճախ հանդիպում են *be* «լինել», *bring* «բերել», *come* «գալ», *fall* «ընկնել», *get* «ստանալ», *go* «գնալ», *look* «նայել», *make* «պատրաստել», *pass* «անցնել», *play* «խաղալ», *put* «դնել», *run* «վազել», *take* «վերցնել», *turn* «շրջվել, պտտվել»: Կան նաև բայեր, որոնք վերլուծական բայից դուրս գործածություն չունեն, օրինակ՝ *refer to* «վերաբերվել»:

Զուգադրվող լեզուներում բայական հարադրությունների հարադիրները բազմատարր են՝ պատկանում են տարբեր խոսքի մասերի (գոյական, ածական, թվական, դերանուն, մակբայ, կապ, ձայնարկություն, դերբայ, նախդիր): Բայական բաղադրիչները արտահայտում են գործողության, եղելության իմաստ: Հարադիրները, առաջացած լինելով տարբեր խոսքի մասերից, բայերի հետ միասին արտահայտում են զանազան իմաստներ և տարբեր խմբեր են կազմում:

Հայերենում առանձնացրել ենք բայական հարադրությունների հետևյալ կաղապարները՝ Գ+Բ, Ա+Բ, Թ+Բ, Դ+Բ, Մ+Բ, Կ+Բ, Ձ+Բ, Դբ+Բ (Բ-բայ, Գ-գոյական, Ա-ածական, Թ-թվական, Դ-դերանուն, Մ-մակբայ, Կ-կապ, Ձ-ձայնարկություն, Դբ-դերբայ) :

Անգլերենում բայական հարադրությունները կազմված են հետևյալ կաղապարներով՝ V+N, V+Adj, V+Num, V+P, V+Adv, V+Prep, V+Prep+Adv,

V+I, V+Part, (V-բայ N-գոյական, Adj-ածական, Num-թվական, P-դերանուն, Adv-մակբայ, Prep-նախդիր, Part-դերբայ):

1. Գոյական+Բայ/Verb+Noun

Վերլուծական բայերում, որպես հարադիր գործածվում են միայն այն գոյականները, որոնք ունեն համապատասխան բայի հետ հարադրվելու և հարադրյալի հետ միասին բառային նոր նշանակություն արտահայտելու տրամաբանական հիմք:

Հայերենի բայական հարադրությունների շարքում ամենամեծ թիվը կազմում են Գ+Բ կաղապարով կազմվածները: ԱՀԲԲ-ում ¹³⁷ Գ+Բ կաղապարով է կազմված մոտ 4500 բայերից 3600-ը, իսկ Ա. Կունինի «Անգլերեն-ռուսերեն դարձվածաբանական բառարանում»¹³⁸ V+N կաղապարով կազմված է 1326 վերլուծական բայերից մոտ 1200-ը:

Զուգադրվող լեզուներում անվանական բայական հարադրություններ կազմվում են և՛ վերացական, ինչպես՝ ամոթը կորցնել, խելք մնալ, հրաժեշտ տալ, պատիվը պահել, պարգևություն մտցնել, carry one's point «նպատակին հասնել», have no feelings «անտարբեր լինել», try one's fortune «բախտը բերել», և՛ թանձրացական գոյականներով, ինչպես՝ աչքով անել, դեմքը դարձնել, թելին տալ, ջուրն ընկնել, սիրտը մտնել, change hands «ձեռքից ձեռք անցնել», cross smb's path «հանդիպել մեկին», cut smb's comb «մեկին ստորացնել», open the gates «ճամփա բացել», pass the baby «սեփական պարտականությունից հրաժարվել», squeeze an orange «ուժերը սպառել»:

Գ+Բ և V+N կաղապարով կազմված բայական հարադրություններում անվանական բաղադրիչը կարող է լինել անձ և ոչ անձ ցույց տվող: Անձ ցույց տվող գոյականներով կազմված բայերը երկու լեզուներում էլ փոքրաթիվ են, ինչպես՝ ժառանգ թողնել, խնամի նստել, կին առնել, մարդ դառնալ, վկա բերել, տեր լինել, call cousin «բարեկամ ձևանալ», carry the baby «տհաճ պարտականություն ունենալ», cry uncle «ընդունել պարտությունը», cut the painter «ինքնուրույն դառնալ»:

Ոչ անձ ցույց տվող գոյականով են կազմված հետևյալ բայական հարադրությունները՝ պոչ խաղացնել, ջանք թափել, սերը սպանել, սուգ մտնել, վիզը կտրել, տուն շինել, draw one's sword «ծնկի գալ», hit the books

¹³⁷ Աղայան Է., «Արդի հայերենի բացատրական բառարան», «Հայաստան» հրատ., Երևան, 1976

¹³⁸ Кунин А. В., *Англо-русский Фразеологический словарь*, изд. "Русский язык", 1984

«սկսել ուսումը», jump the fence «օրենք խախտել», lead the way «օրինակ ծառայել», thread the needle «պարելիս պտույտ գալ»:

Բայական հարադրությունների կազմում գոյականները մեծ մասամբ միայն եզակի թվով են դրված, ինչպես՝ շունչը փչել, պատիժ կրել, պատիվ ունենալ, բույսից օգտվել, փառքով պսակվել, քեֆ քաշել, bear fruit «արդյունք տալ», go ape «խիստ զայրանալ», make a break «փախչելու փորձ անել», rig the market «գները փոփոխել», thumb a ride «քվեարկել», wear the collar «ենթակա լինել», սակայն հանդիպում են նաև վերլուծական բայեր, որոնցում անվանական բաղադրիչը դրվում է միայն հոգնակիով, ինչպես՝ ականջները կախել, աղիքները զալարվել, ամբարտակները խորտակել, ատամները հաշվել, դափնիներով պսակել, դռներն ընկնել, compare notes «կարծիքներով փոխանակվել», draw straws «վճիռ կայացնել», go places «հաջողություն ունենալ», shift gears «փոփոխություն անել», shout the odds «բարձր խոսել», spike gun's «հակառակորդի պլանները խափանել»:

Հայերենում բայական հարադրությունների անվանական բաղադրիչը դրվում է հայերենի 6 հոլովներով՝

Ուղղական՝ բերանը գալ, խիղճը կտրվել, խմորը գալ, սիրտը քարանալ, դժվարը գալ:

Տրական՝ ծայրին հասնել, կայծին տալ, կավին դառնալ, կատիկին հասցնել, չափսին գալ, պատվին դիպչել:

Հայցական՝ բարձր փոխել, լուր տալ, կոկորդը լցնել, ձու ածել, մորուքը համրել:

Բացառական՝ երկնքից իջնել, խելքից գնալ, խոսքից անցնել, փեշից կախվել, քթից բռնել, օձիքից բռնել:

Գործիական՝ համբերությամբ զինվել, մանանայով ապրել, մեծատառով գրել, ձեռքով անել, ոտքով անել, վարձով վերցնել:

Ներգոյական՝ եթերում լինել, ընդհատակում գործել, թիկունքում կանգնել, հեռանկարում ունենալ, հիմքում դնել, հողում պատկել:

Վերլուծական բայերի անվանական բաղադրիչը սեռական հոլովով չի դրվում:

Անգլերենում գոյականներն ունեն երկու հոլով՝ ընդհանուր և ստացական: Վերլուծական բայերում գոյականները կարող են դրվել և՛ ընդհանուր, և՛ ստացական հոլովներով: Անգլերենի ընդհանուր հոլովն ունի անորոշ իմաստ և նախդիրների ու շարադասության միջոցով է արտահայտում է մյուս իմաստները. be at bat «բաժանել», be of age «չափահաս լինել», bring into accord «համաձայնեցնել», come to bat «խնդրի հանդիպել»:

Ստացական հոլովը ցույց է տալիս պատկանելություն. break smb' heart «սիրտը կտրել», feel one's oats «ձգտել սխրանքի», keep one's place «նստած մնալ», open one's face «բերնից թոցնել», try one's fortune «երջանկություն ապրել»:

2. Ածական+Բայ/Verb+Adjective

ԱՀԲԲ-ում կա Ա+Բ կաղապարով կազմված 559 վերլուծական բայ: Սա երկրորդ ամենամեծ խումբն է Գ+Բ կաղապարով կազմված վերլուծական բայերից հետո: Անգլերենում V+Adj կաղապարով 70 վերլուծական բայ կա: Երկու լեզուներում էլ վերլուծական բայի կազմում եղած ածականները որակական են, ինչպես՝ թեթև գալ, լայն ապրել, պինդ կենալ, do good «օգուտ բերել», lie low «թաքնվել», ride high «վայելել», think better «միտքը փոխել»: Հայերենի Ա+Բ կաղապարով կազմված վերլուծական բայերում ածականները հիմնականում հարադրվում են անել (մոտ 170 միավոր) և լինել (մոտ 150 միավոր) բայերի հետ, ինչպես՝ լեղաճաք անել, հալումաշ անել, ոտնատակ լինել, վրեժխնդիր լինել:

3. Թվական+Բայ/Verb+Numeral

Հայերենում թվականը հազվադեպ է գործածվում վերլուծական բայերում. այս խմբում հարադիրները հիմնականում քանակական թվականներ են, ինչպես՝ երկու անել, մեկ լինել, ութ գրել: Մի թվականը ի նախդրի հետ տեղի մակբայի նշանակությամբ կազմում է փորաթիվ բայական հարադրություններ, ինչպես՝ ի մի բերել, ի մի հավաքել: Է. ԱՀԲԲ-ում կա Թ+Բ կաղապարով կազմված ընդամենը 11-ն վերլուծական բայ:

Անգլերենում V+Num կաղապարով կազմված բայերը նույնպես շատ չեն: Կունինի դարձվածաբանական բառարանում բայերից միայն 5-ն է V+Num կաղապարով կազմված, ինչպես՝ become one «ամուսնանալ», go fifty-fifty «հավասար կիսել», take ten «շունչ առնել»:

4. Դերանուն+ Բայ/Verb+Pronoun

Դերանուն հարադիր ունեցող բայական հարադրությունները հայերենում փոքրաթիվ են: Որպես հարադիր՝ հանդիպում են միայն իրար և ինքը անձնական դերանունները, ինչպես՝ իրար անցնել, իրենով անել:

ԱՀԲԲ-ում ունենք Դ+Բ կաղապարով կազմված 28 վերլուծական բայ: Այս խմբում առավել կենսունակ են իր (իրեն ձևով)՝ և իրար փոխադարձ դերանունը, ինչպես՝ իրար գալ, իրարով ընկնել, իրեն գտնել:

Անգլերենի վերլուծական բայերի կազմում քիչ, սակայն հանդիպում են ստացական դերանուններ, ինչպես՝ *get his* «արժանին ստանալ», ցուցական դերանուններ, ինչպես՝ *beat it* «հեռանալ, խույս տալ», *catch it* «պատիժ ստանալ», *get there* «նպատակին հասնել» անորոշ դերանուններ, ինչպես՝ *get nowhere* «պետք չլինել», *get somewhere* «հաջողության հասնել» հարաբերական դերանուններ, ինչպես՝ *know how* «իմանալ»: Անգլերենի վերլուծական բայերից 12-ը V+P կաղապարով են կազմված:

5. Մակբայ+Բայ/ Verb+Adverb

ԱՀԲԲ-ում Մ+Բ կաղապարով կազմված 37 վերլուծական բայ կա, ընդ որում դրանց մեծ մասը տեղի և ուղղության մակբայներից են կազմված, ինչպես՝ դեստոդեն ընկնել, շուրջ գալ, վերիվայր անել, քարեքար գցել:

Անգլերենի դարձվածային բայերի Օքսֆորդի¹³⁹ բառարանի 3519 բայերից մոտ 1500-ը V+Adv կաղապարով են կազմված: Մա անգլերենում երկրորդ ամենամեծ խումբն է, որում ճնշող մեծամասնություն են կազմում տեղի և ուղղության մակբայները, ինչպես՝ *come back* «վերադառնալ, կրկնել», *give in* «զիջել», *go away* «հեռանալ, կորչել», *put out* «հեռացնել, վռնդել»:

6. Կապ+Բայ/ Verb+Preposition

ԱՀԲԲ-ում կա Կ+Բ կաղապարով կազմված 174 վերլուծական բայ: Հայերենում այս կաղապարով կազմված վերլուծական բայերը իրենց քանակով չորրորդ տեղում են: Վերլուծական բայերի կազմում ավելի հաճախ հանդիպում են մեջ, վեր, վրա, տակ, ցած կապերը, ինչպես՝ մեջ ընկնել, վրա բերել, վեր թռչել, տակը դնել, ցած բերել:

Հայերենի վերլուծական բայերի մեջ մի մեծ խումբ են կազմում տեղի կամ տարածական իմաստ ունեցող հարադիրներով կազմությունները, ինչպես՝ առաջ վազել, դուրս գալ, մեջ բերել, վրան վերցնել:

¹³⁹ *Oxford Phrasal Verb Dictionary*, Oxford University Press, 2002

Դարձվածային բայերի Օքսֆորդի բառարանում կա 2000 վերլուծական բայ, որոնք կազմված են V+Prep կաղապարով, ինչպես՝ act on «գործել», add to «ավելացնել», bang into «հարվածի գալ», believe in «հավատալ»:

7. Verb+Preposition+Adverb

Այս կաղապարով բայեր կազմվում են միայն անգլերենում: Մակայն դրանք շատ չեն¹⁴⁰. average out at «միջինը հաշվել», put up with «հանդուրժել»:

Ա. Օլսոնը անգլերենի դարձվածային բայերի կազմում՝ որպես ամենահաճախ հանդիպող մակբայներ և նախդիրներ, նշում է սր «վեր, վերև», about «մոտ, շուրջը», back «հետ, հետև», down «ներքև, ցած», in «մեջ», off «ից», on «վրա», out «դուրս», որոնցից about-ը «մոտ, շուրջը» և սր-ը «վեր, վերև» առաջին երկու տեղերն են գրավում¹⁴¹:

Չուգադրվող լեզուներում տեղի կամ տարածական իմաստով հարադիրները մեծ թիվ չեն կազմում, սակայն ունենալով վերացարկվելու մեծ հնարավորություններ, հարադրվում են բազմաթիվ բայերի հետ, ինչպես՝ break away «փախչել, խույս տալ», take in «ըմբռնել, ընկալել»:

8. ձայնարկություն+Բայ/Verb+Interjection

ԱՆԲԲ-ում կա 34-ը Ձ+Բ կաղապարով կազմված վերլուծական բայ: Դրանց մեջ առանձնանում են երկու ենթախմբեր՝ 1) բայեր, որոնք հարադրված են ձայնարկությամբ, ինչպես՝ երանի տալ, հարայ կանչել, 2) բայեր, որոնց հարադիրը բնաձայնական բառ է, ինչպես՝ հափ անել, հաֆ անել: Վերջիններս ավելի հաճախ հանդիպում են խոսակցական լեզվում:

Անգլերենում ձայնարկությամբ հարադրված բայերը հազվադեպ են, ինչպես՝ cry hurrah «ուռա ասել», give smb. the ha-ha «մեկին ուրախացնել», say hush «լռեցնել», make tush «թու անել»:

¹⁴⁰ A. Olson, *Constructions and Result: English Phrasal Verbs as Analysed In Construction Grammar*, 2013, էջ 23, (<https://www.twu.ca>):

¹⁴¹ Նույնը՝ էջ 16.

9. Դերբայ+Բայ/Verb+Participle

ԱՀԲԲ-ում Դ+Բ կաղապարով կազմված միավորները քիչ են: Այս փոքրաթիվ խմբի հիմնական մասը հարակատար դերբայով է կազմված, ինչպես՝ թքած ունենալ, սառած մնալ:


Անգլերենի դերբայները երեքն են՝ ներկա (Present Participle), անցյալ (Past Participle) և վաղակատար (Perfect Participle): Կան մոտ 20 V+Prep կաղապարով կազմված վերլուծական բայեր, որոնց մեջ կան և՛ ներկա, և՛ անցյալ դերբայով կազմվածները, ինչպես՝ come unstuck (անցյալ դերբայ) «պոկվել, առանձնանալ», cut smb dead (անցյալ դերբայ) «արհամարհել մեկին», get cracking (ներկա դերբայ) «վճռական և արագ գործել», keep going (ներկա դերբայ) «գոյատևել», see coming (ներկա դերբայ) «կանխատեսել», send flying (ներկա դերբայ) «ուժով հետ մղել»: Վաղակատար դերբայով վերլուծական բայեր չկան:

Բայի հետ առավել հաճախ հարադրվում են այն խոսքի մասերը, որոնք վերլուծական բայից դուրս էլ բայի հետ հաճախ են գործածվում շարահյուսական կապակցություններում: Օրինակ գոյականը կամ կապը բայի հետ ավելի շատ վերլուծական բայեր են կազմում, քան թվականը կամ դերանունը, քանի որ առաջիններն ավելի հաճախ են բայի հետ կապակցվում, քան՝ վերջինները:

Ամփոփելով կարող ենք ասել, որ անգլերենի և հայերենի վերլուծական բայերում հարադիրները, ըստ խոսքիմասային պատկանելության, ունեն գործառական բեռնվածության ստորև տրված գծապատկերներին համապատասխան պատկերը:


Գծապատկեր 1

*Անգլերենի վերլուծական բայերի հարադիրների
խոսքիմասային խմբերը*



Գծապատկեր 2

*Հայերենի վերլուծական բայերի հարադիրների
խոսքիմասային խմբերը*



Simonyan Sona- Definition of Particle Verbs and Their Forms in Modern Armenian and English.- The work is devoted to the definition of particle verbs and their forms in Modern Armenian and English. In Armenian we have the following forms of particle verbs: N+V, Adj+V, Num+V, P+V, Ad+V, Prep/Post+V, I+V, Part+V (V-verb, N-Noun, Adj-adjective, Num-Numeral, P-pronoun, Ad-adverb, Prep/Post-preposition/postposition, I-interjection, Part-Participle).

Particle verbs are most frequently formed by those parts of speech with which verbs used to form syntactic structures.

In English the following form are available: V+N, V+Adj, V+Num, V+P, V+Ad, V+Prep, V+I, V+Part (V-verb, N-Noun, Adj-adjective, Num-Numeral, Pronoun, Ad-adverb, Prep-preposition, I-interjection, Part-Participle).

The largest group of particle verbs in Armenian is N+V form group, while in English the forms V+N, V+Prep, Adv+V.

Симонян Сона- Определение свойств и структурных форм аналитических глаголов в современном армянском и английском языках.- Работа посвящена определению свойств структурных форм аналитических глаголов в современном армянском и английском языках.

Аналитические глаголы в армянском языке имеют следующие формы: С+Г, П+Г, Ч+Г, М+Г, С+Г, Меж+Г, Пр+Г (Г-глагол, Ссуществительное, Пприлагательное, Ч-числительное, М-междометие, С-Союз, Пр-причастие).

Аналитические глаголы в английском языке имеют следующие формы: Г+С, Г+П, Г+Ч, Г+М, Г+Пред, Г+Меж, Г+Пр (Г-глагол, Ссуществительное, Пприлагательное, Ч-числительное, М-местоимение, Межд-междометие, Пред-Предлог, Пр-причастие). В армянском самую большую группу составляют сопоставительные глаголы, имеющие форму С+Г, а в английском -группы глаголов, имеющие формы Г+С, Г+Пред и Г+Н.

Чаще всего с глаголом сопоставляются те части речи, которые и вне аналитических глаголов используются с глаголом в синтаксических структурах.



Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am
Տպաքանակը՝ 100

